ԷՋՄԻԱԾԻՆ



ԺԷ ՏԱՐԻ

Նոյեմբեր — Դեկտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԺԱ-ԺԲ

1960

28555

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Վերածնված Մայր Հայրենիքի փառապանծ տոնը . . 3

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ— Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյան 5

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Հայրապետի և պետական պաշտոնական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը . 7

Հայաստանում սովետական կարգերի հաստատման հարելյանի առթիվ Ամենայն Հայոց Հայրապետի և պետական պաշտոնական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը . . 9

Ամենայն Հայոց Հայրապետի ուղևորությունը Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ և վերադարձը Մայր Աթոռ 11

Պ. ՇԱՀԲԱԶՅԱՆ— Հայ ժողովրդի մշակութային և տնտեսական զարգացումը 40

Հայաստանը արտասահմանյան օտար և հայ հյուրերի աչքերով . . 49

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 55

Ընտրություն և գահակալություն Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե Եռրորդի սրբազան պատրիարքի 57

ԵԼԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ—Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին և Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Եփրեմ Բ-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում . . 61

Դիպլոմային աշխատանքների պաշտպանություն և վկայականների բաշխման հանդես Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում . . . 67

Ամենապատիվ Տ. Գարեգին պատրիարք Խաչատուրյանի ծննդյան ութսունամյակին նվիրված հանդիսություն Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում 73

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ— Ռումինահայ հայտնի նկարիչ Հրանտ Ավագյանը Մայր Աթոռում 74

Գեղաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Ագնավուրյան 77

Եվրոպայի Քրիստոնյա եկեղեցիների համագումարը 78

Հ. Ճ. ՍԻՄԻՍԻՆԻ— Գարեգին պատրիարք Խաչատուրյան 79

Հ. ԵԼԻԱԶԱՐՅԱՆ— Հաղբատի վանքը և նրա հետ կապված Հաղբատ գյուղի մյուս հուշարձանները 85

Յանկ «Էջմիածին» ամսագրում 1960 թվականի ընթացքում տպագրված նյութերի 90

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Redaction of the monthly review «Etchmiadzin», Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1960 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾՆՎԱԾ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՏՈՆԸ

Նոյեմբերի 29-ին լրացաւ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման տարասնամեակը: Հայ ժողովուրդը ամենուրեմ համազգային մեծ խանդավառությամբ, հանդիսավորությամբ և հոբանոր նվաճումներով է դիմավորում իր Հայրենիքի ազատության և անկախության փառապանծ տոնը, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման տարասնամեակը:

Վերածնված հայ ժողովուրդը, համազգային այս մեծ տոնին, ուրախ է և հպարտ երանությամբը այն ժողովրդի, որ երկար դարերի ստրկությունից հետո, համառ պայքարով և հերոսությամբ, նվաճել է իր ազատությունը և արդարորեն ուրախանում ու հպարտանում է իր Հայրենիքով, իր նվաճումներով և իր պայծառ ապագայով:

1920 թվականի Նոյեմբերի 29-ը հայ ժողովրդի պատմության մեջ և հայ կյանքում տեղի ունեցած նշանավոր պատմական իրադարձություն է, հայ ժողովրդի պատմության շրջադարձային հանգրվանը, երբ մահվան վիճի եզրին հասած, անօգնական ու ճյուծված, դարերով տրորված հայ ժողովուրդը, վիրավոր սրտով և արյունաքամ, բայց ապրելու և հաղթանակելու արի և հերոսական վճռականությամբ, ոտքի կանգնեց ռուս մեծ և ազնիվ ժողովրդի եղբայրական օգնությամբ, միանգամ ընդմիշտ թոթափելու դարերի ստրկության փոշին, փշրելու դարավոր ազատազրկության շղթան և արևի տակ իրեն համար նվաճելու ազատ ու խաղաղ ապրելու իրավունք:

Նոյեմբերի 29-ը հաղթանակի օր է հայ ժողովրդի համար, նրա մղած կյանքի ու մահվան մեծ պայքարում:

Նոյեմբերի 29-ը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փառավոր ու հերոսական մի էջ է, ոսկի տառերով գրված հայ ժողովրդի պատմության մեջ և հայ ժողովրդի սրտում:

Նոյեմբերի 29-ը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական մտքի հասունության, քաղաքական զգոնության ու հեռատեսության, ազգային ինքնագիտակցության մեծ զարթոնքի օրն է, երբ նա սկիզբ դրեց իր պատմության մեջ նմանը չտեսնված ազգային, պետական, տնտեսական և մշակութային մի փառավոր դարաշրջանի:

Հնչել էր հայ ժողովրդի ազատության ու փրկության ժամը: Նոյեմբերի 29-ը ոտքի կանգնեցրեց հայ ժողովրդին, օր ու արև, կյանք ու հանապարհ տվեց նրան, երգ ու երազ նրա հոգուն, նրա պատմության և կյանքի համար ստեղծված մռայլ ու ծանր օրերին: Մոխիրների ու ցավի տակից, հարյա՛վ ոգին հայ որբ ժողովրդի ու վերածնվեց: Արյունաքամ հայ հոգու և հայ հողի վրա ծագեց մի նոր, պայծառ առավոտ: Նոյեմբերի ազատարար շնչի տակ միայն հայ ժողովուրդը տեսավ իր դարավոր երազների, բաղձանքների իրականացումը, իր Հայրենիքի ազատությունն ու փրկությունը, որի համար հերոսական սերունդներ պայքարեցին ու մեռան անհավասար մարտերում, զեն ի ձեռին, Հայրենիքի սերն ու ազատության գաղափարը իրենց հոգում:

Նոյեմբերի 29-ը է՛լ ավելի համախմբեց հայ ժողովրդին իր Հայրենիքի և նրա ազատության գաղափարի շուրջը: Նա միաժամանակ կռեց ու կոփեց հայ ժողովրդի ազգային միասնությունը:

40 տարին պատմական մի մեծ ժամանակաշրջան չէ, բայց պատմական են մեր Հայրենիքի և մեր ժողովրդի նվաճումները:

Անցնող 40 տարիների ընթացքում բառացիորեն նրաշքի հավասար վիթխարի փոփո-

խություններ են կատարվել մեր մշակույթի, արվեստի, գիտության, գրականության, ժողովրդական կրթության և լուսավորության, առողջապահության, բնակարանային շինարարության, գյուղատնտեսության, արդյունաբերության և հայ ժողովրդի հոգևոր-բարոյական նոր կյանքի կերտման մեջ:

Այսօր Հայաստանը դարձել է հայ մշակույթի օջախ, ծածկվել է մշակութային հիմնարկների, ուսումնական, գիտահետազոտական հաստատությունների, լաբորատորիաների լայն ցանցով ու եղել համատարած գրագիտության, առաջավոր գիտության, գյուղատնտեսության և արդյունաբերության, արվեստի և գրականության բարգավաճ երկիր, լույսի՞ Հայրենիք, հույսի՞ Հայրենիք, նո՞ր ու հզո՞ր Հայաստան:

Այսօր Հայաստանում անցյալի ավերակների տեղ՝ բարձրանում են վարդագույն կառույցներ, լուսաշող քաղաքներ, շեն ու պայծառ ավաններ, նորաբաց լայն ու պայծառ պողոտաներ, որոնց մեջ ապրում և քայլում է ապագային վստահ աշխույժով հայող մի երջանիկ ու հավատավոր հայ նոր սերունդ: Եվ այս բոլորը՝ յուրաքանչյուր հայրենասեր հայ մարդու սիրտը լցնում է ազգային հպարտության ամենաքաղցր զգացմունքներով, որովհետև ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ է ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՐԱՎՈՐ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՆԵՐԻ, ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ, ՊԱՅԾԱՌ ՀՈՒՅՍԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՒ ՓՐԿԱՐԱՐ ՀԱՆԳԸՐՎԱՆԸ, ԽԱՂԱՂ ՈՒ ԱՊԱՀՈՎ ՄԻԱԿ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏԸ, ԴԱՐԵՐՈՎ ՄԵՐ ԵՐԱՋԱԾ, ՓՆՏՌԱԾ ԵՎ Ի ՎԵՐՋՈ ԳՏԱԾ ԱՎԵՏՅԱՑ ԵՐԿԻՐԸ:

Բյուր երազներ են ծաղկում այսօր վերածնված հայ ժողովրդի հոգում: Անցնող յուրաքանչյուր տարի երջանկության, բարգավաճման նոր գարունները է բերում մեր երկրին և մեր ժողովրդին:

Մայր երկրի հայությունը իր ազգային վերածնության, պետականության հիմքերն է ամրապնդում օրերի հետ ու շենացնում հայրենական տան սուրբ օջախը:

40 տարվա ընթացքում, ինչ ստեղծել է հայ ժողովուրդը, իրե՞ն է պատկանում:

Այսօր պայծառ է վերածնված հայ ժողովրդի հերկան, է՛լ ավելի հուսալից ու վրատաք՝ նրա ապագան:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետության գլխավորությամբ և հայ հավատացյալ ժողովուրդը երախտապարտ են Հայրենի կառավարության և սրտանոթոն աղոթում են համազգային այս մեծ տոնի առիթով՝ Հայրենիքի է՛լ ավելի բարգավաճման, մեր ժողովրդի բարեկեցության ու աշխարհի խաղաղության համար:

Թո՛ղ օրհնվի հավետ, պանվի ու պահպանվի նախախնամության Աչով և հայ ժողովրդի բազուկներով՝ «արևելեան կողմն աշխարհիս, Հայրապետուիւն և Հանրապետուիւն Հայոց»:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, այս 40 տարիների ընթացքում, իր հոգևոր և հայրենասիրական պարտքը կատարել է և կկատարի վերածնված հայ ժողովրդի նկատմամբ՝ մեծ սիրով և սրբությամբ: Մայր Աթոռը միշտ հայ ժողովրդի հետ է՝ հայրենաշեն ու ժողովրդանվեր աշխատանքում:

Այսօր հայ ժողովուրդը, իր Հայրենի հողի վրա, վառել է իր գոյության և հավերժության անշեջ խարույկը և վառ հավատով հայում է ավելի պայծառ գալիքին:

Փա՜ռք վերածնված հայ ժողովրդին, ողջո՜ւյն մեր պանծալի, հերոսական Մայր երկրի՝ Սովետական Հայաստանի քառասնամյակին:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Նոյեմբերի 18-ին լրացավ Կոստանդնուպոլսի պատրիարք ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի ծննդյան 80-ամյակը։

Այս բարեբաստիկ առիթով, Վեհափառ Հայրապետը, հայ հոգևորականության և հայ հավատացյալ ժողովրդին ուղղված հոկտեմբեր 6 թվակիր Իր սրբատառ կոնդակով, նշում էր արդարորեն, որ «Գարեգին սրբազան պատրիարքը իր բովանդակ կյանքով ու վաստակով ամուր կանգնած է մեր հայրապետական շարքին մեջ։ Անբասիր և բեղմնավոր եղած է անոր կյանքը»։

Ծերունազարդ պատրիարքի 80-ամյակի առթիվ, Հայ Եկեղեցին իր ժողովրդով մեծարանքի և երախտագիտության իր տուրքն է բերում նրան։ Գարեգին պատրիարքը եղել է միշտ թե՛ իր հոգևոր կոչման բարձրության վրա գտնվող եկեղեցական և թե՛ մտքի ու գրչի մարդ, որը կարողացավ լավագույնս ծառայել Հայ Եկեղեցուն, ժողովրդին և մեր դպրության։ Նրա կյանքը եղել է լեցուն, բեղմնավոր Եկեղեցու և ժողովրդի ծառայության ընդգավառում նա եղել է միշտ հավատավոր, նվիրման և ծառայության մարդը։

Սրտառուչ է, արդարև, նշել, որ Հոբելյարը, 80 տարիների բեռան տակ կքած, մասամբ խոնջ, բայց արի և մտքով ժիր ու պայծառ, քայլում է իր առաքելության ճանապարհի վրա։

Գարեգին պատրիարքը ավելի քան 60 տարիների ուսուցչական, հովվական, գրական գործունեության արդյունավետ բեռով է ներկայանում։

Վեհափառ Հայրապետը գեղեցիկ կերպով է բնութագրել իր կոնդակում նրա 60-ամյա ուսուցչական, հովվական, գրական-բանասիրական վաստակը. «Վաթսուն տարիներե ի վեր Նորին Ամենապատվությունը մեր Եկեղեցվո երկնակամարին վրա կփայլի իբրև ներշնչված ճոգի, իբրև բարոյական առաքինությունեներով զարդարված նկարագիր, իբրև ներճուն քարոզիչ և դաստիարակ, իբրև գրական անխոնջ մշակ»։

Արդարև, Գարեգին պատրիարքի կյանքը և գործունեությունը եղել են բեղմնավոր և լի սրտառանդն արդյունավորությամբ։ Նա սիրով և ամբողջությամբ տվեց Հայ Եկեղեցուն այն ամենը, ինչ Աստված տվել էր նրան։

Գարեգին պատրիարքը արդի հայ հոգևորականության պատկառելի դեմքերից մեկն է իր գործունեությամբ և վաստակով, որը մեր ազգային-եկեղեցական կյանքի վերջին 40-ամյակին ունեցավ իր ուրույն տեղը։ Ծանոթ է բոլորին Ամենայն Հայոց Հայրապետի կողքին, հանուն Հայ Եկեղեցու միասնականության, նրա ցուցաբերած նախանձախնդրությունը, կորովը և արի կեցվածքը, մանավանդ վերջին եկեղեցական իրադարձությունների մեջ։

Հաստատ արժանիքների տեր հոգևորական է նա, որ այսօր արժանավորապես բազմել է Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքական Աթոռի վրա և ձեռնհասորեն կատարում է իր լավագույնը, իր հնարավորությունների սահմանի մեջ, հոգուտ մեր Եկեղեցուն և ժողովրդին։

Գարեգին պատրիարքը իր հանրային գործունեությունը ուսուցչությամբ սկսեց Արմաշում, որտեղ և «ճաստունցավ որպես հոգևորական, ուսուցիչ և մատենագիր, երջանկաճիշատակ Եղիշե Դուրյան սրբազանի բարի ղունչին տակ»,— ինչպես գրել է Վեհափառ Հայրապետը, և ստացավ այն բնորոշ կնիքը, դրոշմը, որը նրանը եղավ ամբողջ կյանքում։ Գարեգին պատրիարքը ամեն տեղ իր հետ տարավ Դուրյանի ոգին, Արմաշի վանական մթնոլորտը, որպես ներշնչում, սրբազան պատգամ, Դուրյանին ապրեցնելով և ամբողջացնելով իր սրտում և իր գործում։

Գարեգին պատրիարքը մտքի և գրչի մարդ է հավասարապես։ Նա գրել է սկսել Արմաշից։ Նրա գրչին են պատկանում մի շարք եկեղեցական, պատմական, գրական, թարգ-

մանական արժեքավոր և մնայուն գործեր, որոնք միաժամանակ պայծառ վկայություններ են նրա իմացական ուժերի, նրա գրական հմտաշակի, նրա լայն աշխարհայացքի և հոգեկան ապրումների։ «Նոր գնահատանքով պետք է արձանագրենք,— հաստատում է Վեհափառ Հայրապետը իր սրբատառ կոնդակում,— նաև Գարեգին պատրիարքի պատմա-բանասիրական և մատենագրական աշխատությունները, որոնց մեջ կնառագայթեն իր պայծառ միտքը, իր նավատավոր հոգին, իր ճմտությունը և իր գրական հաշակը։ Երախտագիտությամբ պետք է հիշենք մանավանդ Նարեկի և Եզնիկի, ինչպես նաև Նոր Կտակարանի աշխարհաբար թարգմանությունները, որոնք անբառամ պսակը կնանդիսանան իր գրական վաստակին»։

Դժվար է խմբագրական այս սեղմ տողերի մեջ ներկայացնել Հոբելյարի անձը, դերը և տեղը, իր լայն գծերով և ամբողջականության մեջ։ Նա արդարև եղել է, ինչպես Վեհափառ Հայրապետն է նշում, «հավատի, մտքի և գրչի մարդ նավասարապես, իր կյանքը ամբողջ ընծայում մը եղավ, Սրմաջեն մինչև Ս. Լաչ դարեվանքը, ուր ան նորեն կուռուցանե և լույս կրաշխե»։

Ուսուցչական, հովվական, գրական ծառայությունների նվիրված նրա 60 բեղմնավոր տարիները արժանավոր պսակ են հյուսում նրա ալեհեր ճակատի շուրջ, հայ ժողովրդի երախտագետ զգացմունքներով զեղուն։

«Լեր նաստարիմ մինչև ի մահ և տաց քեզ զպսակն կենաց» *(Յայտնթ. Բ 10)։*

60 տքնաջան և արդյունաշատ տարիների այս ատոք գործունեության և վաստակի առաջ՝ «խաչատայր ալեօքն ծերունին», Հայ Եկեղեցու, հայ ժողովրդի և հայ դպրության հանդեպ իր սրբազան պարտքը կատարած, մտքի և գրչի աշխատավոր հայ հոգևորականի ուրախությամբ։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է հոբելյար Գարեգին պատրիարքի ծննդյան 80-ամյակը, սրբատագնս մաղթելով նորին Ամենապատվության խաղաղ ծերություն՝ երջանիկ և արևոտ օրերով։

Թո՛ղ անպակաս լինեն, Տիրոջ այգու ծառայության համար, այսպիսի իմաստուն, բարի և նվիրված ծերունազարդ հոգևորականներ, հորինակ մեր նոր հոգևորականության և ի մխիթարություն հավատացյալ հայ ժողովրդի և մեր եկեղեցու։

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՈՒՆԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ 43-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ողջունում ու շնորհավորում ենք Ձեզ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի երջանիկ առթիվ: Հայցում ենք Աստծուց խաղաղություն և ստեղծագործ աշխատանքի նոր թափ մեր մեծ ու ճոխ երկրին, այլև բարեբերություն և երջանիկ կյանք սովետական բազմազգ ժողովուրդներին:

Հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՔՈՋԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի երջանիկ առթիվ, ճանեցեք ընդունել Մեր ջերմ շնորհավորանքները ու սրտաբուխ մաղթանքները: Աղոթում ենք առ Աստված մեր ճոխ երկրի անշեղ վերելքի, սովետական եղբայրական ժողովուրդների բարեբերության համար՝ խաղաղության և ստեղծագործ աշխատանքի պայմաններում:

Սիրով և ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ Ա. ՊՈՒՋԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի առթիվ ճանեցեք, խնդրեմ, ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները Սովետական ճոխ Միության ճետագա ծաղկման, ինչպես և սովե-

տական ժողովրդի բարեկամության համար՝ ամբողջ աշխարհում կայուն խաղաղության պայմաններում:

Սիրով և ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սրտագին շնորհավորում ենք Ձեզ և պատվարժան խորհրդի բոլոր անդամներին՝ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի երջանիկ առթիվ: Աղոթում ենք ու մաղթում, որ Աստված հաստատ պահի Սովետական հզոր Միությունը և բարեկամություն ու երջանկություն պարգևի սովետական բազմազգ ժողովրդին: Խաղաղություն՝ ամենուրեք:

Սիրով և ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի առթիվ եղած Ձեր շնորհավորանքի և բարեմաղթության համար:

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Սովետական Հայաստանի կառավարության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Ձեր ողջույնների և ջերմ բարեմաղթությունների համար՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի առթիվ:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Հանձնեք ընդունել իմ և Հայ Եկեղեցու գործերի խորհրդի անդամների շնորհակալությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի առթիվ Ձեր եղած շնորհավորանքի համար:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՓԱՌԱՍՆԱՄՅԱԿ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՎ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Անհուն բերկրանքով ողջունում ենք մեր սիրելի Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի փառապանծ Տառասնամյակը:

Համայն հայ ժողովուրդն այսօր ցնծությամբ է նշում իր ազգային վերածնության մեծ տոնը, ընդմիշտ ազատագրված անցյալի դառն նակատագրի բոլոր փորձություններից: Հայ Եկեղեցին իր բոլոր սպասավորներով և հավատացյալ ժողովրդով, ամբողջ աշխարհում, աղոթում է առ Աստված՝ մեր Մայր Հայրենիքի խաղաղ ու երջանիկ կյանքի և բարգավաճման համար, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում:

Թող հաստատ մնա Սովետական մեծ Միության ժողովուրդների եղբայրությունն ու բարեկամությունը:

Թող ամենաճոր Արարիչը անհատնում եռանդ ու կարողություն պարգևի մեր ժողովրդին ու նրա ղեկավարներին, առավել շենացնելու մեր Մայր Հայրենիքը, նվաճելու նորանոր հաղթանակներ իր կյանքի բոլոր մարզերի մեջ:

Կեցցե՜ն հայ ժողովուրդը և մեր վերածնված Մայր Հայրենիքը:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29 նոյեմբերի 1960 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի փառապանծ Տառասնամյակի առթիվ հանեցեք ընդունել Մեր սրտագին շնորհավորանքները ու բարեմաղթությունները:

Աղոթում ենք առ Աստված վասն խաղաղության և բարգավաճման ազատագրված հայ ժողովրդի, Սովետական հզոր Միության ազգերի եղբայրական ընտանիքում:

Մաղթում ենք մեր տաղանդավոր ժողովրդին նոր հաջողություններ իր Մայր Հայրենիքի վերաշինության նվիրական գործում:

Այսօր Ս. Էջմիածնի Մայր Տաճարում գոհաբանական մաղթանք կատարվեց վասն անսասանության ու բարգավաճման Սովետական Հայաստանի:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29 նոյեմբերի 1960 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՉԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Հայաստանում սովետական կարգեր հաստատելու փառապանծ քառասնամյակի առթիվ հղած Ձեր ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

30 նոյեմբերի 1960 թ.
ԵՐԵՎԱՆ

Հանձնիս ընդունել Հայաստանի Կառավարության և իմ շնորհակալությունը Հայաստանում սովետական կարգեր հաստատելու փառապանծ քառասնամյակի առթիվ հղած Ձեր սրտագին շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

1 դեկտեմբերի 1960 թ.
ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի փառապանծ քառասնամյակի այս երջանիկ համազգային տոնի առթիվ հղած Ձեր շնորհավորանքների և բարեմաղթությունների համար հանձնիս ընդունել խորհրդի և իմ անունից սրտագին շնորհակալություններ:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՈՒՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

30 նոյեմբերի 1960 թ.
ԵՐԵՎԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՆԵՐ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ*

Հուլիսի 29-ին, ուրբաթ, ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով հասավ Արգենտինայի մայրաքաղաքը՝ Բուենոս-Այրես։

Օդանավակայանում հավաքված բազմահազար ժողովուրդը մեծ խանդավառությամբ և սրտագին ծափողջույններով է դիմավորում Վեհափառ Հայրապետին։

Օդանավակայանում են Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ և առաջնորդ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապատյանը, ազգային-եկեղեցական կազմակերպությունների, հայրենակցական միությունների, օտար և հայ մամուլի ներկայացուցիչները։

Օդանավակայանում Ամենայն Հայոց Հայրապետին շերմորեն դիմավորում են Բուենոս-Այրեսի քաղաքագլխի, ներքին գործոց մինիստրության ներկայացուցիչները, դավանությանց նախարարը և այլ պաշտոնական անձինք։

Դիմավորողների մեջ են նաև սովետական դեսպան Ավետիս Բաղալյանը և սովետական հյուպատոսը։

Վեհափառ Հայրապետը, ոստիկանական պատվո շոկատի ուղեկցությամբ՝ առաջնորդվում է հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ուր հավաքված խուռներամ բազմությունը խանդավառությամբ, ուրախության բացականչություններով դիմավորում է իր սիրելի Հայրապետին։

Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք է գործում եկեղեցի, և հայրապետական մաղթանքից հետո, ողջունելով թեմի ազգային-եկեղեցական մարմինների բոլոր ներկայացուցիչներին, բազմահազար ժողովրդին, շնորհակալություն է հայտնում սրտագին և արտակարգ հուզիչ դիմավորության համար, օրհնում բոլորին և տալիս հայրապետական Իր առաջին պատգամը։ Վերջում տեղի է ունենում աջահամբույր։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է մայրաքաղաքի լավագույն հյուրանոցներից մեկը՝ «Ալվեար պալաս» պանդոկը։

Երեկոյան, հյուրանոցում, Ազգային կենտրոնական վարչությունը և Վեհափառ Հայրապետի ընդունելության հանձնաժողովը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպում են ընդունելություն։

Առաջին այս ընդունելության վերջում, Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս ողջունում է բոլոր ներկաներին և օրհնում, տալով Իր պատգամը։

Հուլիսի 30-ին, շաբաթ, առավոտյան ժամը 10.30-ին, Իր շքախմբով և թեմի ազգային-եկեղեցական կազմակերպությունների ղեկավարների ուղեկցությամբ, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Բուենոս-Այրես քաղաքի Մայր Տաճարին, որտեղ թաղվել է Արգենտինայի ազգային ազատագրական պայքարի հերոս Սան Մարտինին։ Վեհափառ Հայրապետը Արգենտինայի ազգային հերոսի շիրմի վրա դնում է ծաղկեպսակ և «Հոգվոց» արտասանում։

Վեհափառ Հայրապետը հանդիսավոր կերպով առաջնորդվում է Մայր Տաճար, կաթոլիկ երկու եպիսկոպոսների կողմից։

---

* Շարունակվում է «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի № 8-ից։

Արարողության ներկա էին հավատացյալների մեծ բազմություն, ինչպես նաև հայ և օտար մամուլի և հեռուստատեսության ներկայացուցիչներ։

Ժամը 11·30-ին, հյուրանոցի իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը Արգենտինայի արտաքին գործերի մինիստրի տեղակալ պր. Սենտենոյի։

պոս Ապատյանը, կենտրոնական վարչության առենապետ և Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանակիր պր. Արմեն Բերկամալին, ընդունելության հանձնաժողովի անդամ պր. Լ. Տեր-Ավետիսյանը, պր. Հովհաննես Տեվեճյանը, Գորգորայի հայ գաղութի և մամուլի ներկայացուցիչներ։

Վերջում Վեհափառ Հայրապետը խոսք առնելով, տվեց իր պատգամը, գոհունակություն հայտնելով ջերմ ընդունելության և սրտագին հյուրասիրության համար և իր օրհնությունը տալով բոլորին։

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻ ՀԱՅՈՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Երեկոյան ժամը 9-ին, հյուրանոցի մեծ դահլիճում, տրվեց Թեմի ազգային-եկեղեցական մարմինների կողմից պաշտոնական մեծ ճաշկերույթ, ավելի քան 200 հոգու մասնակցությամբ։

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետին ողջունեցին Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Գալֆայանը, գերաշնորհ Տ. Հարություն վարդապետ

Թեմի առաջնորդարանի ներսում, Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգեն սրբազանին, հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ

Մուշյանին՝ վարդապետական ականակուռ լանջախաչով, իսկ արժանապատիվ քահանա հայրերին նվիրեց մասնատուփեր։

Հուլիսի 31-ին, կիրակի առավոտյան, մայրաքաղաքի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում եպիսկոպոսական պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը։ Բազմահազար ժողովուրդը լցրել էր Մայր Տաճարը, բակը, փողոցներն ու մայթերը։ Սուրբ պատարագի ընթացքում քարոզեց Վեհափառ Հայրապետը, ողջունելով մայրաքաղաքի ողջ հայությանը և տալով իր հայրապետական պատգամը։

Երեկոյան ժամը 6-ին, «Հայ կեդրոն»-ի մեծ սրահում, տեղի ունեցավ մայրաքաղաքի Արսլանյան վարժարանի աշակերտական հանդեսը՝ կազմակերպված Վեհափառ Հայրապետի բարձր պատվին։

Տեսուչ հոգեշնորհ Տ. Հարությունյան վարդապետ Մուշյանը ոչինչ չէր խնայել հանդեսը հետաքրքիր և բովանդակալից դարձնելու համար։ Աշակերտները երգեցին և արտասանեցին, մեծ գոհունակություն պատճառելով Վեհափառ Հայրապետին, որը վերջում հանդես եկավ աշակերտության և ծնողներին ուղղած սրտագին պատգամով և կոչով մայրենի լեզվի և հայ մշակույթի պահպանման համար։

Հանդեսի վերջավորության, աշակերտները աջահամբույրով Վեհափառ Հայրապետից ստացան Ս. Էջմիածնի խաչիկներ։

Ապա ավելի ուշ, առաջնորդարանում, կազմակերպվել էր արգենտինյան թերթերի պրես-կոնֆերանս։

Վեհափառ Հայրապետը պատասխանեց թղթակիցներին հետաքրքրող բոլոր հարցերին։

Օգոստոսի 1-ին, երկուշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է այցելությունը Արար Օրթոդոքս եկեղեցու պետի, ապա Չիլիի հայ գաղութի պատգամավորության։

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում նույնպես ընդունում է այցելությունները Հայ մշակութային միության, նախկին ռումինահայերի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության վարչության, Մխիթարյան վարժարանի վարչության, Հաճնո հայրենակցական միության և մամուլի ներկայացուցիչների, այդ թվում նաև «Սուրհանդակ» թերթի խմբագիր պր. Տաճատ Գնթունու։

Երեկոյան ժամը 7-ին, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը նախագահում է Ազգային կենտրոնական վարչության և հոգաբարձության միացյալ հանդիսավոր նիստին, որտեղ կենտրոնական վարչության ատենապետ պր. Արմեն Թերկամալին, հանուն ժողովականների, ջերմորեն ողջունում է Վեհափառ Հայրապետին և ներկայացնում հակիրճ զեկուցում արգենտինահայ ազգային-եկեղեցական կյանքի մասին։

Ապա խոսք առնելով, Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլոր ժողովականներին և ավելի ուշ իր շնորհաբեր ներկայությամբ պատվում է պր. Արմեն Թերկամալիի ընտանեկան հարկը, օրհնելով նրա սեղանի աղն ու հացը։

Օգոստոսի 2-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 11.30-ին, հյուրանոցում կազմակերպվում է մամուլի և հեռուստատեսության թղթակիցների պրես-կոնֆերանս։ Վեհափառ Հայրապետը պատասխանում է թղթակիցների բազմաթիվ հարցերին։ Ավելի ուշ, Տ. Բարգեն, Տ. Կոմիտաս սրբազաններից և Ազգային կենտրոնական վարչության ատենապետ պր. Ա. Թերկամալիից բաղկացած մի պատգամավորություն, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, պաշտոնական այցելություն է տալիս Բուենոս-Այրեսի քաղաքապետին։

Կեսօրին, Վեհափառ Հայրապետը, առաջնորդարանում, բարեհաճում է ընդունել Հայ մշակութային միության և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների և առանձին ազգայիններ այցելությունները։

Երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը, առաջնորդարանում, ընդունում է այցելությունը նեկեղեցասեր տիկնանց և երիտասարդաց կազմակերպությունների միացյալ ներկայացուցիչների, որոնք սրտառուչ ճառերով ողջունում են Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելությունը։ Վերջում խոսք առնելով, Վեհափառ Հայրապետը օրհնում է միությունների բոլոր անդամներին և տալով իր պատգամը, ցանկանում է հաջողություն նրանց ազգօգուտ և եկեղեցաշեն ձեռնարկներին։

Երեկոյան ժամը 9-ին, Հաճնո հայրենակցական միությունը, իր Տան մեջ, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, կազմակերպում է ընդունելություն։ որն անցնում է ջերմ, հայրենասիրական մթնոլորտում։ Գործադրության է դրվում գեղարվեստական բովանդակալից մի հայտագիր, բաղկացած երգերից, արտասանություններից և ուղերձներից։ Ընդունելությանն իր մասնակցությունն է բերում «Երևան» նվագախումբը։

Վերջում Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս բովանդակալից ելույթով և օրհնելով միության բոլոր անդամներին, տալիս է իր հայրապետական պատգամը։

Օգոստոսի 3-ին, չորեքշաբթի առավոտյան, հյուրանոցի իր հարկաբաժնում, Վեհա-

փառ Հայրապետը ընդունում է այցելությունը «Արմենիա» թերթի խմբագիր պր. Հովհաննես Տեվեճյանի և պր. Արամ Իսրայելյանի։

Կեսօրից հետո, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունում է «Շարժում» մշակութային միության, Հայ երաժշտության բարեկամների միության, Մամիկոնյան ազգային վարժարանի հոգաբարձության պատվիրակությունների, ինչպես նաև կենտրոնական վարչության անդամ պր. Վարդան Թարակչյանի այցելությունները։

Երեկոյան, եկեղեցասեր տիկնանց միությունը կազմակերպում է թեյասեղան ի պատիվ Վեհափառ Հայրապետի։ Ընդունելության ժամանակ Ս. Գեղարդի վանքի մասին խոսում է Վեհափառ Հայրապետի գավազանակիր հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։

Վերջում հանդես գալով, Վեհափառ Հայրապետը օրհնում է եկեղեցասեր տիկնանց



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՔԱՐՈԶՈՒՄ Է ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻ ՀԱՅՈՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Օգոստոսի 4-ին, նիեգշաբթի առավոտյան, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Բուենոս-Այրեսի սիրիական արաբական գաղութի ներկայացուցիչների, ապա վարագա Ս. Խաչ եկեղեցու հոգաբարձության անդամների, միության բոլոր անդամներին և տալիս իր պատգամը։

հայ կաթողիկե համայնքի նախագահ Հ. Ներսես վարդապետ Գարապաշյանի և համայնքի եկեղեցասիրաց եղբայրության, Գուլումճյան ազգային վարժարանի հոգաբարձության, Մարաշի, Այնթապի հայրենակցական միությունների, Կոմիտաս երգչախմբի վարչության ներկայացուցիչների։

Երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց այցելել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Տունը, որտեղ կազմակերպվել էր գրական-գեղարվեստական երեկույթ Իր պատվին։

Ընդունելության ընթացքում արտասանվեցին սրտագին ողջույնի խոսքեր։ Հատկապես տպավորիչ և բովանդակալից էր պր. Տեր-Ավետիսյանի ելույթը։

Վերջում հանդես գալով, Վեհափառ Հայրապետը օրհնեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ղեկավարներին և բոլոր անդամներին ու տվեց Իր սրտաշարժ պատգամը։

Օգոստոսի 5-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իր օրհնաբեր այցելությամբ պատվել պր. Բաֆֆի Իսրայելյանի օջախը, օրհնելով Իր պատվին կազմակերպված սեղանը։

Ընդունելության ներկա են լինում նաև բազմաթիվ նախկին ռումինահայեր։

Ժամը 4—7-ին, Վեհափառ Հայրապետը, առաջնորդարանում, ընդունում է բազմաթիվ այցելություններ։ Նորին Ս. Օծության այցելում են Ս. Մեսրոպ մատռան հոգաբարձության, Ապրիլյան հաստատության, Արգենտինահայ համայսարանականների միության անդամները։

Ավելի ուշ, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը պր. Ա. Թերկամայիի և նրա ընտանիքի անդամների, ինչպես նաև առանձին ազգայիններ։

Ժամը 8-ին, «Հայ կեդրոն»-ի սրահում, Ս. Լուսավորիչ եկեղեցու Կոմիտաս և Դստերք Վարդանանց երգչախմբերը կազմակերպում են հանդիպում-ընդունելություն Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, որին մասնակցում են ավելի քան 500 հրավիրյալներ։ Ստեղծված խանդավառ մթնոլորտում արտասանվում են ողջույնի և երախտագիտության սրտագին ուղերձներ։ Գործադրվում է գեղարվեստական ճոխ հայտագիր։

Վերջում հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը ընդհանրապես հայ երաժշտության և ի մասնավորի եկեղեցական երաժշտության մասին հոգեշունչ, բովանդակալից ճառով, ոգեկոչելով նաև հայ երգի արքա ողբացյալ Կոմիտաս վարդապետի անմահ հիշատակը։

Օգոստոսի 6-ին, շաբաթ, առավոտյան ժամը 10-ին, կատարվում է մայրաքաղաքի Վիժա Սոլդատի թաղամասում հայոց Ս. Շուշան մատռան նորակառույց սեղանի օծումը։ Արարողության նախագահում է Վեհափառ Հայրապետը, իսկ Ս. Սեղանի օծումը կատարում է գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը։ Նորօծ Ս. Սեղանը վերակոչվում է հանուն Ս. Հակոբի։

Օծման արարողությունից հետո պատարագում է հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը, քարոզում է Վեհափառ Հայրապետը, տալով Իր օրհնությունն ու պատգամը այդ ուրախ առիթով։

Երեկոյան ժամը 9-ին, «Հայ կեդրոն»-ի սրահում, կայանում է Հայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության հիմնադրման 7-րդ տարեդարձի հանդիսավոր տոնակատարությունը։ Նախագահում է Վեհափառ Հայրապետը։ Ներկա են լինում խուռներամ բազմություն, ազգային-եկեղեցական մարմինների, մամուլի ներկայացուցիչներ։ Գործադրության է դրվում գեղարվեստական հարուստ մի հայտագիր։

Ապա հանդես է գալիս այս առթիվ հրավիրված Արգենտինյան երգի և պարի շնորհալի անսամբլը։

Վերջում, Վեհափառ Հայրապետը խոսք առնելով, ընդարձակորեն զեկուցում է Հայաստանի եկեղեցիների, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Հոգևոր Ճեմարանի, տպարանի, ինչպես նաև պատմական տաճարների վերաշինության աշխատանքների մասին։

Օգոստոսի 7-ին, կիրակի առավոտյան, Վեհափառ Հայրապետը, գերաշնորհ Տ. Բարգեն սրբազանի և Իր շքախմբի ուղեկցությամբ, այցելում է հայ ավետարանական համայնքին, ուր ողջունվում և ընդունվում է ջերմությամբ։

Վերջում Վեհափառ Հայրապետը օրհնում է հայ ավետարանական համայնքի բոլոր անդամներին և հրաժեշտ է առնում լավագույն տպավորությամբ։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Ֆլորես թաղի Վարագա Ս. Խաչ եկեղեցին, ուր պատարագում էր գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը։

Սուրբ պատարագի ընթացքում քարոզում է Վեհափառ Հայրապետը և տալիս Իր օրհնությունն ու պատգամը։

Սուրբ պատարագից հետո, Վեհափառ Հայրապետը Իր օրհնաբեր այցելությամբ պատվում է Ս. Խաչ եկեղեցու խորհրդի ատենապետ պր. Մանվել Պարսամյանի տունը, օրհնելով նրա սեղանի աղն ու հացը։ Վեհափառ

Հայրապետի բարձր պատվին կազմակերպված ընտանեկան այս սեղանին մասնակցում են նաև այլ հրավիրյալներ։

Ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը ներկա է լինում «Հայ կեդրոն»-ի սրահում կազմակերպված Մխիթարյան հայրերի դպրոցի սկաուտական հանդեսին, ուր օրհնում է բոլորին և բաժանում Ս. Էջմիածնի խալիկներ։

Ներկայությունը, ընդհանուր խանդավառության մեջ, նրան պաշտոնապես հռչակեց պատվո հյուր, հանուն քաղաքապետության։

Ներկա էր նաև արգենտինյան մինիստր Խորխե Օգելլին, որը խոսք առնելով, սրտագին ողջունեց Վեհափառ Հայրապետին և գովքը հյուսեց հայ աշխատասեր ժողովրդի և նրա դարավոր մշակույթի։ Ապա ողջույնի

«ՀԱՇԱԿԵՑԷՔ ԻՐ ՏԵՍԷՔ ՔԱՂՑՐ Է ՑԷՐ...»

Ժամը 6.30-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է այցելել Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միության մարզադաշտը և ներկա լինել մարզահանդեսին, և ապա՝ իր պատվին կազմակերպված ընդունելության, որին մասնակցում են 200 այլ հրավիրյալներ։

Հյուրերի թվումն էր նաև քաղաքապետը, որը ողջունով Վեհափառ Հայրապետի խոսքերով հանդես եկան նաև Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միության ատենապետ պր. Կարո Թոփալյանը և ուրիշներ։

Գործադրության դրվեց նաև գեղարվեստական հարուստ մի հայտագիր։

Վերջում հանդես գալով, Վեհափառ Հայրապետը հայտնեց իր գոհունակությունը և օրհնելով Հայ Մարմնամարզական Ընդհա-

նուր Միության բոլոր անդամներին և ղեկավարներին, տվեց Իր պատգամը։

Օգոստոսի 8-ին, կիրակի կեսօրին, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց պատվել պր. Միհրան Մեսրոպյանի ընակարանը և օրհնել նրա սեղանի աղն ու հացը։

Ժամը 5-ին, Տ. Կոմիտաս եպիսկոպոսը և Տ. Եղիշե վարդապետը եղան Ֆլորես Քաղի հայոց ազգային վարժարանում և մասնակցեցին աշակերտական հանդեսին, և Վեհափառ Հայրապետի օրհնությունը բերելով, ողջունեցին դպրոցի աշակերտությանը, ուսուցչությանը և ծնողներին։

Ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը ներկա եղավ պր. Ա. Բերկամալիի հարկի տակ Իր բարձր պատվին կազմակերպված մեծարանքի ընդունելության, որին մասնակից էին նաև արտաքին գործերի և դավանությունների մինիստրները, քաղաքապետը և պաշտոնական այլ անձնավորություններ։

Երեկոյան ժամը 9.30-ին, Հայ երաժշտասերների միությունը, Վեհափառ Հայրապետի պատվին, կազմակերպել էր համերգ մայրաքաղաքի «Աստորիալ» մեծ թատրոնում, որտեղ հաշող երաժշտական համարներով հանդես եկան Բուենոս-Այրեսի հայ երգչախմբերը, նվագախմբերը և առանձին մենակատարներ։

Համերգի վերջում հանդես գալով, Վեհափառ Հայրապետը հայտնեց Իր հայրապետական գոհունակությունը, օրհնեց կազմակերպիչներին և համերգի մասնակիցներին։

Օգոստոսի 9-ին, երկուշաբթի առավոտյան, և՛ հյուրանոցի Իր հարկաբաժնում և՛ ապա առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել բազմաթիվ այցելուներ։

Ժամը 7-ին, Հայ Օգնության Միությունը, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, կազմակերպել էր թեյասեղան «Հայ կեդրոն»-ի սրահում, որին ներկա էր խուռներամ բազմություն։

Ընդունելության ժամանակ գեղեցիկ և սրտառուչ ուղերձով հանդես եկավ Հայ Օգնության Միության նախագահուհին։ Ապա տրվեց փայլուն համերգ և եղան այլ ուղերձներ։

Ներկաներին ողջունեց նաև Մայր Աթոռի դիվանապետ պր. Հայկ Առաքելյանը։

Ապա խոսք առավ Վեհափառ Հայրապետը և Իր գոհունակությունը հայտնելով տվեց Իր օրհնությունն ու պատգամը։

Օգոստոսի 10-ին, շաբաթ կեսօրին, Արսլանյան ազգային վարժարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Հարությունի վարդապետ Մուշյանը և հոգաբարձության ատենապետ պ. Գևորգ Սարաֆյանը, «Հայ կենդրոն»-ի սրահում, կազմակերպել էին հայրապետական մեծարանքի ընդունելություն։ Վեհափառ Հայրապետը դժբախտաբար չկարողացավ ներկա լինել Իր պատվին արված այս ճաշկերույթին, անհանգիստ լինելու պատճառով։ Հանուն Վեհափառ Հայրապետի ներկա լինելով, ողջույնի խոսք ասացին Տ. Կոմիտաս սրբազանը և պր. Հայկ Առաքելյանը։

Ժամը 7-ին, Հայ մշակույթի տանը կազմակերպվել էր մեծ ընդունելություն Վեհափառ Հայրապետի պատվին։ Սեղանների շուրջ ստեղծվել էր հայրենասիրական խանդավառ մթնոլորտ։ Արտասանվեցին ողջույնի սրտաշարժ խոսքեր, գործադրվեց գեղարվեստական ճոխ հայտագիր։

Խոսք առավ դիվանապետ պր. Հայկ Առաքելյանը և ողջունեց ներկաներին։

Վերջում հանդես եկավ Վեհափառ Հայրապետը և տվեց Իր օրհնությունն ու պատգամը ներկաներին։

Ժամը 10-ին, Հայ մշակութային միությունը, «Հայ կեդրոն»-ի սրահում, տվեց հանդեսերդ, որտեղ ողջույնի խոսքերով հանդես եկան Տ. Կոմիտաս եպիսկոպոսը և պր. Հայկ Առաքելյանը։

Օգոստոսի 11-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով պաշտոնական այցելություն տվեց Բուենոս-Այրեսի սովետական դեսպանատան, որտեղ ջերմորեն ընդունվեց դեսպան պր. Ավետիս Թադալյանի, հյուպատոսի, դեսպանատան այլ աշխատակիցների և դեսպանատան մշակութային ու առևտրական կցորդների կողմից։

Վեհափառ Հայրապետը, պատասխանելով պր. դեսպանի ողջույնի ջերմ խոսքերին, շնորհակալություն հայտնեց սիրալիր ընդունելության համար և հրաժեշտ առավ։

Ճաշից հետո, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել մի շարք այցելություններ, այդ թվում ազգային Ապրիլյան հաստատության և Հոգևոր քույրերի պատվիրակություններին։

Երեկոյան ժամը 6-ին, «Հայ կեդրոն»-ի սրահում, կազմակերպվել էր մայրաքաղաքի հայկական վեց ազգային դպրոցների ուսուցչության և աշակերտության կողմից մեծարանքի ընդունելություն Վեհափառ Հայրապետի պատվին։

Ընդունելության վերջում Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին և տվեց Իր հայրենաշունչ պատգամը։

Ավելի ուշ, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Իր շնորհաբեր ներկայությամբ պատվել պր. Ա. Իսրայելյանի ընտանեկան [illegible] Իր պատվին կազմակերպված սեղանը [illegible] մասնակցում էին նաև բազմաթիվ այլ [illegible]։

Օգոստոսի 12-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 11.30-ին, Հյուրանոցի իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը ընդունեց Բուենոս-Այրեսի Ասորի Եկեղեցու Ներկայացուցիչ Հ. Ֆիլիպ Հուշանի և Ասորի եկեղեցական վարչության այցելությունը։ Վեհափառ Հայրապետին այցելեց նաև մայրաքաղաքի Ռուս Պրավոսլավ Եկեղեցու պատվիրակությունը՝ Տ. Ֆիլիպ քահանայի գլխավորությամբ։

աշակերտությանը, տվեց հայրական իր օրհնությունը։

Երեկոյան ժամը 7-ին, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունեց արգենտինահայ համալսարանավարտ մտավորականների և արվեստագետների 60 հոգուց բաղկացած խմբին, հանրածանոթ արվեստագետ և մտավորական տիկին Էմե Ռամոս Մեխյայի գլխավորությամբ, որը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց խմբի մտավորականներին և արվեստագետներին։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՊՐ. ՖՐՈՆԴԻՍԻԻՆ ՆՎԻՐՈՒՄ Է ԱՐԵԱՔԱՅԻ ՊՓՍԻ, ՀԵՐՈՍ ՍԱՆ ՄԱՐՏԻՆԻ ՆԿԱՐՈՎ

Ժամը 4-ին, Իր շքախմբով, Վեհափառ Հայրապետը այցելեց Մխիթարյան հայրերի վարժարանը, արժանանալով սիրալիր և ջերմ ընդունելության։ Ողջույնի սրտագին խոսք ասացին վարժարանի տնօրեն վարդապետը և հոգաբարձության ատենապետ պր. Գոդանլյանը, պր. Վահե Պահատրյանը և ուրիշներ։

Վեհափառ Հայրապետը սիրով ներկա եղավ Իր պատվին կազմակերպված աշակերտական այս հաջող հանդեսին, և ապա, ողջունելով տեսչական-ուսուցչական կազմին և

Երեկում Իր գոհունակությունը հայտնելով այդ ջերմ այցելության համար, Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին, շեշտելով մտավորականի պատասխանատվությունն ու դերը հայ կյանքում, մանավանդ Սփյուռքի պայմաններում։

Ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպվել էր ընդունելություն, հոգաբարձության ատենապետի բնակարանում։ Ընդունելությունը անցավ ջերմ մթնոլորտում։ Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին։

Օգոստոսի 13-ին, շաբաթ, ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով ներկա եղավ Ջինոզյան ընտանիքի Իր պատվին կազմակերպած ընդունելության, որին հրավիրված էին նաև Սարգիս և Հովհաննես Տիարպեքիրլյան եղբայրները իրենց ընտանիքներով և այլ հրավիրյալներ։

Ժամը 5-ին, նույն բնակարանում, Տիարպեքիրլյան և Ջինոզյան ընտանիքները կազմակերպել էին հայրապետական մեծարանքի թեյասեղան, մասնակցությամբ բազմաթիվ հրավիրյալների։

Ընդունելության ժամանակ խոսք առավ Վեհափառ Հայրապետը և երկարորեն խոսեց Հայաստանի՝ եկեղեցիների, պատմական վանքերի և սրբավայրերի վերանորոգության մասին։

Վերջում Վեհափառ Հայրապետը օրհնեց կոչնական երկու ընտանիքների անդամներին և բոլոր ներկաներին։

Օգոստոսի 14-ին, կիրակի, «տոն Ս. Աստուածածնի Վերափոխման»։ Վեհափառ Հայրապետը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում և քարոզեց։

Հայրապետական սուրբ պատարագին և քարոզին ներկա էր խուռներամ բազմություն։ Բազմահազար ժողովուրդը լցրել էր եկեղեցու բակը, շրջակայքը և հարակից փողոցը։

Հայրապետական պատարագն ու քարոզը ձայնասփռվեցին։

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում էր Կոմիտաս երգչախումբը, հմուտ ղեկավարությամբ պր. Վարդապետյանի։

Սուրբ պատարագից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով ուղղվեց առաջնորդարան ցնծագին մթնոլորտում, ուր օրհնեց բոլորին։

Երեկոյան ժամը 6-ին, «Հայ կեդրոն»-ի սրահում։ Մայրերի օրվա առթիվ, կազմակերպվել էր հանդիսություն, քաղաքի Հայ տիկնանց միության կողմից։

Հանդիսության նախագահում էր Վեհափառ Հայրապետը։ Ներկա էր խուռներամ բազմություն։ Ստեղծվել էր խանդավառ, ջերմ մթնոլորտ, հայ առաքինի մայրերի պատվին։

Գործադրվեց գեղարվեստական բովանդակալից հայտագիր։ Եղան հայ մայրերի կոչման և դերին նվիրված իմաստալից ելույթներ։ 1960 տարվա տիպար հայ մայր հռչակվեց Տիրամայր Սիրանույշ Պալճյանը, որոտագին ծափերի տակ։

Հանդիսության վերջում խոսք առավ Վեհափառ Հայրապետը և սրտագին պատգամ ուղղեց հայ մայրերին՝ վառ և անարատ պահելու միշտ մեր ընտանեկան սրբություններն ու հայ օջախի ավանդական պատիվը։

Ժամը 9.30-ին, «Պալաս օթել»-ի շքեղ սրահում, Վեհափառ Հայրապետի ռումինահայ նախկին աշակերտները։ Նրա բարձր պատվին, կազմակերպել էին մեծարանքի երեկույթ, սեղանապետությամբ պր. Ավո Մեսրոպյանի։

Ընդունելության ժամանակ իրենց սիրելի Ուսուցչին ջերմորեն ողջունեցին ուսանողներից շատերը, երախտագիտությամբ և հարգանքով։

Վերջում ելույթ ունեցավ Վեհափառ Հայրապետը և տվեց հայրապետական Իր օրհնությունը երբեմնի Իր աշակերտներին։

Օգոստոսի 15-ին, երկուշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետը այցելեց քաղաքի հայոց Գուլումճյան ազգային վարժարանը և ներկա եղավ աշակերտական հանդեսին։ Նորին Ս. Օծությունը, օրհնելով դպրոցի ուսուցչական կազմին, ուսանողությանը և բարեբարներին, տվեց Իր պատգամը։

Ապա, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել այցելությունները Կեսարիայի, Հաճնի, Թոմարզայի և Ռոդոստոյի հայրենակցական միությունների և ապա միջհայրենակցական միության ներկայացուցիչների։

Այս առթիվ եղան ուղերձներ։ Վերջում Վեհափառ Հայրապետը օրհնեց հայրենակցական միությունների անդամներին և հաջողություն մաղթեց նրանց հայրենաշեն ձեռնարկներին։

Երեկոյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Իր օրհնաբեր ներկայությամբ պատվել Գևորգ և Պողոս Սարաֆյան եղբայրների ընտանեկան հարկը և օրհնել նրանց սեղանի աղն ու հացը։ շատ ջերմ, մտերիմ մթնոլորտում։

Օգոստոսի 16-ին, երեքշաբթի կեսօրին, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց օրհնել պր. Ահարոն Թբլբսրմյանի սեղանի աղն ու հացը, նրա ընտանեկան հարկի տակ։

Ապա, առաջնորդարանում, Նորին Ս. Օծությունը ընդունեց առանձին ազգայիններ այցելությունը, այդ թվում Հայ ավետարանական եղբայրակցության անդամներին, Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միության արիներին և արենուշներին, առաջնորդությամբ օրիորդ Մանուշ Մեսրոպյանի։

Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին, տալով Իր հայրենաբույր պատգամը։

Ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Վիժա Սոլդատի Թաղամասի Մեսրոպյան ազգային վարժարանը, ուր ներկա եղավ աշակերտական գեղեցիկ հանդեսին, և ողջունելով բոլոր ուսանողներին, աշակերտներին

և այս առթիվ հավաքված ծնողներին, տվեց իր հայրապետական պատգամը ջերմ, հայկական մթնոլորտում։

Գիշերվա ժամը 9-ին կազմակերպվել էր պաշտոնական ընդունելություն Մարաշի հայրենակցական միության Տանը, նույն միության կողմից։ Արտասանվեցին ողջույնի ջերմ խոսքեր։ Գեղարվեստական ճոխ հայտագրի գործադրումից հետո, խոսք առավ Վեհափառ Հայրապետը և տվեց իր օրհնությունն ու պատգամը։

Օգոստոսի 17-ին, շաբաթի, առավոտյան ժամը 10.30-ին. Վեհափառ Հայրապետը, մայրաքաղաքի պետական մեծ թատրոնի դահլիճում, դասախոսություն կարդաց «Մշակույթ և ազգություն» թեմայի շուրջ, որը լավեց հարաճուն հետաքրքրությամբ։ Դասախոսության ներկա էր ավելի քան 1500 հոգի։

Ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը իր շնորհաշաչ այցելությամբ պատվեց պր. Տիգրան Մյուրաքյանի բնակարանը և օրհնեց իր պատվին կազմակերպված ընտանեկան սեղանը, որին մասնակցում էին նաև այլ հրավիրյալներ։

Ժամը 5-ին, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունները Հայ եկեղեցասեր տիկնանց վարչության, Հայ երիտասարդաց կազմակերպության և Մշակութային միության ղեկավար կազմի։

Ժամը 9-ին, նորին Ս. Օծությունը բարեհաճեց օրհնել Վարդան և Զինա Բարակյանների իր պատվին կազմակերպած մեծարանքի սեղանը։

Օգոստոսի 18-ին, երեքշաբթի, առավոտյան ժամերին, հյուրանոցի իր հարկաբաժնում և ապա առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունեց մի շարք ազգայինների այցելությունները։

Երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով, այցելեց Արգենտինայի նախագահ նորին Գերազանցություն Արտուրո Ֆրոնդիսիին նախագահական պալատում։

Ջերմ մթնոլորտում Վեհափառ Հայրապետը և Հանրապետության Պր. Նախագահը ողջույնի ճառեր փոխանակեցին։

Վեհափառ Հայրապետը օրհնեց Արգենտինայի խաղաղասեր ժողովրդին և Հայրենիքին։

Այս այցելության որպես հիշատակ, Վեհափառ Հայրապետը Արգենտինյան Հանրապետության Պր. Նախագահին նվիրեց Ս. Էջմիածնում պատրաստված արծաթե մեծ ափսե, հայկական ոճով փորագրված, մեջտեղում արգենտինյան ազգային հերոս Սան

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍՈՒՄ, ՌՈՒՄԻՆԱՀԱՆ ԻՐ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

Մարտինի նկարով։ Ափսեի երկու եզրերին, արգենտիներեն, փորագրված էր. «Արգենտինայի մեծ ժողովրդին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ից, 1960 թ.»։

Հանրապետության նախագահին տրված պաշտոնական այս այցելության ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետին ուղեկցում էին՝ բացի նրա մշտական շքախմբից, նաև Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգեն սրբազանը, Ազգային կենտրոնական վարչության ատենապետ պր. Արմեն Բերկամային, փոխ ատենապետ պր. Գեորգ Սարաֆյանը, փաստաբաններ պր. Աչապահյանը և պր. Պայրամյանը։ Թարգմանի պաշտոնը կատարում էր փաստաբան պր. Աչապահյանը։

Երեկոյան ժամը 9.30-ին, «Ալվեարա» հյուրանոցի դահլիճում, հանուն Արգենտինայի հայոց թեմի, կազմակերպվել էր հրաժեշտի մեծ ճաշկերույթ, մասնակցությամբ 900 հոգու։

Պաշտոնական այս ընդունելության ներկա էին նաև պետական բարձրաստիճան անձնավորություններ, որոնց թվում նաև քաղաքապետը։ դավանանքների մինիստրը և ուրիշներ։

Ներկաներից և հյուրերից շատերը ողջունեցին Վեհափառ Հայրապետին ջերմ, հուզիչ ելույթներով։

Վերջում հանդես եկավ Վեհափառ Հայրապետը։ կրկին իր գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնեց սրտագին ընդունելության և հյուրասիրության համար և օրհնելով բոլոր ներկաներին, հրաժեշտ առավ։

ՍԱՆ-ՊԱՎԼՈՅՈՒՄ (ԲՐԱԶԻԼԻԱ)

Օգոստոսի 19-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 9.30-ին, Վեհափառ Հայրապետը, Տրանսկոնտինենտալ ընկերության ինքնաթիռով, մեկնում է Բրազիլիա, Սան-Պավլոյի հայ գաղութին հովվապետական այցելություն տալու համար։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր, բացի նրա մշտական շքախմբից, նաև Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոսը։

Ժամը 1-ին, ինքնաթիռով, Վեհափառ Հայրապետը վայրէջք է կատարում Սան-Պավլոյի օդանավակայանում, ուր հավաքված ավելի քան 3.000 հոգին, արտակարգ խանդավառությամբ, դիմավորում է Ամենայն Հայոց Հայրապետին։

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Սան-Պավլոյի հայոց Ազգային կենտրոնական վարչության ատենապետ պր. Անդրե Ճաֆերյանը, քահանայից դասը, ընդունելության հանձնաժողովի անդամները և մամուլի թղթակիցներ։

Սան-Պավլոյի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին պաշտոնապես ողջունեցին քաղաքի քաղաքապետի ներկայացուցիչը, ոստիկանապետը։ ինչպես նաև Բրազիլիայի բանակի երկու գեներալներ, որոնք բարի գալուստ մաղթեցին Ամենայն Հայոց Հայրապետին՝ կառավարության և բանակի անունից։

Վեհափառ Հայրապետը օդանավակայանում ընդունվում է զինվորական բացառիկ պատիվներով, նվագախմբով, և օրհնելով իր պատվին կանգնած պատվո պահակը, բարձրաստիճան զինվորականներին և սպաներին, ոստիկանական պատվո ջոկատով և ավտոմեքենաների շարասյունով առաջնորդվում է դեպի հայոց Ս. Գեորգ եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով։ Եկեղեցում։ բակում և մերձակա փողոցներում հավաքված բազմությունը ջերմորեն դիմավորում է Վեհափառ Հայրապետին։

Եկեղեցում կատարված Հայրապետական մաղթանքից հետո, Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլորին։ շնորհակալություն հայտնում ջերմ, սրտաբաց ընդունելության համար և տալիս հայրապետական իր առաջին պատգամը։ Վերջում ժողովուրդը մոտենում է Վեհափառ Հայրապետին՝ ի համբույր նրա Ս. Աջի։

Եկեղեցական արարողության ավարտին, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Կենտրոնական վարչության ատենապետ պր. Ա. Ճաֆերյանի բնակարանը, ուր նա բարեհաճում է մնալ Սան-Պավլո այցելության ամբողջ ժամանակամիջոցում։

Գիշերվա ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը, եկեղեցուն կից «Հայ կեդրոն»-ի ժողովասրահում, հանդիպում է ունենում Կենտրոնական վարչության, թեմական և երեսփոխական ժողովների անդամների հետ, և ողջունելով բոլորին։ օրհնում է նրանց։

Ապա մեծ դահլիճում տրվում է պաշտոնական ճաշկերույթ Կենտրոնական վարչության և ընդունելության հանձնաժողովի կողմից, մասնակցությամբ ավելի քան 100 հրավիրյալների։

Օգոստոսի 20-ին, շաբաթ առավոտյան, Վեհափառ Հայրապետը, շքախմբով և բազմանդամ պատվիրակությամբ, պաշտոնապես այցելում է Բրազիլիայի ազատագրման հիշատակին կանգնեցված հուշարձանին և ծաղկեպսակ դնում բրազիլիական հերոսների հուշարձանին։

Վեհափառ Հայրապետը ընդունվում է զինվորական պատիվներով և ժողովրդական խանդավառ ցույցերով։

Վեհափառ Հայրապետը այնուհետև այցելում է Սան-Պավլոյի հայ ավետարանական համայնքին, ուր երգչախումբը հոգևոր

ՍԱՆ-ՊԱՎԼՈՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Ապա Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով այցելում է քաղաքի Սանտ Աննա Թաղի հայոց դպրոցը և ներկա լինում աշակերտական հանդեսին։ ողջունում, օրհնում բոլորին և Ս. Էջմիածնի խալիկներ բաժանում աշակերտներին։

երգերով է դիմավորում Ամենայն Հայոց Հայրապետին։ Համայնքի հոգևոր հովիվները ջերմորեն են ողջունում Վեհափառ Հայրապետին։ Նորին Ս. Օծությունը, խորապես զգացված, օրհնում է բոլորին և հրաժեշտ առնում։

Վեհափառ Հայրապետը այնուհետև շարունակելով իր ուղևորությունը, այցելում է Պրեզիդենտ Ալտիեռ արվարձանի հայ համայնքին, ուր կա շուրջ 200 հայ ընտանիք։ Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով առաջնորդվում է հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, ուր ընդունվում է արտակարգ խանդավառությամբ։ Ծաղիկներով և հրացանաձգությամբ։ Եկեղեցում Վեհափառ Հայրապետը ողջունում է փոքրաթիվ հայ համայնքին, օրհնում բոլորին։ տալիս իր օրհնությունն ու պատգամը, ապա նախագահում դպրոցի սրահում իր պատվին կազմակերպված հանդեսին։ Համայնքի անունից Վեհափառ Հայրապետին շերմորեն ողջունում է փաստաբան պր. Հրանտ Սանասարը։ Հայ մանուկների ուրախ երգերն ու արտասանությունները խորապես հուզում են Վեհափառ Հայրապետին, որը օրհնում է բոլորին և բաժանում Ս. Էջմիածնի խալիկներ։

Գիշերը, հյուրընկալ տեր և տիկին Ճաֆերյանների հարկի տակ. կազմակերպվում է ընդունելություն Վեհափառ Հայրապետի պատվին։

Օգոստոսի 21-ին, կիրակի, առավոտյան ժամը 10.30-ին, Սան-Պավլոյի հայոց Ս. Գևորգ եկեղեցում։ Վեհափառ Հայրապետը մատուցում է հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզում։

Հայրապետական սուրբ պատարագին և քարոզին ներկա է լինում խուռներամ բազմություն։

Սուրբ պատարագից հետո, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է իր բարձր ներկայությամբ պատվել Սեմերճյան ընտանիքի օջախը և օրհնել նրանց սեղանը։

Երեկոյան, քաղաքի մեծ թատրոնում կազմակերպվում է մեծ հանդիսություն, զաղութի ազգային-եկեղեցական իշխանությանց կողմից։ Վեհափառ Հայրապետին ողջունում են Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգեն սրբազան, փաստաբան պր. Հրանտ Սանասարը, Տ. Աստվածատուր քահանան, հայ բողոքական և կաթողիկե համայնքների հոգևոր ներկայացուցիչները։ Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, հանգամանորեն խոսելով Մայր Աթոռի։ Հայաստանի եկեղեցական կյանքի և շինարարական աշխատանքների մասին։

Օգոստոսի 22-ին. երկուշաբթի կեսօրին, Վեհափառ Հայրապետը իր օրհնարեր այցելությամբ պատվեց Տիշլեքենյան եղբայրների ընտանեկան օջախը։

Երեկոյան, Սան-Պավլոյի Հայ մշակույթի միությունը, Վեհափառ Հայրապետի պատվին, կազմակերպում է հայրապետական մեծարանքի ընդունելություն. 400 հոգու մասնակցությամբ։ Վեհափառ Հայրապետին ողջունում են ներկաներից շատերը, այդ թվում երեսփոխան պր. Կարլոս Խոլաքյանը և պր. Թազվոր Կիրակոսյանը։

Ելույթ ունենալով, ներկաներին ողջունում է Մայր Աթոռի դիվանապետ պր. Հայկ Առաքելյանը։

Վերջում հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը, շեշտելով հայ մշակույթի արժեքն ու նշանակությունը և օրհնում մեր մշակույթի բոլոր վաստակավորներին։

ԲՐԱԶԻԼԻԱՅՈՒՄ

Օգոստոսի 23-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը, հատուկ բրազիլիական զինվորական ինքնաթիռով, մեկնում է Բրազիլիայի նոր մայրաքաղաքը՝ Բրազիլիա, այցելելու Հանրապետության Նախագահին։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում են, բացի մշտական շքախմբից։ Հայրապետական պատվիրակ սրբազանը։ Սան-Պավլոյի հայոց Ազգային կենտրոնական վարչության ատենապետ պր. Ա. Ճաֆերյանը, պետական երեսփոխան և փաստաբան պր. Կարլոս Խոլաքյանը։

Նոր մայրաքաղաքում Վեհափառ Հայրապետը Նախագահության պալատի առաջ ընդունվում է զինվորական պատիվներով, ապա առաջնորդվում է պալատ։ Հանրապետության Նախագահ դոկտ. Գուլարիեկը շերմորեն ողջունում է Ամենայն Հայոց Հայրապետին իր նորակառույց պալատում։ Նորին Ս. Օծությունը ողջունում է Պր. Նախագահին, օրհնում Բրազիլիան և նրա խաղաղասեր ժողովրդին, բանակին ու կառավարությանը, և որպես հուշանվեր այս այցելության, նվիրում արծաթե մի ափսե, փորագրված Ս. Էջմիածնի նկարով։

Պաշտոնական այս ընդունելության ժամանակ թարգմանի պաշտոնը կատարում էր պետական երեսփոխան և փաստաբան պր. Կարլոս Խոլաքյանը։

Վեհափառ Հայրապետը, նոր մայրաքաղաքի տեսարժան վայրերը դիտելուց հետո։ վերադարձավ Սան-Պավլո և երեկոյան իր շնորհաբեր այցելությամբ երջանկացրեց պր. Մարկոս Քյոթենեճյանի ընտանիքը։

Օգոստոսի 24-ին, չորեքշաբթի. առավոտյան ժամը 11-ին. «Հայ կեդրոն»-ի սրահում, կայացավ Դուրյան ազգային վարժարանի աշակերտական հանդեսը, հոծ բազմության ներկայության։ Վեհափառ Հայրապետը, ներկա լինելով հանդիսության, օրհնեց բոլորին և բաժանեց Ս. Էջմիածնի խալիկներ։

Ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը ուրախացրեց պր. Գառնիկ Պազարյանի ընտա-

նիքին, այցելելով և օրհնելով նրա սեղանի աղն ու հացը։

Ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը, մասնավոր հրավերով, Իր շքախմբով և փաստաբան պր. Կարլոս Խոլաքյանի առաջնորդությամբ, այցելեց Սան-Պավլոյի Նահանգային պառլամենտը։ Հանդիսավոր նիստից առաջ, Ամենայն Հայոց Հայրապետին ողջունեց պառլամենտի պր. նախագահը։

Պառլամենտի հանդիսավոր նիստը բացվեց Վեհափառ Հայրապետի աղոթքով։ Նորին Ս. Օծութիւնը ապա ողջունեց բոլոր դեպուտատներին և բարեմաղթություններ արեց պառլամենտի գործերի հաջողության համար, և Սան-Պավլոյի ու Բրազիլիայի բովանդակ ժողովրդին երջանկություն և խաղաղություն ցանկացավ։

Թարգմանի պաշտոնը կատարում էր կենտրոնական վարչության ատենապետ. պր. Անդրե Ճաֆերյանը։

Ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելեց Սան-Պավլոյի քաղաքապետին։



ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ Է ԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ժամը 7—9, ի պատիվ Վեհափառ Հայրապետին, պր. Նեջիբ Բրդզալլահի ընտանեկան հարկի տակ կազմակերպվել էր ընդունելություն, որին ներկա էին նաև օտար պետական անձնավորություններ, որոնք Թվում Եգիպտոսի և Լիբանանի հյուպատոսները։

Ընդունելության ժամանակ ողջույնի խոսքերով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը։

Ժամը 10-ին, Սան-Պավլոյի հայ գաղութը, Արարական ակումբի մեծ դահլիճում, Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպել էր հրաժեշտի մեծ ճաշկերույթ, որին մասնակցում էին ավելի քան 800 հոգի, այդ թվում ներքին գործերի մինիստրը, փոխնահանգապետը, հյուպատոսներ, քույր եկեղեցիների ներկայացուցիչներ և այլ հյուրեր։

Ներկաներից շատերը, ողջունելով Վեհափառ Հայրապետին, բարի ճանապարհ մաղթեցին։

Հանդես գալով ընդունելության վերջում, Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս Իր գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնեց սրտագին ընդունելության և հյուրասիրության համար, և օրհնելով բոլորին, տվեց Իր հայրապետական վերջին պատգամը։

Օգոստոսի 25-ին, հինգշաբթի, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը օրհնեց Մարաշի հայրենակցական միության Տան հիմնաքարը, հանդիսավոր իրադրության մեջ։ Ապա Նորին Ս. Օծությունը խոսեց հայրենակցական միությունների դերի և նշանակության մասին Սփյուռքի մեր պայմաններում և օրհնեց միության բոլոր անդամներին։

Ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց պատվել Իր օրհնաբեր ներկայությամբ Աբովյան ընտանիքի հարկը և օրհնել նրանց սեղանը։

Ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը ներկա եղավ Հայ կարմիր խաչի կանանց կազմակերպության հանդեսին և օրհնեց անդամներին։

Ժամը 7-ին, Նորին Ս. Օծությունը այցելեց Սան-Պավլոյի նահանգապետին։

Ժամը 8-ին, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը առանձին ազգայիններից։

Ժամը 10-ին, Նորին Ս. Օծությունը բարեհաճեց Իր ներկայությամբ ուրախացնել պր. Մարկոս Գասպարյանի ընտանիքին և օրհնել նրա սեղանը։

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍՈՒՄ

Օգոստոսի 26-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 9.30-ին, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առավ Սան-Պավլոյի հայ գաղութից։

Հուզիչ էր և պատմական՝ հրաժեշտի պահը։

Ինքնաթիռը, մեկ ու կես ժամ թռիչքից հետո, վայրէջք կատարեց Պորտ Ալեգրո քաղաքում, ուր մնաց 40 րոպե։

Տեղի փոքրաթիվ հայ գաղութը, բաղկացած շուրջ 150 հոգուց, օդանավակայանում բացառիկ ջերմ հանդիպում ունեցավ Վեհափառ Հայրապետի հետ։ Նորին Ս. Օծությունը «Հրաշափառ»-ով առաջնորդվեց սրահ, օրհնեց բոլորին և հետաքրքրվեց փոքրաթիվ հայ գաղութի ազգային-եկեղեցական կյանքով, ապա Ս. Էջմիածնի խաչիկներ բաժանեց բոլորին։

Փոքրաթիվ հայ գաղութը, արցունքը աչքերին, ճանապարհեց իր սիրելի Հայրապետին։

Ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը հասավ Բուենոս-Այրես։ Նորին Ս. Օծությանը դիմավորեցին Ազգային կենտրոնական վարչության անդամները և մամուլի ներկայացուցիչներ։

Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց նույն՝ «Ալվեարա» հյուրանոցի Իր հարկաբաժինը։

Երեկոյան, Նորին Ս. Օծությունը բարեհաճեց օրհնել պր. Մկրտիչ Ջրոբրկանյանի բնակարանը և սեղանը։

ՄՈՆՏԵՎԻԴԵՈՅՈՒՄ

Օգոստոսի 27-ին, շաբաթ, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը ինքնաթիռով մեկնեց Մոնտեվիդեո՝ հովվապետական այցելություն տալու տեղի հայ գաղութին, որը բաղկացած է մոտավորապես 12 000 հոգուց։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապատյանը, շքախմբի մնայուն անդամները և Հայրապետական պատվիրակի փոխանորդ հոգեշնորհ Տ. Հարությունն ծայրագույն վարդապետ Մուշյանը։

Մոնտեվիդեոյի օդանավակայանում Վեհափառ Հայրապետը ընդունվեց ջերմությամբ։ Օդանավակայանում հավաքված ավելի քան 3 000 ժողովուրդը ցնծագին ծափերով էր դիմավորում Վեհափառ Հայրապետին։ Ներկա են ազգային-եկեղեցական բոլոր մարմինները, գլխավորությամբ հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետի և Կենտրոնական վարչության ատենապետ պր. Թերզյանի։

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ջերմորեն դիմավորեցին նաև քաղաքագլխի, Հույն Օրթոդոքս Եկեղեցու և սովետական դեսպանատան ներկայացուցիչները։

Վեհափառ Հայրապետը ապա հանդիսավորությամբ առաջնորդվեց «Հայ կեդրոն»-ի սրահը, ողջունելով և օրհնելով հավաքված խուռներամ բազմությանը։ Հայրապետական մաղթանքից հետո, հավատացյալների

բազմությունը առահամբույրով իր հարգանքն ու ուրախությունը արտահայտեց Վեհափառ Հայրապետին՝ նրա օրհնաբեր այցելության առթիվ։

Երեկոյան, հյուրանոցում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Իրեն սեղանակից դարձնել կենտրոնական վարչության, ընդունելության հանձնաժողովի և ազգային-եկեղեցական մարմինների ղեկավարներին, որոնց մի անգամ ևս ողջունելով օրհնեց։

Օգոստոսի 28-ին, կիրակի առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց «Հայ կեդրոն»-ի սրահում, վեմքարի վրա հաստատված սեղանի վրա և քարոզեց։ Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը, խուսներում բազմության և ազգային-եկեղեցական մարմինների ներկայության, հանդիսավոր կերպով օրհնեց հողն ու հիմնաքարը Մոնտեվիդեոյի հայոց կառուցվելիք եկեղեցու, խանդավառ ու սրտառուչ իրադրության մեջ։

Եկեղեցու հիմնաքարի օրհնությունից հետո Վեհափառ Հայրապետը քարոզեց հայ ժողովրդին հատուկ եկեղեցաշինության սրբազան գործի մասին, օրհնեց եկեղեցու բարերարներին, ազգային-եկեղեցական մարմիններին և ժողովրդին։

Գիշերվա ժամը 9.30-ին, հյուրանոցի մեծ գահիճում, թեմի Վեհափառ Հայրապետի բարձր պատվին կազմակերպել էր պաշտոնական ընդունելություն, որին մասնակցում էր ավելի քան 600 հոգի։ Ընդունելության ներկա էին և Ամենայն Հայոց Հայրապետին ողջույնի շերմ խոսքեր ասացին Ուրուգվայի ներքին գործոց մինիստրը, Մոնտեվիդեոյի քաղաքագլուխը և այլ պաշտոնական անձինք։

Ընդունելության ժամանակ գործադրության դրվեց գեղարվեստական շատ հաջող մի ծրագիր։ Ներկաներից շատերը նույնպես սրտագին ելույթներով ողջունեցին Վեհափառ Հայրապետին։

Պաշտոնական ընդունելության վերջում խոսք առավ Վեհափառ Հայրապետը, նախ ողջունեց պետական ներկայացուցիչներին և ապա, օրհնելով գաղութի ներկա ընտրանին, տվեց Հայրապետական Իր օրհնությունն ու պատգամը։

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը վարդապետական լանջախաչով պարգևատրեց հոգևոր հովիվ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Տոլապճյանին։

Օգոստոսի 29-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11-ին, հյուրանոցում կազմակերպվել էր տեղական մամուլի և ռադիոյի թղթակիցների պրես-կոնֆերանս։

Վեհափառ Հայրապետը սիրով պատասխանեց թղթակիցներին հետաքրքրող բազմաթիվ հարցերին։

ՍԱՆ-ՊԱՎԼՈՅԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Պրես-կոնֆերանսին ներկա էր նաև ՏԱՍՍ-ի թղթակիցը։

Ապա Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել մի շարք ազգայինների այցելությունները։

Ժամը 3.30-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Ուրուգվայի հանրապետության Նախագահ Նորին Վսեմություն Պր. Նարդոնեին, որը ջերմորեն ընդունեց Վեհափառ Հայրապետին, իր պալատում։

Վեհափառ Հայրապետը ողջունեց Պր. Նախագահին, օրհնեց Ուրուգվայի հողն ու ժողովրդին և նվիրեց Ս. Էջմիածնի նկարով փորագրված արծաթե մի սիրուն ափսե։

Պաշտոնական այս այցելության ժամանակ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Հայրապետական պատվիրակ սրբազանը, Տ. Ներսես վարդապետը, Կենտրոնական վարչության ատենապետ պր. Թերզյանը, անդամներ պր. Սինանյանը և պր. Կեցոյանը։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը նույն շքախմբով այցելեց Մոնտեվիդեոյի ազատարար Արդեկասիի հուշարձանին և գրեց մեծ ծաղկեպսակ։

Երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Մոնտեվիդեոյի քաղաքագլխին։

Գիշերվա ժամը 9-30-ին, օպերային թատրոնում, Վեհափառ Հայրապետի պատվին տրվեց մեծ համերգ, թեմի տեղական ուժերով և մասնակցությամբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և Հայ երիտասարդաց կազմակերպության «Արմենիա» երգչախմբերի։

Համերգի վերջում օրհնության և գնահատության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը, ծանրանալով հայ երաժշտության արժեքի և Կոմիտաս վարդապետի երաժշտական մեծ ժառանգության վրա։ Վերջում Նորին Ս. Օծությունը օրհնեց բոլորին և տվեց իր պատգամը։

Օգոստոսի 30-ին, նրեֆշաբթի, առավոտյան ժամը 10—12-ին, հյուրանոցում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել այցելությունները մի շարք կազմակերպությունների, այդ թվում Մոնտեվիդեոյի Հայ եկեղեցասիր տիկնանց, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և հայրենակցական միությունների։

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով պաշտոնական այցելություն տվեց Մոնտեվիդեոյում սովետական դեսպան Միխայլովին, որը ջերմորեն ողջունեց Վեհափառ Հայրապետին։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Հայրապետական պատվիրակ սրբազանը, Տ. Ներսես վարդապետը, պր. Սինանյանը. պր. Կեցոյանը։

Ժամը 4-ին, «Հայ կեդրոն»-ի սրահում, Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Մոնտեվիդեոյի երեք հայկական դպրոցների, այդ թվում Հայոց ազգային վարժարանի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության վարժարանների և մանկապարտեզների և հայ ավետարանական համայնքի վարժարանի ուսանողության և ուսուցչական կազմի հետ։

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տեղի ունեցավ դպրոցական հաջող հանդես աշակերտական ուժերով։

Վերջում հանդես գալով, Վեհափառ Հայրապետը խոսեց հայ դպրոցի դերի մասին, մեր ազգային-եկեղեցական կյանքի շինության շուրջ, և իր գոհունակությունը հայտնեց կատարված աշխատանքների մասին։ Ապա օրհնելով աշակերտներին, Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածնի խաչիկներ բաժանեց բոլորին։

Ժամը 6-ին, նույն սրահում, Մոնտեվիդեոյի հայ կանանց չորս միությունները Վեհափառ Հայրապետի բարձր պատվին կազմակերպել էին մեծարանքի թեյասեղան, գեղարվեստական գեղեցիկ ծրագրով։ Ընդունելության ժամանակ խոսք առավ Վեհափառ Հայրապետը և հանգամանորեն խոսեց Հայաստանի եկեղեցական կյանքի, Ս. Էջմիածնի, Հոգևոր Ճեմարանի և Մայր Աթոռում կատարված ու կատարվելիք վանական վերանորոգչական լայն աշխատանքների մասին, բոլոր ներկաների մեջ ստեղծելով խորունկ հետաքրքրություն և խանդավառություն։

Օգոստոսի 31-ին, չարեթշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Մարաշի հայրենակցական միության Տունը և նախագահեց Իր պատվին կազմակերպված հանդեսին։ Նորին Ս. Օծությունը խոսք առնելով, Իր օրհնությունները տվեց միության ղեկավարներին և անդամներին։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության տեղական մասնաճյուղի ակումբը, ուր կազմակերպվել էր հանդես-հանդիպում անդամների հետ։ Ջերմ խոսքով հանդես եկավ միության ատենապետ պր. Բարիլուր Գազանճյանը։

Վերջում հանդես եկավ Վեհափառ Հայրապետը, խոսեց հայ կյանքում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կատարած ազգօգուտ և եկեղեցաշեն դերի մասին և օրհնեց բոլոր ներկաներին, միության անդամներին և բարերարներին։

Ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը վերադարձավ Բուենոս-Այրես։

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍՈՒՄ

Օգոստոսի 31-ին, շաբաթ երեկոյ, Վեհափառ Հայրապետը շերմորեն դիմավորվեց Բուենոս-Այրեսի օդանավակայանում Քեմի ազգային-եկեղեցական իշխանության ներկայացուցիչների, այդ թվում Ազգային կենտրոնական վարչության առաջնորդ պր. Ա. Բերկամալիի, պր. Պետրոս Սարաֆյանի, պր. Հարություն Գաղազյանի, դոկտ. Պայրամյանի, պր. Լեոն Տեր-Ալեքսիսյանի, հայրենակցական միության և խուռն բազմության կողմից։

Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց «Ալվեարա» հյուրանոցի նույն հարկաբաժինը, ուր ավելի ուշ բարեհաճեց ընդունել զանազան ազգայինների այցելությունները։

Սեպտեմբերի 1-ին, երեքշաբթի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը զբաղվեց նախապատրաստական աշխատանքներով, Մայր Աթոռ վերադարձի կապակցությամբ, և արեց զմայլելի կարգադրություններ։

Այդ հարցում իր գնահատելի ծառայությունը մատուցեց Եկեղեցասեր երիտասարդաց միության ղեկավարներից պր. Հովսեփ Յուսուֆյանը։

Ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը Իր շնորհաբեր այցելությամբ պատվեց տիկին Մարիանն Գուլումճյանի բնակարանը։

Ժամը 9-ին, Հովհաննես և Սարգիս Տիարպեքիրլյան եղբայրները, իրենց դղյակում, Վեհափառ Հայրապետին ողջունելու և հյուրասիրելու ուրախությունը ունեցան։

Ընդունելության ներկա էին նաև բազմաթիվ այլ հրավիրյալներ։

ԳՈՐԴՈԲԱՅՈՒՄ (ԱՐԳԵՆՏԻՆԱ)

Սեպտեմբերի 2-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը ինքնաթիռով մեկնեց Գորդոբա, տեղի հայ համայնքին հովվապետական այցելություն տալու և Իր օրհնությամբ մխիթարելու համար։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Հայրապետական պատվիրակ սրբազանը,

«ԲՈՑԼ ՏՈՒՔ ՄԱՆԿՏԻՈՑԴ ԳԱԼ ԱՌ ԻՍ»

Նրա մնայուն շքախմբի անդամները և հոգեշնորհ Տ. Հարություն ծայրագույն վարդապետ Մուշյանը։

Գորդոբա մեկնեց նաև Կոմիտաս երգչախումբը, ղեկավարությամբ խմբավար պր. Լ. Վարդապետյանի, կատարելու համար հայրապետական սուրբ պատարագի երգեցողությունը։

Ժամը 2.30-ին ինքնաթիռը վայրէջք կատարեց օդանավակայանում, ուր հավաքված ավելի քան 3 000 խուռներամ բազմություն, արտակարգ ջերմ խանդավառությամբ դիմավորեց Վեհափառ Հայրապետին։ Ներկա էին հոգևոր հովիվ Տ. Երվանդ ավագ քահանա Դարբինյան, եկեղեցու

կենտրոնական վարչությունը՝ գլխավորությամբ պր. Նաղարեթ Էվժանյանի, ընդունելության հանձնաժողովը՝ գլխավորությամբ պր. Աղասի Բարսեղյանի, ազգային-եկեղեցական իշխանությունների և հայրենակցական միությունների ու մամուլի ներկայացուցիչներ։

Օդանավակայանում Նորին Ս. Օծությանը ողջունեցին նաև քաղաքապետը, նահանգապետի և պետական այլ պաշտոնական անձանց ներկայացուցիչները սիրալիր ողջույնի խոսքերով։

Վեհափառ Հայրապետը հանդիսավոր շքերթով առաջնորդվեց հայոց Ս. Գեորգ եկեղեցին, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով և Հայրապետական մաղթանքի կատարումից հետո, օրհնելով խուռներամ բազմության, տվեց Իր հայրապետական օրհնությունն ու պատգամը։ Եկեղեցական արարողության ավարտին տեղի ունեցավ աջահամբույր։

Ապա եկեղեցուն կից սրահում տրվեց ճաշ Վեհափառ Հայրապետի պատվին։ Ընդունելության հանձնաժողովի նախագահ պր. Աղասի Բարսեղյանը, հանուն համայնքի, սրտագին խոսքերով ողջունեց Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելությունը։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով, հյուրընկալվեց Պաքըրճյան-Գուլումճյան ընտանիքի դղյակում։

Սեպտեմբերի 3-ին, շաբաթ, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, տեղի ունեցավ Ս. Գեորգ եկեղեցու նոր սեղանի օծումը, ձեռամբ գերաշնորհ Տ. Բարգեն և գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանների։

Նորօծ Ս. Սեղանի վրա առաջին անգամ հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս եպիսկոպոսը։

Ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Սան Մարտինի հուշարձանը և ծաղկեպսակ դրեց, խուռներամ բազմության ներկայությանը։

Սեպտեմբերի 4-ին, կիրակի, Ս. Գեորգ եկեղեցում, հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Վեհափառ Հայրապետը։

Հայրապետական սուրբ պատարագին ներկա էին պաշտոնական անձինք և քույր եկեղեցիների ներկայացուցիչներ։

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում էր Բուենոս-Այրեսի Կոմիտաս երգչախումբը։

Հավարտ սուրբ պատարագի, Պաքըրճյանների դղյակում կազմակերպվել էր հայրապետական մեծարանքի ընդունելություն, մասնակցությամբ քույր եկեղեցիների ներկայացուցիչների։

Ժամը 6-ին, «Հայ կեդրոնս»-ի սրահում, Մայրերի օրվա առթիվ տեղի ունեցավ հանդիսություն, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։ Գործադրվեց գեղարվեստական հաջող ծրագիր։ Հանդիսության ընթացքում, ընդհանուր խանդավառության և ծափերի մեջ, Տիրամայր Սիրանույշ Պալճյանը հրաշակվեց 1960 թվականի տիպար Հայ Մայրը Գորդոբայի հայության համար։

Վերջում հանդես եկավ Վեհափառ Հայրապետը՝ հայ մայրերի դերին նվիրված բովանդակալից ճառով։

Գիշերվա ժամը 10-ին, «Ջոքեյ դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, Գորդոբայի հայ համայնքը կազմակերպել էր հրաժեշտի ընդունելություն, ավելի քան 400 հոգու մասնակցությամբ։

Ընդունելության ընթացքում ներկաներից շատերը սրտագին խոսքերով ողջունեցին Վեհափառ Հայրապետին Նրա շնորհաբեր այցելության առթիվ և բարի ճանապարհ ու հաջողություն բարեմաղթեցին։

Վերջում հրաժեշտի սրտաբուխ խոսքերով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը, և օրհնելով բոլոր ներկաներին, տվեց Իր հայրապետական պատգամն ու օրհնությունը։

Սեպտեմբերի 5-ին, երկուշաբթի, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց տեղի հայոց վարժարանը և ներկա եղավ մանկապարտեզի և դպրոցի հանդեսին։ Աշակերտական հաջող ելույթներից հետո, Վեհափառ Հայրապետը խոսեց երեխաներին և օրհնեց բոլորին ու բաժանեց Ս. Էջմիածնի խաչիկներ։

Ապա Վեհափառ Հայրապետը նախագահեց դպրոցի սրահում համայնքի Կենտրոնական վարչության, ընդունելության հանձնաժողովի, հոգևորականության և ազգային եկեղեցական մարմինների ներկայացուցիչների համատեղ նիստին, և ողջունելով բոլոր ժողովականներին, օրհնեց բոլորին։ Ապա Վեհափառ Հայրապետը ճառով հանդես եկավ Ս. Էջմիածնի, ներքին թեմերի եկեղեցական կյանքի և Մայր Աթոռում կատարվող շինարարական աշխատանքների մասին։

Ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առավ և Իր շքախմբի հետ վերադարձավ մայրաքաղաք։

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍՈՒՄ

Սեպտեմբերի 5-ին, երկուշաբթի, ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետը ժամանեց Բուենոս-Այրես։

Վեհափառ Հայրապետին օդանավակայանում դիմավորեցին Կենտրոնական վարչության, ընդունելության հանձնաժողովի, ազգային-եկեղեցական մարմինների ներկայացուցիչները և ժողովրդի հոծ բազմություն։

Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց «Ալվեարա» հյուրանոցում Իրեն հատկացված նույն հարկաբաժինը։

Սեպտեմբերի 6-ին, երեքշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետը այցելեց մայրաքաղաքի Արսլանյան ազգային վարժարանը և նախագահելով Իր պատվին կազմակերպված հանդեսին, խոսք առնելով օրհնեց երեխաներին։

Ճաշից հետո, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել առանձին ազգայինների այցելությունները։

Սեպտեմբերի 7-ին, շաբաթշաբթի, առավոտյան ժամը 11-ին, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունեց նույնպես այցելությունը բազմաթիվ ազգայինների, ինչպես նաև Կոստանդնուպոլսի հայերի հայրենակցական միության ներկայացուցիչների։

Երեկոյան, «Ալվեարա» հյուրանոցի մեծ դահլիճում, թեմի ազգային-եկեղեցական իշխանությունների և առաջնորդարանի գլխավորությամբ, կազմակերպվել էր հրաժեշտի ճաշկերույթ, որին մասնակցում էին ավելի քան 250 հոգի։

Հրաժեշտի ընդունելությունը անցավ ջերմ և բացառիկ խանդավառ մթնոլորտում։ Կենտրոնական վարչության ատենապետ պր. Ա. Պերկամալին, հանուն Բուենոս-Այրեսի հայ եկեղեցու և ժողովրդի, Վեհափառ Հայրապետին նվիրեց հայրապետական գավազան՝ քանդակված ոսկյա գլխով։

Վերջում հանդես եկավ Վեհափառ Հայրապետը և խորապես հուզված Արգենտինայում Իրեն հանդեպ ցույց տրված որդիական արտակարգ սիրալիր հյուրասիրությունից, Իր հայրապետական գոհունակությունը և շնորհակալությունը հայտնելով, օրհնեց Հայրապետական պատվիրակ սրբազան հորը, հոգևորականությանը, ազգային-եկեղեցական բոլոր մարմիններին և հայրենասեր, եկեղեցասեր հոծ դանգվածներին, պանդուխտ հայության, և տվեց Իր վերջին հուզիչ պատգամը։

Ընդունելության ժամանակ, Վեհափառ Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշա-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍԱՆ-ՖԱՎԼՈՅՈՒՄ ՕՐՀՆՈՒՄ Է ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԾԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՔԱՐԸ

նով զարդարեց Կենտրոնական վարչության փոխ-ատենապետ պր. Գեորգ Սարաֆյանի կուրծքը։

Սեպտեմբերի 8-ին, հինգշաբթի, հետմիջօրեի ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով մեկնեց Եվրոպա, սկանդինավյան ընկերության SAS ինքնաթիռով։

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Հայրապետական պատվիրակ գեղաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապտյանը, ազգային-եկեղեցական իշխանությունների, Կենտրոնական վարչության, ընդունելության հանձնաժողովի անդամները և մամուլի ներկայացուցիչները։

Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին նաև Բուենոս-Այրեսի սովետական դեսպան Ավետիս Բագալյանը և քույր եկեղեցիների կրոնապետներ։

Մի ժամվա թռիչքից հետո ինքնաթիռը վայրէջք կատարեց Մոնտեվիդեոյում 40 րոպեով։

Վեհափառ Հայրապետին ջերմորեն դիմավորեցին և ապա ճանապարհեցին թեմի ազգային-եկեղեցական իշխանության ներկայացուցիչները և խուռներամ բազմություն, Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Տոլապճյանի և ատենապետ պր. Թերզյանի գլխավորությամբ։

Ապա ինքնաթիռը 50 րոպեով վայրէջք կատարեց Սան-Պավլոյում։

Վեհափառ Հայրապետը այստեղ ևս թեմի կողմից հանդիսավորապես դիմավորվեց և ապա բարի ճանապարհի յարեմադթություններով, հրաժեշտ առավ իր զավակներից և ամբողջ հոտից։

Այս առթիվ երիտասարդ ազգայիններ պր. Տեր-Հարությունյանը և պր. Բարսեղյանը Վեհափառ Հայրապետին հայտարարեցին իրենց ուխտը Մայր Աթոռին տրամադրելու համապատասխան գումար՝ վերականգնելու համար Հայաստանում պատմական մի տաճար։

Ապա ինքնաթիռը կանգ առավ Բրազիլիայի նախկին մայրաքաղաք Ռիո դե-Ժանեյրոյում մոտ մի ժամով։ 150 հոգուց բաղկացած փոքրաթիվ հայ գաղութը ծաղկեփնջերով, ծափերով և արտակարգ ոգևորությամբ ընդունեց իր Հայրապետին, հավաքված օդանավակայանի մի մասնավոր դահլիճում, ուր սրտագին խոսքերով շատերը ողջունեցին Վեհափառ Հայրապետին։

Նորին Ս. Օծություն, խորապես հուզված, արշնեց բոլորին, հետաքրքրվեց համայնքի ազգային-եկեղեցական կյանքով և հյուրասիրություններից հետո, խանդավառ և հուզիչ մթնոլորտում, հրաժեշտ առավ։

Ինքնաթիռը ապա ուղղություն վերցրեց դեպի արևելք և Ատլանտյանի վրայով 11 ժամվա անվայրէջք թռիչքից հետո, հաջորդ օրը,

Սեպտեմբերի 9-ին, ուրբաթ, հասավ ափրիկյան ափ, Մոնրովիա քաղաքը (Լիբերիա), ուր 40 րոպե մնալուց հետո, Սահարա անապատի վրայով, ուղիղ գծով, նույն օրը, երեկոյան ժամը 9-ին, հասավ Պորտուգալիայի մայրաքաղաքը՝ Լիսաբոն։

Բուենոս-Այրեսից Լիսաբոն թռիչքը տևեց մոտ 30 ժամ։

ԼԻՍԱԲՈՆՈՒՄ

Սեպտեմբերի 9-ին, ուրբաթ երեկոյան, տեղական ժամանակով ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը հասավ Լիսաբոն։

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին մինիստր Քառեիրու դե Գրեաբ՝ հանուն Պորտուգալիայի կառավարության, Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգաոն, Հիմնարկության կենտրոնական վարչության անդամներ պր. Գեորգ Եսայանը և Փալմիլայի դուքսը, Հիմնարկության Հայկական բաժնի տնօրեն պր. Ռոբերտ Կյուլպենկյանը, Միջին Արևելքի և Հայկական բաժնի պաշտոնեությունը և Լիսաբոնում բնակվող սակավաթիվ հայեր։

Երկուստեք փոխանակված ողջույնի և բարի գալստյան ջերմ խոսքերից հետո, Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց «Ավիշ» հյուրանոցի այն հարկաբաժինը, որտեղ իր կյանքի վերջին 13 տարիներն էր անցկացրել մեծանուն բարերար Գալուստ Կյուլպենկյանը։

Սեպտեմբերի 10-ին, շաբաթ առավոտյան, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով և Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգաոյի ուղեկցությամբ, այցելեց Պորտուգալիայի հանրապետության նախագահի պալատը, որտեղ ստորագրեց Հանրապետության նախագահ ծովակալ Ամերիկոս Թոմաշի ոսկեմատյանում։

Ապա Նորին Ս. Օծությունը այցելեց Լիսաբոնի պատմական հուշարձան Հերոնիմոս Մայր եկեղեցին, ուր թաղված են Վասգո դե Գաման և բանաստեղծ Գամեոնսը։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Պորտուգալիայի Կարդինալ Պատրիարք Նորին Վսեմություն Կոնգալվեշ Սերեժիրիայի հետ, որի ներկայացուցիչը նախապես բարի գալստյան այցելություն տվել էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, հանուն Կարդինալ Պատրիարքի։

Ավելի ուշ, Ամենայն Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Պորտուգալիայի վարչապետ Նորին Վսեմություն Անտոնիո Օլիվեյրա Սալազարին, որը սիրա-

լիր կերպով ողջունեց Վեհափառ Հայրապետին։

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը վարչապետին նվիրեց արծաթյա մի ափսե, հայ ոսկերիչների գործ, Հայաստանում պատրաստված, Էջմիածնի փորագրված նկարով զարդարուն։

Նույն օրը երեկոյան, Կյուլպենկյան հիմնարկությունը, Վեհափառ Հայրապետի բարձրը պատվին, կազմակերպել էր հայրապետական մեծարանքի պաշտոնական ընդունելություն, մայրաքաղաքի մոտ, Քելուշի պալատի ճաշասրահում, որտեղ ներկա էին



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼԻՍԱԲՈՆՈՒՄ, Ս. ՀԵՐՈՆԻՄՈՍԻ ՎԱՆՔՈՒՄ, ՎԱՍԿՈ ԴԵ ԿԱՄԱՅԻ ԴԵՐԵԳԱՄԱՆԻ ՄՈՏ. ԴՈԿՏ. ԺՈԶԵ ԴԵ ԱԶԵՐԵԴՈ ՊԵՐԴԻԳԱՈՅԻ, ՊՐ. Գ. ԵՍԱՅԱՆԻ ԵՎ ԻՐ ՇՔԱԼԻՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Պորտուգալիայի արտաքին գործերի մինիստր դոկտ. Մարսելլո Մաթիասը, Կարդինալ Պատրիարքի ներկայացուցիչ Կոռեա դե Սա եպիսկոպոսը, Հանրապետության Նախագահության ընդհանուր քարտուղար դոկտ. Լուիզ Փեռեիռա Քուրինեռն, արտաքին գործերի մինիստրի դիվանի պետ դոկտ. Հենրիխ Մարտինշը, Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգաոն, վարչության անդամներ պր. Գ. Եսայանը, Փալմիլայի դուքսը, պր. Ռոբերտ Կյուլպենկյանը, Հիմնարկության Միջին Արևելքի և Հայկական բաժնի պաշտոնուները։

Պր. Գևորգ Եսայանը հանդես եկավ ողջույնի շերմ խոսքով և Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական վարչության երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին, որը բարեհաճել էր ընդունել Իրեն ուղղված սրտագին հրավերը և ժամանել էր Լիսաբոն։ Պր. Եսայանը միաժամանակ խոսեց Ս. Էջմիածնի կատարած հոգևոր, մշակութային և ազգային շնորհակալ առաքելության մասին հայ կյանքում, ինչպես անցյալում, նաև այժմ, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրով։

Վեհափառ Հայրապետը, Իր պատասխան խոսքով, Ս. Էջմիածնի օրհնությունը և հայրապետական ողջույնը բերեց բոլոր ներկաներին, խոսեց Ս. Էջմիածնի՝ որպես քրիստոնեական հնագույն սրբավայրի, հայ ժողովրդի կյանքում կատարած նախախնամական դերի, ինչպես նաև հայ ժողովրդի պատմական առաքելության մասին Սփյուռքում։

Վեհափառ Հայրապետը վերջում Իր խոսքը ուղղելով Գալուստ Կյուլպենկյան հիմ-

նարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգաոյին, օրհնեց հաստատության բոլոր անդամներին և նրանց մաղթեց հաջողություն։

Սեպտեմբերի 11-ին, կիրակի, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելեց Լիսաբոնից 2 ժամ հեռու պատմական հուշարձան Սինդրա դղյակը։

Սեպտեմբերի 12-ին, երկուշաբթի առավոտյան, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Իր շքախմբով Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության և ջերմորեն ընդունվեց Հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգաոյի, պր. Գ. Եսայանի, Փալմիլայի դքսի և պր. Ռ. Կյուլպենկյանի կողմից։

Խորհրդի սրահում Վեհափառ Հայրապետին ներկայացան Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության տարբեր սպասարկության բաժինների ղեկավարները և Հայկական բաժնի գրասենյակի բոլոր պաշտոնյաները։

Ապա Վեհափառ Հայրապետը օրհնեց Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը, եկեղեցական հատուկ արարողությամբ։

Այնուհետև կատարվեց հոգեհանգստյան պաշտոն հանգուցյալ բարերար Գալուստ Կյուլպենկյանի հիշատակին և Վեհափառ Հայրապետը «Հոգուց» ասաց։

Արարողության վերջում, Վեհափառ Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակուռ ոսկյա շքանշանով զարդարեց Կենտրոնական վարչության անդամ Փալմիլայի դքսի կուրծքը, ի վարձատրություն նրա կատարած ծառայությունների հօգուտ հիմնարկության։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Կյուլպենկյան հիմնարկության տարբեր գրասենյակներ։ Վեհափառ Հայրապետը մասնավոր շրջապտույտ կատարեց նաև հիմնարկության գեղեցիկ այգում, ուր հետագայում կառուցվելու է հիմնարկության շենքը և բարերար Գալուստ Կյուլպենկյանի անվան թանգարանը, որոնց մակետները ցույց տրվեցին Նորին Ս. Օծությանը։

Կեսօրին, տեր և տիկին Ռոբերտ Կյուլպենկյանները, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, կազմակերպել էին մեծարանքի ընտանեկան ընդունելություն, իրենց բնակարանում։

Ընդունելության ներկա էին նաև պր. Գ. Եսայանը, օրիորդ Արաքսի Եսայանը, տիկին Լյուսի Քեշիշյանը, ինչպես նաև Կյուլպենկյան հիմնարկության հայ պաշտոնեությունը։

Կյուլպենկյանների ընտանեկան սեղանի աղն ու հացը օրհնելուց հետո, Վեհափառ Հայրապետը ողջունեց հյուրընկալներին, դրվատելով պր. Ռոբերտ Կյուլպենկյանի գործունեությունը Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության մեջ, բարեմաղթություններ կատարեց Կյուլպենկյան գերդաստանի բարօրության և ապագա հաջողությունների համար։

Ընդունելության ընթացքում, Վեհափառ Հայրապետը Իր հայրապետական բարձր գնահատանքը արտահայտեց պր. Ռոբերտ Կյուլպենկյանի նկատմամբ, նրա կուրծքը զարդարելով Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով, ընդհանուր խանդավառության և ծափերի մեջ։

Կեսօրից հետո, հյուրանոցի Իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը պր. Գ. Եսայանի, պր. Ռ. Կյուլպենկյանի և Կյուլպենկյան հիմնարկության հայ պաշտոնյաներ պր. Ֆանարճյանի, պր. Քեշիշյանի և պր. Թերզյանի։

Սեպտեմբերի 13-ին, երեքշաբթի, հետմիջօրեի ժամը 1.30-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով մեկնեց Փարիզ, ֆրանսիական «Կարավել» ինքնաթիռով։

Ամենայն Հայոց Հայրապետին ճանապարհեցին Պորտուգալիայի արտաքին գործերի մինիստրի դիվանի պետ դոկտ. Հենրիխ Մարտինշը, Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգաոն, պր. Գ. Եսայանը, Փալմիլայի դուքսը, պր. Ռոբերտ Կյուլպենկյանը, Հիմնարկության Միջին Արևելքի և Հայկական բաժնի պաշտոնեությունը, ինչպես նաև Լիսաբոնում բնակվող փոքրաթիվ հայերը։

Ամենայն Հայոց Հայրապետի Լիսաբոն ժամանման նախօրյակին և նրա մայրաքաղաքում բնակության ընթացքում, ինչպես նաև մեկնման առթիվ, Լիսաբոնի և գավառի մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը լայնորեն արձագանքում էին հոդվածներով, նկարներով Վեհափառ Հայրապետի այցելությունը, ընթերցողներին լայն տեղեկություններ տալով հայ ժողովրդի, Վեհափառ Հայրապետի և Ս. Էջմիածնի մասին։

ՓԱՐԻԶՈՒՄ

Սեպտեմբերի 13-ին, երեքշաբթի, ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը հասավ Փարիզ։

Օռլիի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը, ազգային-եկեղեցական մարմիններ և հոծ, խուռներամ բազմություն։ Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Փարիզի հայոց Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով և Հայրապետական

մաղթանքից հետո, ողջունելով Փարիզի հայությունը, տվեց իր օրհնությունն ու պատգամը։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց «ժորժ Ե» հյուրանոցը։

Սեպտեմբերի 14-ին, շաբաթի, ամբողջ օրը, Փարիզի հայոց առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունեց ազգայինների այցելությունները։

Սեպտեմբերի 15-ին, երեքշաբթի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը այցելեց Փարիզի պատմական եկեղեցիները և ապա Պանթեոնը։

Հետմիջօրեին, Ամենայն Հայոց Հայրապետին այցելեց արտաքին գործերի մինիստրության և կրոնական գործերի տեսուչը։

Երեկոյան, Վեհափառ Հայրապետին այցելեցին Լոնդոնից եկած տեր և տիկին Նուպար և Մերի Կյուլպենկյանները։

Ժամը 9-ին, Փարիզի հայոց առաջնորդարանի ազգային-եկեղեցական մարմինները և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Ֆրանսիայի Կենտրոնական վարչությունը, Վեհափառ Հայրապետի պատվին, կազմակերպել էին մեծարանքի ընդունելություն, ավելի քան 200 հոգու մասնակցությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ ՏԻՐԱՄԱՅՐԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հետմիջօրեին, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետին այցելեցին Լոնդոնից հատկապես ժամանած տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրքճյանները և Բելգրադից ժամանած պր. Ա. Սառուկյանը։

Սեպտեմբերի 16-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 10-ին, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունեց Փարիզի հայոց Մշակութային միության և ԺԱՖ-ի պատվիրակություններին։

Խանդավառ մթնոլորտում Վեհափառ Հայրապետի շնորհաբաշխ այցելությունը Փարիզ ողջունեցին Հ. Բ. Հ. Միության կենտրոնական վարչության նախագահ պր. Նուրհան Ֆրենկյանը, Մխիթարյան հայրերից Հ. Ամատունին և ուրիշներ։

Վերջում խոսք առավ Վեհափառ Հայրապետը և օրհնելով բոլորին, տվեց իր պատգամը։

Սեպտեմբերի 17-ին, շաբաթ, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը

պաշտոնական այցելություն տվեց Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր պր. Կլոդ դը Մուրվիլին, Քե Դորսեի պալատում։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոսը, կենտրոնական վարչության ատենապետ պր. Սեդրակ Քարյանը, պր. Վահե Ֆրենկյանը և պր. Նուրհան Ֆրենկյանը։

կիրճ ծրագիր, արտասանվեցին ողջույն խոսքեր։

Վերջում Վեհափառ Հայրապետը օրհնեց միության բոլոր անդամներին և տվեց Իր պատգամը։

Սեպտեմբերի 18-ին, կիրակի, առավոտյան ժամը 11-ին, Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում, Վեհափառ Հայ-



ԲԱՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ ԿԱՄԱՐԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Ապա առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել առանձին ազգայինների այցելություններ։

Ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետի պատվին, Փարիզահայ տիկնանց միությունը կազմակերպել էր ընդունելություն, որի ընթացքում գործադրվեց գեղարվեստական հա-

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց օրհնել Պետրոսյան ընտանիքի սեղանը, նախագահելով Իր պատվին կազմակերպված ընդունելության։

Սեպտեմբերի 19-ին, երկուշաբթի, առավոտյան ժամերին, առաջնորդարանում, Վե-

հափառ Հայրապետը ընդունեց գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի և ընդհանրական Քյուրքճյան ամուլների այցելությունը։

Ժամը 4.30-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Շավիլի հայոց նորակառույց եկեղեցին, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով, և օրհնելով ժողովրդին, տվեց Իր պատգամը։

Վերջում տեղի ունեցավ աջահամբույր։

Ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Ալֆորվիլի հայոց եկեղեցին և «Հրաշափառ»-ից հետո, օրհնելով խուռներամ բազմությանը, տվեց Իր պատգամը։

Ժամը 9-ին, Փարիզի առաջնորդարանի ազգային-եկեղեցական իշխանությանց կողմից կազմակերպվել էր հրաժեշտի պաշտոնական ընդունելություն, 600 հոգու մասնակցությամբ։

Ընդունելության ընթացքում ողջույնի խոսքերով հանդես եկան Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը, գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, պր. Սեդրակ Քարյանը, պր. Անդրանիկ Մառուկյանը, ճարտարապետ պր. Եդվարդ Ուլուճյանը և ուրիշներ։

Ընդունելության վերջում հանդես եկավ Վեհափառ Հայրապետը և Իր գոհունակությունն հայտնելով ջերմ ընդունելության և հյուրասիրության համար, օրհնեց բոլորին և տվեց Իր հայրապետական պատգամը ամբողջ Ֆրանսիայի հայության։

Սեպտեմբերի 20-ին, երեքշաբթի, առավոտյան ժամերին Վեհափառ Հայրապետը, առաջնորդարանում, ընդունեց բազմաթիվ այցելություններ։

Կեսօրին, Նորին Ս. Օծությունը բարեհաճեց Իր ներկայությամբ պատվել պր. Նուպար Ֆրենկյանի ընտանեկան օջախը և օրհնել նրա սեղանի աղն ու հացը։

Սեպտեմբերի 21-ին, չորեքշաբթի, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետը ընդունեց ազգային-եկեղեցական մարմիններին, հայրենակցական միություններին, Ֆրանսահայ գրողների միության, արվեստագետների ներկայացուցիչներին, այդ թվում Մարգարիտ Բարայանին, Ռաֆֆի Պետրոսյանին, նկարիչ Պետիկյանին և ուրիշների։ Վեհափառ Հայրապետը ընդունեց նաև Բեյրութի հայ վարժարանների տնօրենների և ուսուցիչների և ապա մանկապարտիզպանուհիների պատվիրակություններին։

Այս առթիվ, պր. Հայկ Աղաբեկյանը Վեհափառ Հայրապետին նվիրեց նկարիչ Եապանյանի նկարներից մի քանիսը։

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 22-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 9.30-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով մեկնեց Մոսկվա, սովետական ՏՈՒ—104 ինքնաթիռով։

Փարիզի Բուրժեի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Հայրապետական պատվիրակ և առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե սրբազանը, կենտրոնական վարչության անդամները, ազգային-եկեղեցական մարմինները, մամուլի ներկայացուցիչները և խուռներամ բազմություն։

Սովետական ՏՈՒ—104 ինքնաթիռը ժամը 3-30-ին անվայրէջք ժամանեց Մոսկվայի Շերեմետև օդանավակայանը։

Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Մոսկվայի հայոց եկեղեցու հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը, Տ. Խաչատուր ավագ քահանա Հարությունյանը, թեմական խորհրդի անդամները և Մոսկվայի հայության ներկայացուցիչները։

Վեհափառ Հայրապետին դիմավորելու եկել էին նաև ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ռյազանցովը և Խորհրդի աշխատակից Սոլովյովը։

Նորին Ս. Օծությանը դիմավորում էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը։

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է «Լենինգրադսկայա» հյուրանոցը, ուր մնում է մինչև հոկտեմբերի 3-ը։

Սեպտեմբերի 25-ին, կիրակի, Վեհափառ Հայրապետը այցելում է Մոսկվայի հայոց եկեղեցին և «Հրաշափառ»-ով մուտք է գործում այնտեղ, օրհնելով հավատացյալներին։

Գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում, իսկ Վեհափառ Հայրապետը քարոզում է նախ Սփյուռքի հայության եղբայրական ողջույնը հաղորդելով բոլոր ներկաներին, ապա խոսելով արտասահմանում կատարած Իր հովվապետական այցելության արդյունքների մասին։

Սեպտեմբերի 29-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 12-ին, ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ պր. Պուզինը ընդունելություն է կազմակերպում Վեհափառ Հայրապետի Մայր Աթոռ վերադարձի ճանապարհի վրա։

Ընդունելությանը, որն անցնում է ջերմ մթնոլորտում, ներկա է լինում Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը։

Հոկտեմբերի 1-ին, շաբաթ. Մոսկվայում, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահի առաջին տեղակալ պր. Ա. Ն. Կոսիգինը ընդունում է Ամենայն Հայոց Սայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ին։

Ընդունելությանը ներկա են լինում ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ պր. Ա. Պուգինը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Տ. Գասպարյանը և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահի արձանագրության բաժնի պետ պր. Ե. Ա. Տարաբրինը, ինչպես նաև Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամներ գերապատիվ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և գավազանակիր հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։

Հոկտեմբերի 2-ին, կիրակի, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, ռուսական Զագորսկի վանքում, այցելեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին։

Ջերմ մթնոլորտում, քույր Եկեղեցիների երկու Պետերի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց։

Հոկտեմբերի 3-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը, իր շորսամսյա ուղևորությունից հետո, իր շքախմբով ժամանեց Երևան։

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ջերմորեն և արտակարգ ոգևորությամբ դիմավորեցին Գերագույն Հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, վանքի պաշտոնեությունը, ներքին թեմերի թեմական խորհուրդների անդամները, Երևանի քահանայական դասը և հավատացյալների հոծ բազմություն։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԱՓՈՐՈՎ ԱՌԱՋՆՈՐԴՎՈՒՄ Է ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու

գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը, խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը և այլ պաշտոնական անձինք։

Օդանավակայանում էր նաև Տիրամայրը, որը մայրական կարոտով դիմավորեց իր որդուն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

առաջ, ուր կանգնեցվել էր գեղեցիկ ծաղկաշեն մի կամար, կանգ է առնում ինքնաշարժների շարասյունը և Վերհափառ Հայրապետը, ամպհովանու տակ, եկեղեցական թափորով, առաջնորդվում է Մայր Տաճար։

Վեհափառ Հայրապետին Մայր Տաճարում սրտագին բարի գալուստ է մաղթում լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արք-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ԻՋՄԱՆ Ս. ՍԵՂԱՆԻ ԱՌԻԱՋ, ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ Է ԱՍՈՒՄ

Ողջույնի սրտագին խոսքերից և աջահամբույրից հետո Վեհափառ Հայրապետը, օրհնելով բոլոր ներկաներին, նստեց ինքնաշարժ, ու պաշտոնական ավտոմեքենաների շքերթով առաջնորդվեց Մայր Աթոռ։

Տոնականորեն զարդարված էր Մայր Աթոռ։ Մայրավանքի արևելյան դարպասի

եպիսկոպոսը, հանուն միաբանության, Գերագույն Հոգևոր խորհրդի և բոլոր ներկաների։

Ապա Վեհափառ Հայրապետը, ողջունելով և օրհնելով բոլորին, կանգ է առնում չորս ամիս արտասահմանում կատարած Իր հայրապետական ուղևորության և առաքելու-

թյան հոգևոր, բարոյական և ազգային-հայրենասիրական մեծ նշանակության վրա։ բերելով նաև Սիսյուռքի հայության եղբայրական ողջույնը Մայր Հայրենիքի հայ ժողովրդին։

Եկեղեցական արարողության ավարտին, Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Ծաղկյա դահլիճ, որտեղ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Եղնիկ սրբազանը, հանուն միաբանության, բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին։

Վերջում, խոսք առնելով, Վեհափառ Հայրապետը իր գոհունակությունն ու շնորհակալությունն է հայտնում այս սրտագին, ջերմ ընդունելության համար և օրհնում Աղգն ու Եկեղեցին, ժողովուրդն ու Հայրենիքը, Մայր Աթոռն ու միաբանությունը։

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով վերջանում է հանդիսությունը։

Բարի գալո՜ւստ մեր սիրելի Վեհափառ Հայրապետին։

Պ. ՇԱՀԲԱԶՅԱՆ

(Հոգևոր ճեմարանի
հայոց լեզվի և գրականության
դասախոս)

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

(Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակի առթիվ)

Վեր թվագրության դեռևս Ե դարում հայ ժողովուրդը ստեղծել է գիր և գրականություն։ Հույն գրականության շատ դասական գործեր Ե—Զ դարերում թարգմանվել են հայերեն, և այսօր հունական գրականության մի շարք գոհարների բնագրերի կորսվելու հետևանքով մեզ հասած հայերեն թարգմանությունները մի մեծ ներդրում են համաշխարհային մշակույթի գանձարանում։

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է հարուստ գրականություն և մշակույթ։ Հայ հին պատմագիրներից հայտնի են աշխարհին Մովսես Խորենացու, Եղիշեի, Փավստոս Բյուզանդի, Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն»-ները, որոնք թարգմանվել են մի շարք եվրոպական լեզուներով։ Ամբողջ աշխարհին քաջ հայտնի է Ժ դարի միստիկ ամենամեծ կրոնական բանաստեղծը՝ Գրիգոր Նարեկացին։ Համաշխարհային գրականության պատմության մեջ պատվավոր տեղեր են գրավում հայ միջնադարյան տաղերգակներ Նահապետ Քուչակը, Սայաթ-Նովան և ուրիշներ։

Առավելապես նշանավոր է եղել հայկական ճարտարապետությունը, որն ուշադրությունն է գրավել բազմաթիվ եվրոպացի մասնագետներ։ Մեր միջնադարյան քաղաքներից նշանավոր է եղել միջազգային առևտրի խոշոր կենտրոն հանդիսացող Անին՝ իր ճարտարապետական հոյակապ կոթողներով։ Ժ—ԺԲ դարերում պատմական Հայաստանի կարևորագույն քաղաքներում կառուցվել են բազմաթիվ պալատներ, տաճարներ, իշխանատներ և կամուրջներ։ Հատկապես նշանավոր է եղել հայ եկեղեցական ճարտարապետությունը։ Այնպիսի շքեղ ճարտարապետական կառույցներ, ինչպիսիք են Ս. Հռիփսիմեն, Զվարթնոցը, Հաղբատն ու Սանահինը, հիացմունք են պատճառում հայ և օտար բազմաթիվ գիտնականների և արվեստագետների։

Հայաստանում 1920 թվականին հաստատվեցին սովետական կարգեր, և հայ ժողովուրդը, փրկվելով վերջնական կործանումից, վերսկսեց իր ազգային, մշակութային ու տնտեսական կյանքը։ Վերջին մոտ 40 տարիների ընթացքում, շնորհիվ վերահաստատված պետական կյանքի և հայ ժողովրդի աշխատասիրության, Հայաստանը վեր է ածվել մշակութային և նորագույն տեխնիկայով հագեցած ռեսպուբլիկայի, որտեղ հայ կյանքը զարգանում է համաչափ, բազմակողմանիորեն։

ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Այսօր Հայաստանում հայ ժողովրդի հնադարյան և բազմարժեք մշակույթի խոշորագույն օջախ է Երևանում 1958 թվականին կառուցված հայ ձեռագրերի նոր Մատենադարանը, որտեղ ամփոփված են շուրջ 10 000 ամբողջական ձեռագիր աշխատություններ, որոնցից 675-ը օտար լեզուներով։ Բացի ձեռագիր ամբողջական աշխատություններից, Մատենադարանում կան շուրջ 3 500 պատառիկներ և պահպանակներ, որոնք մեծ մասամբ ավելի վաղ շրջանում գոյություն ունեցած ամբողջական ձեռագիր աշխատությունների ներկայացուցիչներ են հանդիսանում։

Երևանի Մատենադարանը հարուստ է պատմագրական աշխատություններով։ Ձեռագիր աշխատություններում ամփոփված են հին և միջին դարերի ավելի քան 80 պատմիչների գործերը, որոնք իրենց բնույթով և արժեքով մեծ մասամբ չեն սահմանափակվում հայերի և Հայաստանի համար ունեցած նշանակությամբ։

Մատենադարանում կան 1950 ձեռագրեր, որոնց մեջ ամփոփված են փիլիսոփայական աշխատությունները անտիկ փիլիսոփայության կարկառուն ներկայացուցիչների՝ Պլատոնի, Արիստոտելի, Զենոն Իմաստասերի, Եզնիկի և Դավիթ Անհաղթի։

Մատենադարանում հսկայական գրականություն կա նաև բերականության և բառարանագիտության վերաբերյալ։ Շուրջ 400 ձեռագիր աշխատություններ կան, որոնցում ամփոփված են բերականական մեկնություններ, և ավելի քան 550 ձեռագիր աշխատություններ, որոնք բառարաններ են հանդիսանում։

Մատենադարանը հարուստ է նաև հայ միջնադարյան գրականության լավագույն նմուշներ պարունակող ձեռագիր աշխատություններով։



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԼԵՆԻՆԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Իրավագիտությունը կարևոր տեղ է գրավում Մատենադարանի ձեռագրերում։

Բժշկագիտական բովանդակություն ունեցող բազմաթիվ ձեռագրեր են մեզ հասել հին Հայաստանից։ Մասնագետների կողմից կատարված այդ բժշկարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե որքան բարձր մակարդակի վրա է կանգնած եղել հայ բժշկագիտությունը դեռևս միջին դարերում։

Մատենադարանը հարուստ է նաև մանրանկարչական, երաժշտական (խազագրական), դրական գիտությունների, մաթեմատիկայի, բիմիայի, տոմարագիտության, աստղաբաշ-

խությունն վերաբերյալ բազմաթիվ ձեռագիր աշխատություններով, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում մասնագետ գիտնականների համար։

Հայաստանը այսօր ծածկվել է մշակութային այլ հիմնարկների լայն ցանցով և դարձել է համատարած գրագիտության, առաջավոր գիտության, արվեստի և գրականության երկիր։ 1914 թվականին Հայաստանում կար ընդամենը 459 դպրոց, որոնցից 446-ը տարրական, 6-ը թերի միջնակարգ և միայն 7-ը միջնակարգ։ Այդ դպրոցներում սովորում էր 34 738 աշակերտ և աշխատում 1 146 ուսուցիչ։ Այժմ Սովետական Հայաստանում կան 1 383 դպրոցներ, որոնցում սովորում է 312 000 աշակերտ։ Դպրոցներում աշխատում են 20 000 ուսուցիչներ։ Ներկայումս գործող դպրոցների թիվը գերազանցում է 1914 թվականի բոլոր դպրոցներում աշխատող ուսուցիչների թվին։

Նախկինում Հայաստանում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն, ոչ մի գիտահետազոտական հիմնարկ։ 1921 թվականին բացվեց Երևանի Պետական համալսարանը և ապա պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, բժշկական, մանկավարժական, թատերական և այլ ինստիտուտներ, ինչպես նաև պետական երաժշտանոցը։ Այժմ Հայաստանի տասներկու բարձրագույն ուսումնական հաստատություններում և 37 տեխնիկումներում սովորում են 30 000-ից ավելի ուսանողներ։

Հայաստանում աննախընթաց վերելք է ապրում գիտական միտքը, որի կենտրոնն է հանդիսանում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, հիմնադրված 1943 թվականին։ Այնտեղ ներկայումս աշխատում են 36 ակադեմիայի իսկական անդամներ, 26 թղթակից-անդամներ, 67 դոկտոր-պրոֆեսոր գիտնականներ և գիտության թեկնածուներ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի շուրջ համախմբված գիտնականները զգալի հաջողություններ են հասել ժողովրդա-տնտեսական ու տնտեսական խոշոր նշանակություն ունեցող պրոբլեմների ուսումնասիրման ասպարեզում։ Այժմ ռեսպուբլիկայում կան 66 գիտահետազոտական հիմնարկություններ, որոնցում բեղմնավոր կերպով աշխատում են ավելի քան 3 000 գիտական աշխատողներ, այդ թվում գիտությունների 153 դոկտորներ և 1 350 թեկնածուներ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի բեղմնավոր աշխատանքում գիտական խոշոր ներդրում ունեն վաստակավոր գիտնականներ Մ. Արեղյանը, Հ. Մանանդյանը, Հ. Աճառյանը, Ս. Մալխասյանը, Գ. Ղափանցյանը։ Իրենց աշխատություններով մեծ հռչակ ու ժողովրդականություն են վայելում տաղանդավոր գիտնականներ Վ. Համբարձումյանը, Հ. Օրբելին, Ալիխանյան եղբայրները, Ա. Մնջոյանը, Ն. Խ. Հարությունյանը, Ա. Շահինյանը, Ս. Մերգելյանը, Ի. Մաղաքյանը, Ա. Հովհաննիսյանը և ուրիշներ։

Անցնող 40 տարիների ընթացքում աճեց և ուռճացավ նաև սովետահայ արվեստը իր բոլոր ճյուղերով։ Հիմնադրվեցին Պետական կոնսերվատորիան, Պետական ֆիլհարմոնիան և Ա. Սպենդիարյանի անունը կրող օպերայի և բալետի Պետական ակադեմիական թատրոնը։ Սովետահայ երաժշտական կուլտուրայի զարգացման ասպարեզում խոշոր ծառայություններ են մատուցել Ա. Խաչատրյանը, Հ. Ստեփանյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Ա. Սաֆյանը, Ս. Բարխուդարյանը, Ա. Այվազյանը, Ե. Սահակունին, Ա. Մանուկյանը, Վ. Տալյանը, Գ. Եղիազարյանը, Ա. Դոլուխանյանը և շատ ուրիշներ։ Հատկապես վերջին տասնամյակներում լայն ճանաչում գտան երիտասարդ կոմպոզիտորներ Ա. Բաբաջանյանը, Ա. Հարությունյանը, Է. Միրզոյանը և շատ ուրիշներ, որոնց ստեղծագործությունները հագեցված են ժողովրդայնությամբ և բարձր արվեստով։

Սովետահայ երաժշտությունն ունի իր ականավոր կոլեկտիվները և անհատ կատարողները. այդ շարքում ուրույն տեղ են գրավում Պետական օպերան, Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանակիր Հայկական ֆիլհարմոնիան, Կոմիտասի անվան կվարտետը, լայն ժողովրդայնություն վայելող Հայկական ՍՍՌ ժողովրդական երգի-պարի վաստակավոր անսամբլը, Ռադիոկոմիտեի ժողգործիքների անսամբլը, Հայկական պարի պետական անսամբլը, Պետական էստրադային նվագախումբը, Պետական երգչախումբը, Սայաթ-Նովայի անվան գուսանական անսամբլը, ժողգործիքների և երգի ու պարի անսամբլները։ Երաժշտական-կատարողական արվեստի բնագավառում մեծ ծառայություններ ունեն անվանի վարպետներ, ՍՍՌՄ ժողովրդական արտիստներ Պ. Լիսիցյանը, Տ. Սազանդարյանը, Գ. Գասպարյանը, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստներ Ն. Հովհաննիսյանը, Ա. Պետրոսյանը, Զ. Դոլուխանյանը և շատ ուրիշներ։

Վերջին տարիներին սովետահայ երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործություններից հատկապես աչքի են ընկնում Վ. Տիգրանյանի «Սոս և Վարդիթեր» և Ա. Բաբայանի «Արծվաբերդ» օպերաները, Է. Հովհաննիսյանի «Մարմարա» և Է. Արամյանի «Սոնատ» բալետները։ Երիտասարդ կոմպոզիտոր Գ.

Արմենյանի «Խաչատուր Աբովյան» օպերան արդեն բեմադրվում է 40-ամյա հոբելյանի առթիվ։ Ջութակի կոնցերտ է գրում կոմպոզիտոր Ղ. Սարյանը։ Մի նոր սիմֆոնիա է գրել Ջ. Տեր-Թադեոսյանը ըստ Մ. Շոլոխովի «Մարդու ճակատագիրը» պատմվածքի։ Շեքսպիրի, Շիլլերի, Գոլդոնիի, Գոգոլի, Օստրովսկու, Իբսենի, Գորկու, Սունդուկյանի, Պարոնյանի, Շիրվանզադեի և այլ դասական հեղինակների ստեղծագործությունների բեմադրությամբ, սերտորեն կապվեց ժողովրդի հետ, կանգնեց սոցիալիստական



ԵՐԵՎԱՆԻ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ (ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ)

Ստեղծագործական բուռն վերելքով է ապրում Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնը։ 40 տարվա կյանք ունեցող այդ թատրոնը իր խաղացանկը սկսելով ռեալիզմի ճանապարհի վրա և հասավ նպատակասլաց, ժամանակակից ստեղծագործությունների բեմադրման բարձր կարողությունների աստիճանին։ Այժմ Հայկական

Ռեսպուբլիկայում գործում են մի քանի պետական թատրոններ՝ Պատանի հանդիսատեսի թատրոնը, Պետական ռուսական թատրոնը, Լենինականի և Կիրովականի պետական թատրոնները, մի շարք միջշրջանային թատրոններ և այլն։ Հայ տաղանդավոր դերասաններ Պ. Ադամյանի, Միրանուշի, Ջմշկյան, Գ. Գաբրիելյանը, Մ. Կոստանյանը, Օ. Բունիաթյանը, Հ. Ավագյանը, Թ. Սարյանը, Գ. Խաժակյանը, Ա. Արազյանը, Մ. Պարոնիկյանը, Գ. Աշուղյանը, երիտասարդ դերասաններ Մ. Սիմոնյանը, Բ. Ներսիսյանը, Լ. Հովհաննիսյանը, Ա. Խոստիկյանը, Խ. Աբրահամյանը, Ֆ. Դովլաթյանը, Լենինականի թատրոնից



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

նի, Հ. Աբելյանի և ուրիշների արվեստի հոյակապ ավանդույթներով աճեցին և սովետահայ բեմական արվեստի բարձր նվաճումների հասան անվանի դերասաններ Հ. Ներսիսյանը, Վ. Վազարշյանը, Օ. Գուլազյանը, Ա. Ավետիսյանը, Ս. Գարագաշը, Գ. Ջանիբեկյանը, Դ. Մալյանը, Ռ. Վարդանյանը, Ց. Ամերիկյանը, Լ. Ջորաբյանը, Ա. Փաշայանը և ուրիշներ։

Օրավուր զարգանում է նաև սովետահայ գրականությունը։ Անցած 40 տարիների ընթացքում գրական ասպարեզ իջան և աճեցին բազմաթիվ սովետահայ վիպասաններ, դրամատուրգներ և բանաստեղծներ, որոնք

դրական ժառանգությամբ հարուստ մեր ժողովրդին պարգևեցին սովետահայ մարդկանց կյանքը ճշմարտացիորեն արտացոլող մեծ թվով արժեքավոր երկեր։

Ճանաչված ու սիրված արժեքներ են այսօր Ե. Չարենցը, Ն. Զարյանը, Գ. Սարյանը, Հ. Շիրազը, Ս. Կապուտիկյանը, արձակագիրներ Դ. Դեմիրճյանը, Ս. Զորյանը, Ա. Բակունցը, Վ. Անանյանը և շատ ու շատ ուրիշ գրողներ։ Ներկայումս Սովետական Հայաստանի Գրողների միության անդամակցում են ավելի քան 900 գրողներ ու թարգմանիչներ։

Սովետական իշխանության տարիներին ստեղծագործական խոշոր նվաճումներ ունեցավ նաև սովետահայ կերպարվեստը։ Սովետական կերպարվեստի ավագ գործիչներ Մ. Սարյանի, Փ. Թերլեմեզյանի, Հ. Կոջոյանի, Գ. Գյուրջյանի, Ա. Սարգսյանի և մյուսների հետ միասին նոր կյանք կառուցող սովետական մարդկանց հերոսական առօրյան և հայրենասիրությունը պատկերող արժեքավոր կտավներով ու քանդակներով հանդես են գալիս Հ. Զարդարյանը, Է. Իսարեկյանը, Բ. Քոլոզյանը, Մ. Արեղյանը, Ա. Բեքարյանը, Ն. Նիկողոսյանը, Հ. Կալենցը և շատ ուրիշներ։ Արվեստի մեծահարուստ գանձարան է Երևանի Պետական պատկերասրահը, ուր պահվում են շուրջ 10 000 գեղարվեստական բարձրարվեստ գործեր։

Աննախընթաց կերպով աճել է նաև սովետահայ մամուլը։ Ներկայումս Հայաստանում լույս են տեսնում ավելի քան 100 անուն ռեսպուբլիկական, քաղաքային, շրջանային բազմատիրաժ թերթեր, տեսական-քաղաքական, տնտեսագիտական, գրական-գեղարվեստական, կրոնական և այլ հանդեսներ ու պարբերականներ, որոնց միանվագ տպաքանակը հասնում է 365 000 օրինակի, 1913 թվականի 6 թերթի և 3 500 օրինակ տպաքանակի փոխարեն։ Սովետահայ ընթերցողը մայրենի լեզվով կարդում է ռուսական և համաշխարհային գրականության կոթողներ։

Սովետական իշխանության տարիներին ռեսպուբլիկան ծածկվեց ակումբների և գրադարանների ցանցով։ Վիթխարի վերելք ունեցավ գրատպության գործը։ Ռեսպուբլիկայում գործում են ավելի քան 2 800 գրադարան, 1913 թվականի 13 գրադարանների փոխարեն, ուր ամփոփված են 16 580 000 գրքեր 120 000-ի դիմաց։ Խոշոր գրադարաններից են Երևանի Ա. Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գրադարանը, Պետական համալսարանի գրադարանը, Պոլիտեխնիկական ինստիտուտի գրադարանը, Լենինականի քաղաքային գրադարանը և ուրիշներ։

Աննախընթաց տեմպերով զարգանում է հրատարակչական գործը։ 1920—1956 թվականներին հրատարակվել է 22 000 գիրք ու բրոշյուր 101 000 000 օրինակ ընդհանուր տիրաժով, չհաշված ամսագրերն ու թերթերը։ 1913 թվականին հրատարակված 55 գրքի դիմաց։ Ամսագրերի և ժողովածուների թիվը հասնում է 60-ի՝ տարեկան 1 227 000 ընդհանուր տիրաժով։ Ներկայումս Սովետական Հայաստանում հրատարակվում է ավելի քան 100 թերթ, որոնց տիրաժը հասնում է 365 000-ի, 1913 թվականի 6 թերթի և 3 500 օրինակ տիրաժի փոխարեն։ Հայերեն լեզվով թարգմանվել և հրատարակվել են եղբայրական ռեսպուբլիկաների ժողովուրդների և աշխարհի շատ ուրիշ ժողովուրդների խոշորագույն գրողների գործերը։ Ռեսպուբլիկայի աշխատավորությունը սիրով ընթերցում է Հոմերոսի, Վիրգիլիոսի, Խայամի, Շեքսպիրի, Մոլիերի, Գյոթեի, Պուշկինի, Տոլստոյի, Հյուգոյի, Գորկու, ինչպես նաև ժամանակակից սովետական ու արտասահմանյան առաջադեմ գրողների երկերը։

Ռեսպուբլիկան այժմ ունի 55 տպարան, նախասովետական 4—5 արհեստանոցների նմանվող տպարանների փոխարեն։ Ամեն տարի լույս է տեսնում 100 անուն դասագիրք։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքակիրթ աշխարհին հայտնի է, որ հայ ժողովուրդը ի բնե օժտված է հարստարապետական և կառուցողական մեծ ընդունակություններով։ Հայ ժողովուրդը շինարար է և աշխատասեր։ Շնորհիվ իր անսպառ աշխատասիրության, նա միշտ էլ փյունիկի նման հառնել է մոխիրներից և հաղթահարելով ճակատագրի հաջորդական հարվածները, վերակառուցել է իր տունը՝ ի հայտ բերելով գոյատևման իր անհաղթահարելի կամքը։ Հայ ժողովրդի շինարարական և կառուցողական տաղանդը ցայտուն կերպով դրսևորվեց հատկապես վերջին 40 տարիների ընթացքում, շնորհիվ Հայաստանում հաստատված սովետական կարգերի։ Հայ ժողովուրդը միշտ ծարավի է եղել խաղաղության։ Հայ ժողովուրդը, բուժելով իր վերքերը, ձեռնամուխ է եղել շինարարական մեծ աշխատանքի։ Այսօր Հայաստանի գլխավոր պողոտաները ու հրապարակները զարդարված են ճարտարապետական այնպիսի կոթողներով, որոնք իրենց ազգային երանգով և հարմարավետությամբ հիացմունք են պատճառում Հայաստան այցելող հյուրերին։

Շնորհիվ օրավուր աճող շինարարության լայն թափի ու ծավալի, Հայաստանում առաջացել ու զարգացել են մի շարք խոշոր արդյունաբերական գեղեցիկ և բարեկարգ քաղաքներ ու կենտրոններ, որոնք գլխավորում

է նոր Հայաստանի մայրաքաղաք Երևանը, իր ավելի քան կես միլիոն բնակչությամբ։ Այժմ Հայաստանն ունի 12 քաղաք, 23 քաղաքատիպ ավան։ Այսօր արդիական նոր քաղաքներ են նաև Լենինականը, Կիրովականը, Ալավերդին, Գորիսը, Ղափանը, Էջմիածինը, Հոկտեմբերյանը։ Գեղեցիկ են հայրենի նոր քաղաքները իրենց քարեղեն նոր կառույցներով, որոնք, Ա. Իսահակյանի պատկերավոր արտահայտությամբ, «կարծեք թե մեր լեռների ու ժայռերի իմաստալից շարունակությունը լինեն»։

Մեծ ծավալ է ստացել նաև բնակարանային շինարարությունը։ Անճանաչելիորեն փոխվել է քաղաքամայր Երևանը, որն առաջ նահանգային հետամնաց քաղաք էր 23 000 բնակչությամբ։ Այժմ Երևանը դարձել է Սովետական Միության առաջավոր ու գեղեցիկ քաղաքներից մեկը։ Սովետական Հայաստանի զարգացող արդյունաբերության, գիտության ու մշակույթի կենտրոնը։ Տարիների ընթացքում Հայաստանի բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր գեղեցկացել են հազարավոր արդիական բնակելի բազմահարկ շենքերով, հիվանդանոցներ, դպրոցներ, մանկապարտեզներ, մշակութային հաստատություններ, ինչպես նաև բնակարանային շինարարությունը։

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՐՁԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

դանոցներով, կուլտուրական հիմնարկներով, սանատորիաներով և հանգստյան տներով։

Միայն 1956—1957 թվականներին պետական հիմնարկների ու ձեռնարկությունների միջոցով կառուցվել ու շահագործման է հանձնվել 238 000 քառակուսի մետր բնակելի տարածություն։ Նույն ժամանակաշրջանում պետական վարկի օգնությամբ բանվորներն ու ծառայողները կառուցել են 250 000 քառակուսի մետր բնակելի տարածություն։ Գյուղական շրջաններում կոլտնտեսականները կառուցել են 17 100 բնակարան։ 1958 թվականին բնակարանային շինարարությանը հատկացվել է 163 000 000 ռուբլի։

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1913 թվականին Հայաստանում կար ընդամենը 6 հիվանդանոց՝ 213 մահճակալներով և 73 բժիշկներով։ Բնակչության մեկ շնչի հաշվով առողջապահության պետական ծախսերը կազմում էին 28 կոպեկ։ Սովետական իշխանության տարիներին առաջ մղվեց առողջապահության գործը, ապահովվեց բնակչության ձրի սպասարկումը։ Հիվանդանոցային մահճակալների թիվը ռեսպուբլիկայում

ՀՐԱԶԴԱՆԻ ՆՈՐ ԿԱՄՈՒՐՋԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

1959 թվականին 1913 թվականի համեմատությամբ, ավելացավ 56 անգամ, բժիշկներինը՝ 50 անգամ։ Ներկայումս ռեսպուբլիկայում գործում են 1 480 բուժհիմնարկներ, այդ թվում 268 հիվանդանոցներ՝ 11 200 մահճակալներով, որոնց սպասարկում են շուրջ 4 000 բժիշկներ և 10 000 բուժաշխատողներ։ Միայն՝ 1965 թվականին ռեսպուբլիկայի բնակչության առողջապահության գործին կտրամադրվի 284 000 000 ռուբլի, կսպասարկեն 5 500 բժիշկներ։

Հայաստանի գեղատեսիլ բնության բոլոր պարգևներն օգտագործվում են աշխատավորության բարեկեցիկ կյանքի, հանգստի և առողջապահության համար։ Թավ անտառներում, հանքային աղբյուրների մոտ բարձրանում են ռեսպուբլիկայի առողջարանները և հանգստյան տները, որոնց թիվը հասնում է 29-ի։ Հանրահանաչ են հատկապես Ջերմուկի, Արզնու, Դիլիջանի, Կիրովականի առողջարանները և Ծաղկաձորի ու Ախթալայի հանգստյան տները։

Օրավուր ավելանում է մանկամսուրների, մանկապարտեզների թիվը, ծավալվում են բժշկասանիտարական կանխարգելիչ միջոցառումները։ Վաղուց արդեն ռեսպուբլիկայում վերացված են մալարիան և վարակիչ մի շարք հիվանդություններ։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մեծ են Հայաստանի ձեռք բերած նվաճումները նաև գյուղատնտեսության մեջ։

Նախասովետական Հայաստանի գյուղը լի էր ողբերգական տեսարաններով։ Այնտեղ հաշվվում էր 99 887 արոր, 17 583 գութան, ըստ որում յուրաքանչյուր 13—15 տնտեսության ընկնում էր հազիվ 1 գութան։ Շատ ընտանիքներ զուրկ էին կենդանի քաշող ուժից։ Խիստ ցածր էր բերքատվությունը։

Գյուղատնտեսության այս ողբալի վիճակին վերջ դրեց սովետական կարգերի հաստատումը Հայաստանում։

Ներկայումս Հայաստանում կա 863 կոլտնտեսություն և 55 սովխոզ, 9 տեխնիկական վերանորոգման կայան և 29 մեքենատրակտորային կայան։ Գյուղատնտեսության մեջ լայնորեն կիրառվում են ժամանակակից տեխնիկան և գիտության նվաճումները։ Բարձրանում է տնտեսությունը պահելու կուլտուրան, ավելանում է գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։ Հայաստանի կոլտնտեսությունների և սովխոզների դաշտերում աշխատում են ավելի քան 5 000 տրակտոր, մեծ թվով կոմբայններ և ժամանակակից այլ մեքենաներ։ Կոլտնտեսությունների 83 տոկոսը էլեկտրիֆիկացված է։

Ոռոգման նոր սիստեմների կառուցման շնորհիվ, ոռոգելի տարածությունը հասել է 213 500 հեկտարի՝ 1913 թվականի 97 000 հեկտարի դիմաց։

Մեծ չափով ընդարձակվել է խաղողի և պտղատու այգիների տարածությունը։ 1958 թվականին խաղողի այգիների տարածությունը կազմում էր 21123 հեկտար, իսկ պտղատու այգիներինը՝ 18 728 հեկտար։

Մեծապես համբավված են Հայաստանի մրգերի տեսակները։ Հատկապես նշանավոր են Հայաստանի խաղողը իր ավելի քան 60 տեսակներով, հյութալի դեղձը, ծիրանը, քաղցրահամ տանձը։

Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության աշխատողները վերջին տարիների ընթացքում ավելացրել են բամբակի, շաքարի ճակնդեղի, ծխախոտի, բանջարեղենի, խաղողի և գյուղատնտեսական այլ մթերքների արտադրությունը։ Զգալիորեն ավելացել է նաև անասունների գլխաքանակը, ինչպես նաև անասնաբուծական մթերքների արտադրությունը։

***

Սովետական իշխանության հաստատման ժամանակ, Հայաստանի բնակչությունը կազմում էր մոտավորապես 780 000 մարդ։

1959 թվականի համամիութենական մարդահամարի տվյալներով, Հայկական ՍՍՌ-ի բնակչությունը կազմում է 1 763 000 մարդ։ Սովետական իշխանության տարիներին բնակչությունը աճեց ավելի քան երկու անգամ։

Վերև բերված այս բոլոր փաստերն ու թվերը վկայում են այն հսկայական նշանակության մասին, որ ունեցավ սովետական կարգերի հաստատումը Հայաստանում հայ ժողովրդի համար։ Իրականությունը կարծես գերազանցում է երազին, եթե մի պահ ներկա Սովետական Հայաստանը համեմատենք նախասովետական հետամնաց, ագրարային, ֆիզիկապես ու տնտեսապես հյուծված Հայաստանի հետ։ Ավերակների տեղ այսօր մեր Հայրենիքը զարդարում են լուսաշող պողոտաներ, որոնց մեջ ապրում է ապագային վստահ աչքերով նայող մի երջանիկ և հավատավոր սերունդ։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՕՏԱՐ ԵՎ ՀԱՅ ՀՅՈՒՐԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Դեռ վաղ հասակից, երբ կարդացած գրքերի ազդեցության տակ Հայաստանը պատկերացնում էի որպես մի հեռավոր հեքիաթային երկիր, ես երազում էի այցելել Հայաստան։

Այսօրվա հայ իրականությունը, ինչպես մենք համոզվեցինք, հեքիաթից այնքան էլ հեռու չէ։ Արդյոք հեքիաթային չէ՞ այն, որ Հայաստանը կարճ ժամանակում դարձել է մի ծաղկուն պարտեզ՝ իր բերքառատ խաղողի այգիներով, զարձել է զարգացած ինդուստրիայի և կուլտուրայի երկիր։ Այդ մասին համոզիչ կերպով պատմում է ձեր ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի նվաճումների ցուցահանդեսը, որտեղ մյուս հետաքրքիր էքսպոնատների թվում մենք տեսանք նաև էլեկտրական մեքենաներ, որ Հայաստանը ուղարկում է Վիետնամ։

ՆԳՈՒԻԵՆ ՔԱՆ ԹՌԱՆ
Վիետնամի կուլտուրայի գործիչների պատվիրակության ղեկավար, ՎԴՊ-ի յուսավորության մինիստրի տեղակալ

Սովետական Միություն վեց տարի առաջ իմ գալու օրվանից ի վեր ես ցանկանում էի այցելել Հայաստան։ Եվ, վերջապես, դա տեղի ունեցավ։ Ես շատ ուրախ եմ, որ հնարավորություն ունեցա գալու Հայաստան։ Ինձ հիացրեց ու զարմանք պատճառեց արդյունաբերության ու գյուղատնտեսության բնագավառում ռեսպուբլիկայի ձեռք բերած առաջադիմությունը։ Մենք Հնդկաստանում օգտվում ենք ձեր զարգացած արդյունաբերությունից։ Մենք ներմուծում ենք Հայաստանի գործարաններում պատրաստած դեներատորներ, տրանսֆորմատորներ և այլ մեքենաներ։

Երևան քաղաքը, ինչպես տեսա, օրավուր ավելի ու ավելի գեղեցիկ է դառնում։

Մեզ ամենից շատ հիացրեց այն սերն ու հոդատարությունը, որոնցով հայ ժողովուրդը շրջապատել է իր կուլտուրական հին ժառանգությունը, ինչպես նաև նրա աղգային հպարտության զգացմունքը, իր հին տրադիցիաների հանդեպ։

Հնդիկները շատ բան գիտեն Հայաստանի մասին։ Հայերը հարգանք ու սեր են վայելում այնպիսի քաղաքներում, ինչպիսիք են Կալկաթան, Բոմբեյը և Մադրասը։

Կ. Պ. Շ. ՄԵՆՈՆ
ՍՍՌՄ-ում Հնդկաստանի ռեսպուբլիկայի դեսպան

Ես երկրորդ անգամ է, ինչ գտնվում եմ Սովետական Հայաստանում և Երևանում։ Առաջին անգամ ես Երևան եկա 1935 թվականին։ Այդ թվականին էլ ծանոթացա հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի հետ։

Ես եղել եմ աշխարհի բազմաթիվ մեծ ու փոքր քաղաքներում և հաստատապես կարող եմ պնդել, որ ոչ մի քաղաք քսանհինգ տարվա ընթացքում այնքան չի փոխվել և գեղեցկացել, որքան Երևանը։ Պայծառ և անուշ քաղաք է Երևանը, քաղցր է Հայաստանի արևը, իսկ մեր հայերը շնորհալի են և աշխատասեր։

Ես շատ սիրեցի մեր մանուկներին, նրանք շատ են առողջ և գեղեցիկ։ Նրանք մեր ապագան են, մեր վաղվա օրը, նրանք են, որ վաղը երկիր պիտի ղեկավարեն և գեղեցիկ գրքեր գրեն։

Ես հեռանում եմ Հայաստանից հոգով և մտքով բարձրացած և հարստացած։ Այստեղ ես տեսա հին, սակավաթիվ բարեկամներ, բայց ձեռք բերի նոր բազմաթիվ բարեկամներ։

Ես եղա Մատենադարանում։ Դա իր արժեքով և նշանակությամբ կարող է պատիվ բերել ոչ միայն Հայաստանին։ Ես եղա Սունդուկյանի անվան թատրոնում և տեսա «Պաղտասար աղբար»-ը։ Պիտի ասեմ, որ այս ներկայացումը աշխարհի լավագույն ներկայացումներից մեկն է։

Երեկ ես պատիվ ունեցա այցելելու մի մարդու, որը մեծ համբավ ունի աշխարհում։ Դա Վիկտոր Համբարձումյանն է։ Այդպիսի մարդիկ տիեզերքի չափ մեծացրել են փոքրիկ Հայաստանը։ Դա մեծ, շատ մեծ ուրախություն է ինձ համար։

Զարմանում եմ Ձեր առաջադիմությամբ։ Ինձ համար հպարտություն է զգալ, թե ինչ ուժեր կան այստեղ Հայաստանում։ Հիանում եմ մեր ինտելիգենցիան տեսնելով, զարմանում եմ Ձեր առաջադիմությամբ։ Եթե սա եղել է քսանհինգ տարում, ապա ի՞նչ կլինի հիսուն տարի հետո։

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ
Ամերիկաձայ գրող

Քիչ չեմ կարդացել Սովետական Հայաստանի մասին, բայց այն, ինչ այստեղ տեսա, գերազանցեց իմ բոլոր ակնկալիքները։ Հիացած եմ Հայաստանի բնությամբ, կոթողներով, արվեստներով։ Այստեղ նկարիչների մի հզոր շոկատ կա հռչակավոր վարպետ Մարտիրոս Սարյանի գլխավորությամբ։ Հիացած եմ Հայաստանի Պետական պատկերասրահով, այնտեղ քիչ չեն արվեստի իսկական գլուխ-գործոցները (հիանալի են, օրինակ, Գվարդիի, Վան-Գոյենի, Լեոպոլդ Ռոբերի գործերը)։ Պատկերասրահում ինձ համար չափազանց հաճելի նորություններ էին Հակոբ Հովնաթանյանի և Ստեփան Ներսիսյանի գործերը, որոնք ըստ իս, կարող են տեղ ունենալ ուզածդ թանգարանում։

Մինչև Հայաստան գալս ինձ թվում էր, թե հայ արվեստի հետ ես շատ քիչ ընդհանուր բան ունեմ, հատկապես չունեմ իմ նախորդ անալոգը։ Բայց, ես տեսա Ներսիսյանի



ՍՅԱԼԻՆԻ ՊՈՂՈՑԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

նում եմ ձեր առաջադիմությամբ։ Եթե սա եղել է քսանհինգ տարում, ապա ի՞նչ կլինի հիսուն տարի հետո։

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ
Ամերիկաձայ գրող

Քիչ չեմ կարդացել Սովետական Հայաստանի մասին, բայց այն, ինչ այստեղ տեսա, գերազանցեց իմ բոլոր ակնկալիքները։ Հիացած եմ Հայաստանի բնությամբ, կոթողներով, արվեստներով։ Այստեղ նկարիչների մի հզոր շոկատ կա հռչակավոր վարպետ Մարտիրոս Սարյանի գլխավորությամբ։ Հիացած եմ Հայաստանի Պետական պատկերասրահով, այնտեղ քիչ չեն արվեստի իսկական գլուխ-գործոցները (հիանալի են, օրինակ, Գվարդիի, Վան-Գոյենի, Լեոպոլդ Ռոբերի գործերը)։ Պատկերասրահում ինձ համար չափազանց հաճելի նորություններ էին Հակոբ Հովնաթանյանի և Ստեփան Ներսիսյանի գործերը, որոնք ըստ իս, կարող են տեղ ունենալ ուզածդ թանգարանում։

Մինչև Հայաստան գալս ինձ թվում էր, թե հայ արվեստի հետ ես շատ քիչ ընդհանուր բան ունեմ, հատկապես չունեմ իմ նախորդ անալոգը։ Բայց, ես տեսա Ներսիսյանի գեղեցիկ Քուռի ափին թարմությամբ շնչող, սքանչելի երփնագրված աշխատանքը, համոզվեցի, որ հայ արվեստում էլ ես ունեմ իմ նախորդը և այդ ընդհանրությունը, իհարկե, անմիջական կապ է ստեղծում իմ և հարազատ ժողովրդիս արվեստի միջև։

Այդ բոլորով հանդերձ, Հայաստանում ինձ ամենից ավելի հիացնողը Երևանն էր, նոր Երևանը,— բարեշեն, գեղեցիկ մի մայրաքաղաք։ Ոչ միայն հայրենասիրական զգացմունքները, այլ նաև աշխարհ տեսած մարդու զգաստ գիտակցությունը ինձ թելադրում է Երևանի կառույցների մեջ տեսնելու հայ ժողովրդի շինարարական անսպառ եռանդը, ճարտարապետական հանճարը։

Նոր Երևանը իմ ժողովրդի ստեղծագործ հոգու փայլուն արգասիքն է։

ԴՐԻԳՈՐ ՇԻԼԴՅԱՆ
Իտալացի նկարիչ

Ուզում եմ այնքան բան պատմել, խոսել, սակայն հուզմունքը խանգարում է ինձ։ Ձեր երկրում ես տեսա հյուրասեր և սրտաբաց ժողովրդի, որն այնքան շնորհություն ու հոգատարություն ցուցաբերեց իմ հանդեպ։

Ինչպես ամենուրեք Սովետական Միությունում, այնպես էլ Երևանում ինձ ընդունեցին բարյացակամ ու շերմ։ Ցեմ մոռանա Երևանի հանդիսատեսին, որի վերաբերմունքը չափազանց հաճելի էր։ Ձեր մայրաքաղաքը մի հսկայական շինարարական հրապարակ է, ուր տաղանդավոր ու աշխատասեր հայ ժողովուրդը զբաղված է ստեղծարար մի մեծ աշխատանքով։ Մեկնելուց առաջ հիշում եմ իմ ամենաջերմ հանդիպումները Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի հետ, որոնց անունները հայտնի են ամբողջ աշխարհին։ Իմ սիրտը ձեզ հետ է, սովետական բարեկամներ, ես սիրեցի ձեզ։

ՎԵՆ ԿԼԱՅԲԵՐՆ
Ամերիկացի դաշնակահար

Հայաստանում մեր տեսած հրաշալիքներից մեկը Մատենադարանն էր, հնադարյան թանկարժեք ձեռագրերի այդ սքանչելի շտեմարանը։ Որպիսի խնամքով ու գուրգուրանքով են պահված այդ ձեռագրերը, որոնք հայ ժողովրդի մեծ կուլտուրայի շմարող վավերագրերն են։

Հայաստանում մարդիկ բարի են, կուլտուրական, հյուրասեր։ Ամեն քայլափոխում մենք զգում էինք այդ։

Մենք Հայաստանից հեռանում ենք լավագույն տպավորություններ ստացած և հայ աշխատասեր ժողովրդին ու նրա դրողներին ցանկանում ենք նորանոր հաջողություններ։

ՌՈՄԵՐՈ ԷԼՎԻՈ
ԴԻՅԱՉ ԴՆ ՄՈՐԱԵՍ
ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆԻԵՏԱ
Պարագվայցի գրողներ

Ես համոզվեցի, որ Հայաստան են այցելում Սկանդինավյան շատ դելեգացիաներ։ Այդ փաստի համար կարելի է շատ պատճառներ գտնել։ Դրանցից մեկն այն է, որ Հայաստանի արվեստը մեզ ավելի է հայտնի և մենք գնահատում ենք այն։ Մյուս պատճառն այն է, որ մենք լավ ծանոթ ենք և հասկանում ենք միջնադարյան ճարտարապետական արվեստի նշանակությունը։ Վերջին ժամանակներս մենք համոզվեցինք նաև այն բանում, որ Հայաստանի արվեստը զարգանում է, և իմ խոսքերի հաստատումն են հանդիսանում կոմպոզիտոր Խաչատրյանի ստեղծագործությունները, որոնք նվիրել է նա մարդկության։

Բայց Հայաստանը միայն արվեստով չի գրավում մեզ։ Մենք ինքներս փոքր ազգերի ներկայացուցիչներ ենք։ Եվ մեզ զբաղեցնում է Հայաստանի ճակատագիրը, այն փոքր ազգի, որ երկար ժամանակների ընթացքում դաժանորեն հալածվել է և չի ունեցել հավասար ազգի վիճակ։ Բայց, այնուամենայնիվ, այդ ռեսպուբլիկան լիակատար անկախություն է նվաճել և հնարավորություն ստացել պրոգրեսիվ կերպով զարգանալու համար։ Հայաստանը գրավում է կուլտուրական և տեխնիկական տեսակետից աշխարհի զարգացած որևէ այլ ազգության հավասար տեղ։

ՑՈՐԱՆ ՇԻԼԴ
Նվեդիացի ժուռնալիստ

«Կյանքի գեղեցկությունը»։ Մենք քիչ անգամ առիթ ենք ունենում այդպիսի խոսքեր լսել մեզ մոտ՝ Նորվեգիայում։ Այն, ինչ որ ես տեսա Հայաստանում, ինձ համոզեց, որ այնտեղ մարդիկ իսկապես զգում են «կյանքի գեղեցկությունը...»։

Ես բերկրանքով գիտակցում եմ, որ «կյանքի գեղեցկությունը» դատարկ խոսք չէ նոր Հայաստանում, այլ հիանալի իրականություն։

ՍԻՐԻ ՍՎԵՐԴՐՈՒՆ ԼՈՒՆԴԵՆ
Նորվեգիացի ճաշարակական գործիչ

Հայ ժողովուրդը հոգատարությամբ պահպանելով իր հին և ինքնատիպ կուլտուրան, հաջողությամբ զարգացնում է այն, նրան տալով շտեսնված փայլ։

Հայաստանում ինձ ամենից շատ դուր եկավ Սևանի ստորերկրյա հիդրոէլեկտրակայանը։ Ինձ վրա հսկայական տպավորություն թողեցին ռեսպուբլիկայի մայրաքաղաքի ճարտարապետական անսամբլները։ Ինձ թվում է, որ ժամանակին Երևանը կդառնա աշխարհի գեղեցիկ քաղաքներից մեկը։ Ես ինձ Հայաստանի մոտ բարեկամ եմ համարում, ուստի կամենում եմ մի փոքր դիտողություն անել ճարտարապետներին։ Ճարտարապետական հին ձևերի հաջող օգտագործումը չպետք է կաշկանդի ռեսպուբլիկայի ճարտարապետներին, նրանք պետք է շարունակ հարստացնեն իրենց ստեղծագործությունը, ավելի համարձակորեն զուգակցեն նորը հնի հետ։

Ես եղբայրական ողջույն եմ հղում Սովետական Հայաստանի գրողներին և ժողովրդին։ Խաղաղությունն ու առաջադիմությունը, որ ես բախտ ունեցա տեսնել ու ճանաչել այս

երկրում, երբեք չեն ջնջվի իմ հոգեղությունից։

ՊԱԲԼՈ ՆԵՐՈՒԴԱ
Չիլիցի բանաստեղծ

Ինչքան դժվար է մի քանի խոսքով հայտնել իմ տպավորությունները Սովետական Հայաստանի մասին։

Ես միշտ եղել եմ հայ ժողովրդի միասնության ու անկախության համար նրա մղած պայքարի առանձնահատուկ բարեկամը։ Բայց լոկ այս կարճատև այցելության ժամանակ ես բմբռնեցի, թե ինչքան հարուստ ու հարատև են ձեր պատմությունն ու մշակույթը և թե ինչպես բազում դարերի ընթացքում դուք մաքառել եք այն պահպանելու համար։

Իրոք դուք շատ ուշագրավ մի ժողովուրդ եք, որ կարողացել եք մնալ այսքան կենսունակ և հավատարիմ ձեր ավանդություններին, երբ ամբողջ պատմությունն ու հանգամանքները ձեր դեմ են եղել։

Ինձ թվում է, եթե այսօր ես հայ լինեի, խորապես հպարտ կլինեի և՛ հայ ժողովրդի պատմությամբ, և՛ ներկա Հայաստանով։ Մի՞թե չափազանցություն կլիներ ասել, թե արդի Սովետական Հայաստանն արդեն բրոնել է գեղեցիկ ու կուլտուրական մի երկիր ստեղծելու ճանապարհը, որին ձգտում է հայ ժողովրդի ամբողջ պատմությունը։

Ձեմ կարծում, որ դա չափազանցություն կլիներ։ Ձեր գեղեցիկ գյուղերն ու քաղաքները, ինչպես նաև պատմական հուշարձանները տեսնելուց հետո, ես հավատացի, որ շուտով դուք կդառնաք աշխարհի ամենասիրուն ու բարգավաճ պետություններից մեկը։

Ձեր աշխատասիրությունը, ձեր հնարագիտությունը, գեղարվեստական վարպետությունը, գեղագիտական բարձր ճաշակը և իսկապես ժողովրդական արվեստը, ինչպես նաև ճարտար արհեստները, որոնք փոխանցվում են ձեր նոր հասարակարգի նոր արդյունաբերությանը, մի-մի գրավական են, որ ապագան ձերն է։

ՋԵՅՄՍ ՕԼԴՐԻՋ
Անգլիացի գրող

Հարգանքի խոր զգացմունքով ես դիտեցի հայկական հնադարյան ճարտարապետության հուշարձանները՝ Զվարթնոցը, Էջմիածնի հոյակապ եկեղեցիները, որոնց անկրկնելի ինքնատիպությունը և յուրօրինակ գեղեցկությունը անջնջելի տպավորություն են թողնում։ Հայ ճարտարապետության կողքին, և նրան բնավ էլ չզիջելով, զարգանում է գե-

Ք՝ ԼԵՆԻՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ ԵՎ ՓՈՂՈՑԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

զանկարլությունը։ Վառ դեկորատիվ գույները, պարզ, բարձր ճաշակով օգտագործված արտահայտչական միջոցները ներգործուն մեծ ուժ են հաղորդում կերպարվեստի ստեղծագործություններին։

ԴՈՒՆ ՍԻ-ՎԵՆ
Պեկինի գեղարվեստական
ակադեմիայի պրոֆեսոր,
սենյաքի նկարիչ

Հեռավոր Մեքսիկայի կենտրոնական սարահարթում լսողին թվում է, թե Հայաստանի անունը վերցված է Արևելքի հնագույն լեռներից և_հնքիաթներից։



ԿԻՐՈՎԻ ՓՈՂՈՑԸ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ

Սովետական Միությունը շատ հեռու է Մեքսիկայից։ Եվ սովորաբար կարծում են, թե Հայաստանը ուղտերի երկիր է, լայն ու երկար զգեստներ հագած մարդկանց, հնադարյան գեղեցիկ կառուցվածքների երկիր։ կարճ ասած, այնպիսի մի երկիր, որը շատ թե քիչ նման է «Հազար ու մեկ գիշերներ»-ի մեջ նկարագրված երկրներին։

Հայաստան կատարած մեր ներկա այցելության ժամանակ մենք տեսանք մի երկիր, որն իրոք ֆանտաստիկ է։

Թվում է, որ հայկական այս իրականությունը դուրս է եկել «Հազար ու մեկ գիշերներ»-ի սահմաններից և դարձել է մի այնպիսի ռեսպուբլիկա, որի կես միլիոն բնակչություն ունեցող մայրաքաղաքում այսօր գործում են օպերայի ու բալետի թատրոն, հայկական և ռուսական դրամատիկ, պատանի հանդիսատեսի և տիկնակային թատրոններ, երաժշտական կոմեդիայի թատրոն, գեղարվեստական-թատերական ինստիտուտ, թատերական, երաժշտական, երգի ու պարի բազմաթիվ կոլեկտիվներ ու ինքնագործ խմբեր։ Թվում է, թե թռչող գորգի նման է իջել բանվորների ու ծառայողների համար կառուցվող բնակելի տների, վարչական ու հասարակական գեղեցիկ շենքերի, պողոտաների անվերջանալի շինարարությունը։

ԽՈՒԱՆ ՄԻԳԵԼ ՄՈՐԱ
Մեքսիկացի գրող

Երևանը իր վարդագույն շենքերով, ասֆալտապատ փողոցներով, ճարտարապետական հոյակապ կոթողներով ինձ շատ դուր եկավ։ Շատ կարճ մնալով ձեր քաղաքում, ես չհասցրի լավ ծանոթանալ հայկական երաժշտությանը։ Բայց պետք է ասեմ, որ դեռ Ֆրանսիայում ծանոթացել եմ ու գմայլվել հայկական երաժշտությամբ։ Ձեր ժողովուրդը արվեստագետ ժողովուրդ է։ Նա ունի

բարձր հաշակ և մեծ սեր երաժշտության հանդեպ։ Ինչ վերաբերվում է իմ համերգներին, ապա պետք է ասեմ, որ ես անկեղծորեն զգացված եմ հանդիսատեսի ջերմ վերաբերմունքից։ Պետք է անպայման նշեմ մեծատաղանդ դիրիժոր Օհան Դուրյանի և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի մեծ վարպետությունը։ Երևանից ես մեկնում եմ վառ ու անջնջելի տպավորություններով, շատ նոր ծանոթություններ հաստատած։ Ես նորից կգամ Երևան։

ՄՈՆԻԿԱ ԱԶ
Ֆրանսիացի դաշնակահարուհի

Հայաստանը մեզ ցույց տվեց, որ նրա առավել արժեքավոր գանձը երեխաներն են։ Մենք ինքներս տեսանք, թե ինչպես են զարգանում երեխաների ընդունակությունները Հայրենիքի արևի տակ, որը հոգով սիրում է նրանց։ Դա անջնջելի տպավորություն գործեց մեզ վրա։

Մենք երբեք չենք մոռանա Հայաստանը։

ԷԼԻԶԱ ԿԼՆՐ
Զվիցերիացի կանանց
դելեգացիայի անդամ

Անկեղծորեն ուզում եմ նշել, որ ես ձեզ մոտ ստացա այնպիսի տպավորություններ, որոնք կհիշեմ ամբողջ կյանքում։ Մատենադարանում՝ հին ձեռագրերի այդ հազվագյուտ գանձարանում, ես համոզվեցի, որ Հայաստանը հին քաղաքակրթության երկիր է։

Ինձ համար շատ հաճելի է, որ ձեր ռեսպուբլիկայում ինչ արվում է աճող սերնդի երջանիկ ապագայի համար։ Ձեր ուսումնական հաստատություններում տեսական պրակտիկան հաջողությամբ զուգակցվում են պրակտիկ գործունեության հետ։ Դա անհրաժեշտ է բազմակողմանիորեն, լավ զարգացած մասնագետներ պատրաստելու համար։

Անմոռանալի են Հայաստանի տեսարանները։ Նույնիսկ վատ եղանակներին դրանք գեղեցիկ են։ Բայց մեզ վրա ամենամեծ տպավորությունը գործեցին հյուրասեր, աշխատասեր մարդիկ։ Ես միայն ափսոսում եմ, որ մենք խոսում ենք տարբեր լեզուներով։ Լեզվական պատնեշը որոշ չափով խանգարում էր զրուցելու ժողովրդական կրթության կարևոր շատ հարցերի շուրջը։

ԱԳՈՒՍՏԵՆ ՆԻԵՏՈ ԿԱԲԱԼԵՐՈ
Կոլումբիայի լուսավորության նախկին
մինիստր, Բոգոտայի ժամանակակից
գիմնազիայի դիրեկտոր

Հայերն ունեն մշակութային նույնպիսի ավանդներ, ինչպես հույները։ Տարբերությունն այն է, որ հույներն այդ ավանդները պահպանել են ավերակների մեջ, իսկ հայերը հասցրել են մինչև մեր օրերը։ Ես խորապես համոզված եմ, որ ՍՍՌՄ ժողովուրդների միասնական ընտանիքում ապրող հայերի նոր սերունդները, արժանապատվությամբ պահպանելով իրենց մշակութային անկրկնելի առանձնահատկությունները, հավատարիմ կմնան իրենց ժողովրդի ավանդներին։

Իմանալով, թե ինչ էր Հայաստանն առաջ և տեսնելով, թե ինչ է դարձել նա այժմ, մենք պատկերացնում ենք նրա ապագայի առավել հոյակապ հեռանկարները։

ԺԱՑՄԵ ԱԴՈՌԻՐ ԴԱ ԿԱՄԱՐԳ.
Բրազիլիացի գրող



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Տօն Գիւտ խաչի», Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի ուսանողները, վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսի գլխավորությամբ, երեկոյան ժամը 6-ին մեկնեցին Երևան, Արվեստի աշխատողների տանը դիտելու համար ռումինահայ հայտնի նկարիչ Հրանտ Ավագյանի նկարչական ցուցահանդեսը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռում նշվեց Մոսկվայի հայոց եկեղեցու ծխատեր արժանապատիվ Տ. Խաչատուր ավագ քահանա Տեր-Հարությունյանի ծննդյան 85-ամյակը։ Այս ուրախ առիթով Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով ծերունազարդ հոբելյարին՝ մաղթեց առողջություն և երկար կյանք։

Մայր Աթոռի միաբանները ևս ջերմորեն շնորհավորեցին ծերունազարդ հոբելյարի ծննդյան 85-ամյակը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռից Բուխարեստ մեկնեց ռումինահայ հայտնի նկարիչ Հրանտ Ավագյանը, որը Վեհափառ Հայրապետի հրավերով ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի առաջնորդ հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը թեմական գործերով ժամանեց Մայր Աթոռ։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի հրամանով Մայր Աթոռից Մոսկվա մեկնեց Մայր Տաճարի ավագ լուսարար հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաշիրյանը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Մոսկվա, ռուսական Զագորսկ վանքը մեկնեցին բարեշնորհ Կարապետ սարկավագ Բենլիյանը, Պետրոս սարկավագ Պերպերյանը և Հակոբ սարկավագ Պողոսյանը, 6 ամիս ժամկետով։ Մայր Աթոռի սարկավագները

կհմտանան ռուսաց լեզվին, կծանոթանան Ռուս Եկեղեցու պատմության, աստվածաբանության և ծիսակատարության։

❋❋❋

ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Միլանոյից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին Օշականի եկեղեցու վերանորոգման բարեբար Թորգոմ և Հայկ Ղազարոսյան եղբայրները։

❋❋❋

ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Մանթուրյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

❋❋❋

ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Ընծայումն Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Հարությունն վարդապետ Մատենճյանը։

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարեց Հոգևոր Ճեմարանի երգչախումբը։

❋❋❋

ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց հոգեհանգիստ Մայր Աթոռի բարերարներ, միլանոյաբնակ Թորգոմ և Հայկ Ղազարոսյան եղբայրների հանգուցյալ ծնողների հիշատակին։

❋❋❋

ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ ժամանեց ականավոր արևելագետ, Բուխարեստի համալսարանի պրոֆեսոր, հայագետ Վլատ Բենեցեանուն։

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՆՈՐԸՆՏԻՐ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Մոտավորապես չորս տարի Մայր Աթոռը և անձամբ Վեհափառ Հայրապետը իրական և խորին վիշտ էին ապրում Երուսաղեմի Հայոց Սրբոց Հակոբյանց միաբանության մեջ, Հորդանանի հայ համայնքի ծոցում, Հայոց Պատրիարքության շուրջ ստեղծված անբաղձալի կացության հետևանքով, որը միաժամանակ իր տխուր անդրադարձումն էր ունենում Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական կյանքի վրա։

Վեհափառ Հայրապետը երբ մայիսին խաղաղության առաքելությամբ գտնվում էր ԱՄՆ-ում, ամրապնդելու համար մեր սուրբ հավատի և Հայաստանյայց եկեղեցու միությունն ու հայ կյանքի ներքին խաղաղությունը, առաջնորդված միշտ բարի մտադրություններով և ներշնչված մեր Ս. եկեղեցու շինության և միասնականության ոգով, Նյու-Յորքից, Իր 7 հունիսի հետևյալ հեռագրով, բավ համարելով գերաշնորհ Տ. Եղիշե հպիսկոպոսի նկատմամբ եղած կարգադրությունը, նրան վերադարձնում էր փիլոնը և արքության պատիվը.

«Առաջնորդված մեր նվիրապետական Աթոռներու միասնականության և խաղաղության ոգիով, ընդառաջելով Ս. Աթոռիդ միաբանության մեծամասնության խնդրանքին, նկատի առնելով Մեր լիազոր Սերովբե եպիսկոպոս Մանուկյանի 4 հունիս թվակիր զեկուցումը և Ձեր վերջին երկու Մեզ ուղղյալ նամակներու բովանդակությունը, Մենք այսու կնայտնենք Ձեզ, թե բավ կնամարենք 1957 ապրիլի վճիռով Ձեր կախակայումը, վերադարձնելով Ձեզ նաև արքության պատիվը, համոզված լալով, թե այսուհետև Ձեր իմաստուն ու շրջահայաց գործունեությամբ պիտի ծառայեք Ձեր Ս. Աթոռին և մեր եկեղեցվո միության գերագույն շահերուն։ Կմաղթենք Ձեզ առնշատություն և Ձեր սուրբ գործոց հաջողություն»։

Հունիս 9 թվակիր հեռագրով գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոսը իր որդիական երախտագիտությունն էր հայտնում Վեհափառ Հայրապետին՝ Նրա բարձր վստահության համար.

«Մեծ ուրախությամբ և երախտագիտական զգացումներով ստացա Ձերդ Ս. Օծության հեռագիրը՝ իմ փիլոնազրկման վերջացվիլը հաղորդող։ Կներկայացնեմ խորին շնորհակալություններս Ձերդ Վեհափառության, մաղթելով Ձեզի երկար և երջանիկ կյանք, և հաստատություն Մայր Աթոռոս»։

Հունիսի 7-ին, Սրբոց Հակոբյանց միաբանության ընդհանուր ժողովը նիստ գումարելով Պատրիարքարանի դահլիճում, կազմում է պատրիարքական ընտրելիների հնգանուն ցանկ, որի վրայից հաջորդ օրը, հունիսի 8-ին, գաղտնի քվեարկությամբ և 23 ներկա ժողովականների 18 քվեների բացարձակ մեծամասնությամբ պատրիարք է ընտրվում գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը։

Պատրիարքական ընտրության արդյունքը հեռագրով հաղորդվում է Ամենայն Հայոց Հայրապետին։

Նորին Ս. Օծությունը Բուենոս-Այրեսից ուղարկում է նորընտիր ամենապատիվ Սրբ-

բազան Պատրիարք Հոր հետևյալ շնորհավորական հեռագիրը.

«Կշնորհավորեմք Ձեզ Ձեր Երուսաղեմի Պատրիարք ընտրվելուն առթիվ: Մեր խնդակցությունները Ձեր ուրախ գահակալության, հնչախս նաև Սրբոց Հակոբյանց միաբանության: Սրտանց կմաղթեմք, որ Ս. Հակոբա

նապատիվ Տ. Եղիշե Պատրիարքի ընտրությունը շնորհավորում է նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը հետևյալ հեռագրով.

«Գերագույն Հոգևոր Խորհուրդը շնորհավորում է Ձեր ընտրությունն ու գահակալու-

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԵՐՅԱՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ

Աթոռ տևական ըլլա և Ձեր սուրբ առաքելությունը հաջող խաղաղության մեջ և մեր Ս. եկեղեցվո միասնականությունը Ս. էջմիածնի օրհնությամբ:

Հայկազուն Սրբազան Մեզ կնեռկայացնե արարողության ընթացքին»:

Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, ամենապատիվ Տ. Եղիշե Պատրիարքի ընտրությունը Ս. Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Աթոռի վրա և մաղթում է Ձեզ բեղմնավոր ու խաղաղ գործունեություն, հոգուտ Հայ Եկեղեցու, Ս. Աթոռիդ միաբանության և հայ ժողովրդու:

Օգոստոսի 10-ին, Հորդանանի բարեխնամ կառավարությունը վավերացնում է ամենա-

պատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոսի պատրիարքական ընտրությունը։

Ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան արքեպիսկոպոսի գահակալության հանդեսը կատարվում է Երուսաղեմում, օգոստոսի 21-ին, կիրակի օրը։

Երեկոյան ժամը 5-ին, Պատրիարք Սրբազան Հայրը Պատրիարքարանից «Հրաշափառ»-ով առաջնորդվում է Մայր Տաճար։ Դասի երկու կողմերում տեղ են գրավել պետական պաշտոնական անձնավորություններ և հարանվանությունների ներկայացուցիչներ, այլ հրավիրյալներ և խուռն ժողովուրդ։

Սրբազան Պատրիարք Հայրը առաջնորդվում է Ավագ Սեղան։ Եկեղեցական արարողության ավարտին բեմից կարդացվում են արքայական հրովարտակի նախ արաբերեն բնագիրը, ապա նույնի հայերեն և անգլերեն թարգմանությունները։

Գերաշնորհ Տ. Հայրիկ եպիսկոպոսի հանուն Սրբոց Հակոբյանց միաբանության արտասանած ողջույնի սրտագին խոսքերից հետո, նորընտիր պատրիարքը, ծնրադիր Ավագ Սեղանի առաջ, դիմաբաց, ծանր և հանդիսավոր արտասանում է իր ուխտը.

«Խոստանամ և ուխտեմ առաջի Աստուծոյ և առաջի Սրբոյ Սեղանոյս՝

Եղնի մտոք և ճաւատարմութեամբ ճակել գործադրութեան կարգաց, կանոնաց և աւանդութեանց միաբանութեան Առաքելական Աթոռոյս Ս. Յակոբեանց։

Ուխտեմ լինել ճաւատարիմ Ազգիս և Հայրապետական վերին իշխանութեան Ամենայն Հայոց, կարգաց և կանոնաց Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ։

Նաև ուխտեմ կալ մնալ ճաւատարիմ Նորին Վեհափառութեան Յորդանանու Հաշիմական Թագաւորին և իմաստուն և արդարասէր Կառավարութեան Նորին։

Ընկալցի զուխտս և զգործս ձեռաց մերոց ոտիղ արասցէ ի մեզ Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեսցէ մեզ։ Ամէն»։

Ուխտի կատարումից հետո, բեմի վրա գտնվող եպիսկոպոսական զգեստավորումով վեց եպիսկոպոսներ, իրենց ձեռքերը դնում են նորընծա Սրբազան Պատրիարք Հոր գլխին և «Պահպանիչ» արտասանում։

Ապա, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, առաջինը նորընտիր Պատրիարքին ողջունում է և շնորհավորում Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, որը ուխտավորաբար գտնվում էր Երուսաղեմում, իր միարանակից եղբայրների մոտ.

«Ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Արքեպիսկոպոս Տերտերյան, արժանընտիր Պատրիարք Առաքելական Ս. Աթոռույս, բարեխնամ և Ամենապատիվ Սրբազան Հայր.

Հանուն Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսի Ամենայն Հայոց և հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդոյ Սրբո Էջմիածնի, լիազորված եմ այս հանդիսավոր պահուն հաղորդել Ձերդ Ամենապատվությանը Վեհափառ Հայրապետի սրտագին մաղթանքները և շնորհավորությունները Ձեր գահակալության այս բարեբաստիկ առիթով։

Ս. Էջմիածնի սիրո ձայնն է այս պահուս, որ կհնչե նվիրական այս սրբազան կամարներուն տակ։ Ձայնը օրհնության, ձայնը ուրախության և ձայնը ցնծության։ «Առանց Էջմիածնի չկա հայ ժողովուրդ, և առանց հայ ժողովրդի չկա Էջմիածին։ Ս. Էջմիածնի սյուները հանգչում են ոչ միայն Արարատյան դաշտի հողին մեջ, այլ անոնք խարսխված են ամեն մեկ հայի սրտի և հոգու մեջ,— ըսած է մեր անմահ բանաստեղծներեն Ավետիք Իսահակյանը։

Դարեր, դարեր շարունակ, Լուսավորչի և Ս. Գլխադրի կանթեղներուն մաքուր լույսը իրարու հետ զոդված, մեկ կամար կազմած և լուսավորած են հայ հավատացյալ ժողովուրդի սիրտն ու հոգին ի սփյուռս աշխարհի։ Դարեր առաջ Աստվածորդին իջավ այս սրբազան քաղաքին վրա, Աստվածորդին իջավ նաև Այրարատյան դաշտը և այնտեղ կերտեց հայության Սրբություն Սրբոցը՝ Ս. Էջմիածինը։

Ճշմարտության լույսին տակ, երբ այսօր իր բովանդակ շքեղանքով զարդարված է Առաքելական Ս. Աթոռը և ամենուն սիրտին մեջ խինդ ու ծիծաղ կա, ան կտարածվի, կմեծնա և կհասնի մինչև Ս. Էջմիածնի կամարներուն տակ և կուրախացնե տասնամեկ տարիներե ի վեր տրտմյալ հոգիները։ Հոգևոր այս տանը զավակներուն հետ ևս առավել ուրախ է նաև Ազգիս Վեհափառ Հայրապետը Իր բոլոր զավակներով միասին, և ինչո՞ւ չէ՝ նաև ամբողջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին։

Ձեր հավատարմության նվիրական ուխտը, զոր ծնկաչոք և հուզումով կատարեցիք այս հանդիսավոր պահուս հանդեպ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետին, խորապես կհուզե և կուրախացնե մեր բոլորի հոգիները։

Ամենապատիվ Սրբազան Հայր, թող հնչեն զանգակները մեր նվիրական սրբավայրերուն և իրենց ձայնին թող միացնեն մեր արցունքն ու ուրախությունը, ի մխիթարություն մեր տառապած հոգիներուն։

Ահա այս զգացումներով, անգամ մը ևս Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի անունով կշնորհավորենք Ձեզ և կմաղթենք, որ Աստված Իր արևի բարի և տաք ճառագայթները առատին անգամ ցողե այս սրբա-

վայրի գմբեթին վրա և Զերդ Ամենապատվության շնորհն խաղաղ և երջանիկ օրեր, որպեսզի Դուք առաջնորդեք Ձեզ հանձնված հոտը «առ յուրս հանգստեան»։

Ապա ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքը արտասանում է իր ուխտի գեղեցիկ քարոզը։

Քարոզից հետո Սրբազան Պատրիարքը առաջնորդվում և ապա հանդիսավորապես բարձրանում է առաջին անգամ Տյառնեզբայր Հակոբոս առաքյալի Աթոռի պատվանդանի վրա, որպես լրումը և պսակը գահակալության հանդեսին և ընդունում շնորհավորությունները հոգևորական դասի, եկեղեցական և աշխարհական պաշտոնական անձնավորությանց։

Ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքը ծնվել է 1910 թվականին, Վասպուրական աշխարհի Ոշտունյաց գավառի Կայնամիրան գյուղում։ գյուղապետի ընտանիքում։

1915 թվականին իր ծնողների և համաքաղաքացիների հետ գաղթում է Պարսկաստան, ապա վերադառնում Վան և նույն տարին ընդմիշտ հեռանում իր ծննդավայրից, տարագրվելով Միջագետքի Բագուբա քաղաքը։ Ապա ընդունվում է Նահր էլ-Օմարի որբանոցը մինչև 1922 թվականը։

Նույն թվականին բազմահազար որբեր Հ. Բ. Ը. Միության նախաձեռնությամբ Միջագետքից փոխադրվեցին Երուսաղեմ՝ Արաբատյան որբանոցը։ Որբերի հետ է նաև եղիազարը, ապագա Սրբազան Պատրիարքը, որը 1924 թվականին, Դուրյան Պատրիարքի օրոք, ընդունվում է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանը։ Աշակերտում է Եղիշե Դուրյան և Թորգոմ Գուշակյան պատրիարքներին, Բաբգեն կաթողիկոս Կյուլեսերյանին, Ընծայարանի դասընթացը հաջողությամբ, ավարտելով, 1928 թվականին Դուրյան պատրիարքի ձեռքով ձեռնադրվում է սարկավագ, իսկ 1932 թվականին, Թորգոմ Պատրիարքից՝ կուսակրոն քահանա։

1933—1936 թվականներին գավազանակիրը և անձնական քարտուղարն է լինում Թորգոմ պատրիարքի։ 1937—1945 թվականներին՝ տեսուչ ժառանգավորաց վարժարանի և Ընծայարանի։

1944 թվականին ընտրվում է լուսարարապետ, իսկ 1949 թվականին, Տ. Կյուրեղ պատրիարքի մահից հետո՝ պատրիարքական տեղապահ։

1951 թվականի հուլիսին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, եպիսկոպոս է ձեռնադրվում, օծակից ունենալով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Տ. Սուրեն, Տ. Նորայր և Տ. Սահակ ծայրագույն վարդապետներին։

Մինչև 1956 թվականը վանքում համատեղում է նույն պաշտոնները։

1960 թվականի հունիսի 8-ին ընտրվում է Պատրիարք Երուսաղեմի հայոց Առաքելական Աթոռին։

1932—1956 տարիներին Եղիշե սրբազանը, բացի վերոհիշյալ պաշտոններից, անդամակցում է նաև վանքի միաբանական և վարչական ժողովներին, ունենում է մանկավարժական բեղուն գործունեություն՝ որպես ուսուցիչ ժառանգավորաց վարժարանի և Թարգմանչաց վարժարանի։

1939—1956 թվականներին եղել է Ս. Աթոռի պաշտոնաթերթ «Սիոն» ամսագրի խմբագրապետը։

Սրբազան պատրիարքը հեղինակն է նաև բանաստեղծական չորս հատորների՝ «Մագդաղինեն մեղրամոմեն», «Խորտակման գիշերներ», «Անծանոթը» և «Ակեղդամա», ինչպես նաև երեք արձակ հատորների՝ «Հայաստանյայց Եկեղեցին երեկ և այսօր», «Նարեկը հայ գրականության մեջ» և «Լեռան վրայեն»։

Նորընտիր Սրբազան Պատրիարք Հայրը գտնվում է իր հոգևոր և իմացական ուժերի հասունության շրջանում։

Վստահ ենք, որ Նորին Ամենապատվությունը իր հաստատ արժանիքներով, ի գլուխ Ս. Երուսաղեմի զինվորյալ միաբանության, իր կարելին ի գործ պիտի դնի լավագույնս և բոլորանվեր ծառայելու համար Երուսաղեմի Առաքելական Ս. Աթոռին, որի հիմնական կոչումն է միջազգային Ս. Տեղյաց մեջ հայ ժողովրդի դարավոր իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև աննահանջ սպասավորությունը մեր ժողովրդի հավատի, բարեպաշտության և իմացական լուսավորության, Հայաստանյայց Եկեղեցու սիրո և միության կանոնի տակ։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Մայր Աթոռի միաբանության և իր գազմահազար ընթերցողների, սրտագին շնորհավորելով ամենապատիվ Տ. Եղիշե սրբազանի ընտրությունն ու գահակալությունը, մաղթում է ազգօգուտ և եկեղեցաշեն պատրիարքություն՝ հուրախություն Մայր Աթոռի և Վեհափառ Հայրապետի, ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու։

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՓՐԵՄ Բ-Ը ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետը, երբ Ս. Էջմիածին էր վերադառնում արտասահման կատարած իր հովվապետական այցելութիւնից, Մոսկվայում Նորին Սրբութիւն Ալեքսի Պատրիարքի հետ իր տեսութեան ժամանակ, նրան հրավիրեց այցելելու Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

Ալեքսի Պատրիարքը Վեհափառ Հայրապետի հրավերը ընդունեց ջերմ գոհունակութեամբ և հոկտեմբերի 27-ին Թբիլիսիից հատուկ ինքնաթիռով ժամանեց Երևան, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ի հետ, որին ևս հրավիրել էր Վեհափառ Հայրապետը Նրա գահակալութեան օրերին, երբ գտնվում էր Թբիլիսիում։

Երկու քույր եկեղեցիների Սրբազան Պետերին Մայր Աթոռ առաջնորդելու համար, երկու օր առաջ Մայր Աթոռից հատուկ հրավիրակներ ուղարկվեցին Թբիլիսի՝ Հոգևոր Ռեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը և Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը։

Սրբազան Հյուրերին դիմավորելու համար Երևանի օդանավակայանում են Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Երևանի եկեղեցիների քահանայական դասը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և հոծ թվով հավատացյալներ։

Բարձրապատիվ Հյուրերին դիմավորելու համար օդանավակայանում են նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի մեծարգո նախագահ պր. Ս. Գասպարյանը և նրա տեղակալը՝ պր. Ս. Հովհաննիսյանը։

Տեղական ժամանակով ժամը 1.30-ին ինքնաթիռը վայրէջք է կատարում Երևանի օդանավակայանում, բերելով իր հետ քույր եկեղեցիների Հովվապետներին՝ իրենց հոգևորական և աշխարհական հետևորդներով։ Հյուրերին ուղեկցում են գերաշնորհ Տ. Հայկազուն և գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազաններն ու հոգեշնորհ Տ. Վահան վարդապետը։ Սրտագին ողջագուրումից և բարի գալստյան խոսքեր փոխանակելուց հետո, Վեհափառ Հայրապետը իր ուղեկիցներով վերադառնում է Մայր Աթոռ, իսկ հյուրերը առաջնորդվում են մայրաքաղաքի ռինտուրիստս հյուրանոցը։ Կարճատև հանգստից հետո, Ռուս և Վրաց եկեղեցիների Սրբազան Հովվապետները իրենց հետևորդներով ժամանում են Ս. Էջմիածին։

Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Ալեքսիին ուղեկցում են Խերսոնի և Օդեսայի գերաշնորհ Բորիս միտրոպոլիտը, բարեշնորհ Պլատոն ավագ սարկավագը, Դ. Ա. Օստակովը՝ Մոսկվայի Պատրիարքարանի տնտեսական բաժնի վարիչ, Վ. Զայցևը՝ տնտեսական բաժնի վարիչի տեղակալ, Մ. Միրոշնիչենկոն՝ Խերսոնի և Օդեսայի միտրոպոլիտի դիվանապետ։ Իսկ Նորին Սրբութիւն Վրաց Պատրիարք-Կաթողիկոսին ուղեկցում են գերաշնորհ Դավիթ եպիսկոպոսը և արժանապատիվ Ալեքսանդր ավագ քահանան։

Մայր Աթոռի գլխավոր դարբասի մոտ, միաբանությունը իր գլուխը ունենալով, լուսարարապետ Տ. Սահակ սրբազանը բարձրապատիվ Հյուրերին ընդունում է խաչով և խալվառով, «Հրաշափառ»-ով և ամպհովանիով, հանդիսավորապես առաջնորդում Մայր Տաճար, որտեղ Սրբազան Հյուրերին սրտագին ողջագուրումով ընդունում է Վեհափառ Հայրապետը։ Ամեն ոք ուրախ է տեսնելով երեք քույր Եկեղեցիների Գահակալներին Միածնաէջ Մայր Տաճարի խնկաբույր ու ներշնչիչ կամարների տակ. «Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին» (Սաղմ. ՃԼԲ 1)։

ու Հայրենիքի վերածնունդը, այլ նաև մեր ժողովրդի պաշտամունքը Լուսավորչի Գահի և Գահակալի նկատմամբ։

Ուրախ է Հայաստանյայց Եկեղեցին։ Այսօր Ս. Էջմիածին ուխտի են եկել քույր Եկեղեցիների զույգ Գահակալները, բարեկամության մի ոսկյա էջ ևս ավելացնելով մեր ժողովրդի հազարամյա պատմության մեջ, բարեկամություն, որ շատ թանկ է մեզ համար, որովհետև մենք այդ բարեկամության մեջ տեսնում ենք մեր Եկեղեցիների և մեր ժողովուրդների առաջադիմության փառավոր ազդակներից մեկը։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Ուրախ է նաև հավատացյալ հայ ժողովուրդը, տեսնելով նրանց գալուստը արևավառ Հայաստան աշխարհ և ի Ս. Էջմիածին։

Նորին Ս. Օծություն Վազգեն Ա Հայրապետի բարեբաստիկ ընտրության և Լուսավորչի Գահին բազմելու պահից, օրավուր բարձրացավ Լուսավորչի Գահի հեղինակությունը ոչ միայն հայ ժողովրդի, այլ նաև օտարների աչքում։ Վերջին երկու-երեք տարվա ընթացքում, հինգ Աթոռների Գահակալներ այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին, իրենց իսկ աչքերով տեսնելով ոչ միայն հայ ժողովրդի

Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետը հայ ժողովրդի, Հայաստանյայց Եկեղեցու և Ս. Էջմիածնի անունով բարի գալստյան սրտառուչ խոսք է ասում Հյուրերին.

«Այսօր է զոր արար Տէր, եկայք զնծասցուք ի սմա»։

Սիրելյա՛լ Եղբայրներ Մեր ի Քրիստոս, Ձերդ Սրբություն Ալեքսի Պատրիարք Համայն Ռուսիոյ և Ձերդ Սրբություն Եփրեմ Պատրիարք-Կաթողիկոս Վրաստանի։

Աղմոսերգուի սուրբ սրտով, Մենք բարի գալուստ կմաղթենք Ձերդ Սրբությանց ի Ս.

էջմիածին՝ բազմադարյան սուրբ հավատի կեդրոնը հայ ժողովուրդի: Պայծառ սրտով և ջերմ հոգիով ուրախ եմ այս պահուս, ինչպես պայծառ է մեր երկրի երկինքը այսօր, ու ինչպես ջերմ է ոսկի արևը Հայաստանի: Ս. էջմիածնի գանգերը այսօր ցնծությամբ կավետեն հավատացյալ հայ ժողովուրդին և համայն քրիստոնյա աշխարհին՝ մեր Երեք պատմական Ս. եկեղեցիներու Պետերու հանդիպումը այստեղ՝ Քրկչի Իջման Ս. Տաճարին մեջ: Մեր եկեղեցիներու քրիստոնեական սիրո և եղբայրության պատմությունը շատ հինեն կուգա մեզի, իբրև սրբազան ժառանգություն մը: Հայաստանյայց եկեղեցին միշտ ջերմությամբ և անկեղծ սիրով իր սիրտը բացեր է Ռուս Պրավոսլավ և Վրացական քույր եկեղեցիներուն: Այսօր մեզի համար պատմական օր մըն է, որովհետև անգամ մը ևս կշնչվի մեր սուրբ, անբակտելի եղբայրությունը: Թող Աստված ծաղկեցնե և զորացնե մեր Ս. եկեղեցիները՝ ի փառս Քրիստոսի եկեղեցվո և ի մխիթարություն մեր հավատացյալ ժողովուրդներուն: Սեր Եկեղեցիներու պատմական բարեկամությունը խորհրդանիշ է նաև մեր ժողովուրդներու բարեկամության՝ ռուս, վրացի և հայ ժողովուրդներու բարեկամության: Մենք այս Ս. Տաճարի Սեղանի առջև միշտ կաղոթենք առ Աստված վասն սիրո ամրապնդման մեր ժողովուրդներու և վասն անոնց երջանկության: Այս պահուս, երբ Ս. Տաճարիս զանգակները ցնծագին կենչեն, անոնք կավետեն ռուս, վրացի և հայ ժողովուրդներու եղբայրության ավետիսը: Մեր եկեղեցիներու գործակցությունը առավել ևս զարգացավ, և փոխադարձ սերը առավել աճեցավ մեր շրջանին. մանավանդ խաղաղության անունով մղված պայքարի նանապարհին վրա: Երեք եկեղեցիները՝ Ռուս Պրավոսլավ մեծ եկեղեցին, Վրացական Պրավոսլավ եկեղեցին և Հայաստանյայց Առաքելական եկեղեցին իրարու մոտեցան և սերտ գործակցությամբ մը հառաջ տարին իրենց աշխատանքը՝ ամրապրելու համար խաղաղությունը ամբողջ աշխարհի մեջ: Այդ աշխատանքը մենք հառաջ կտանինք և կծավայենք ավետարանական ոգիով և մարդասիրական ու հայրենասիրական գիտակցությամբ:

Թող Աստված ուժ և կորով պարգևե մեզ բոլորիս, որպեսզի մեր այս սուրբ առաքելությունը կարողանանք շարունակել մինչև վերջնական ապահովումը խաղաղության համայն աշխարհի մեջ:

Սիրեցյա՛լ եղբայր Մեր, Ձերդ Սրբություն Ալեքսի, այս մտածումներով և այս զգացումներով, անգամ մը ևս ջերմապես Ձեզ կմաղթենք բարի գալուստ Ս. էջմիածին և Հայաստան աշխարհ: Ձեզ երկա՜ր. կյանք հաջառողջությամբ և երջանիկ հովվապետությամբ: Միշտ ուրախ բլլամ և միշտ լույս բաշխեմ Ձեր ժողովուրդին: Ձեր լուսավոր բարի ժպիտը ժպիտն է ռուս ժողովուրդին: Ռուս ժողովուրդի ժպիտը ուրախությունն է հայ ժողովուրդին:

Կեցցե՜ն Ալեքսի Պատրիարքը և Ռուս Պրավոսլավ մեծ և Սուրբ Եկեղեցին:

Երկա՜ր և արևաշատ կյանք նաև Ձեզ, սիրելի՛ եղբայր Մեր Եփրեմ: Թող զորանա և ծաղկի Վրացական Ս. եկեղեցին և Դուք խաղաղությամբ հովվեք Ձեր ժողովուրդը:

Կեցցե՜ն Եփրեմ Կաթողիկոսը և Վրաց եղբայրական ժողովուրդը»:

Վեհափառ Հայրապետի այս հուզիչ խոսքերից հետո, Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիրաք Նորին Սրբություն Ալեքսին Իր պատասխան խոսքն է ասում, խորին շնորհակալություն հայտնելով այնքան ջերմ խոսքերի և սիրալիր ընդունելության համար.

«Մենք սիրո և ցնծության զգացումներով այցելում ենք Ս. էջմիածին և ուրախ ենք տեսնելով այսքան շատ հոգևոր դեմքեր, այդ թվում նաև մատաղ սերունդը՝ Ձեր սաները, որոնք այս հոյակապ Մայրավանքի հինավուրց կամարների տակ, հոգիպես ու մարմնապես աճելով, ապագայում պիտի նվիրվեն հոգևոր կյանքի, ծառայելով Ձեր եկեղեցուն ու Ձեր ժողովրդի հոգևոր կարիքներին:

Մենք ուրախանում ենք, որ հավատավոր ժողովրդի հոծ բազմություն ենք տեսնում այս Ս. Տաճարում:

Մենք, Ռուս Պրավոսլավ եկեղեցու և Մեր անունից, ողջունում ենք հնադարյան այս հայկական Տաճարը, եղբայրական սիրով հայցում ենք Տիրոջ օրհնությունը հավատացյալ հայ ժողովրդի վրա: Աղոթում ենք վասն խաղաղության ամենայն աշխարհի: Ձեր եկեղեցին ամբողջ սրտով նույնպես աղոթում է խաղաղության համար ամբողջ աշխարհում: Մեր միատեղ աղոթքը անտարակույս կհասնի երկինք առ Աստված, և Տիրը կուղարկի մեզ այն, ինչ մենք խնդրում ենք, հատկապես կայուն և հարատև խաղաղություն, առանց որի հնարավոր չի լինի իրագործել բարի նպատակները:

Մենք հայցում ենք Աստուծո օրհնությունը հավատացյալ հայ ժողովրդի վրա, որը մի կողմից այսպիսի ջերմ սիրով կապված է իր սրբություններին և մյուս կողմից աշխատում է իր Հայրենիքի բարկեցության և բարգավաճման համար:

Մենք աստեղ, Ս. էջմիածնում մեծ սիրո և ուշադրության ենք արժանանում Հայ Եկեղեցու մեծ ներկայացուցչի, Ծայրագույն Պատրիարքի և Կաթողիկոսի կողմից: Մենք մեր սերը հայտնելով, եղբայրական սիրով

ԹՈՒՍԱՑ ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԸ (աջից) ԵՎ ՎՐԱՑ ՆՓՐԵՄ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

ողջագուրում ենք և ցանկանում ենք Ձեզ երկար տարիներ, երիտասարդ Պատրիարք Կաթողիկոսիդ, որ մեզ բոլորիս վերապրեցնում էք Ձեր եկեղեցու փառքով:

Մենք ողջունում ենք և Ձեր հոգևոր դասին, որն այնքան սիրով դիմավորեց և ուղեկցեց Մեզ, և հավատացած ենք, չնայած որոշ վարդապետական հարցերում տարբերվում ենք իրարից, բայց և այնպես մեր աղոթքները կհասնեն երկինք և կարժանանան Տիրոջ ուշադրությանն ու ողորմությանը:

Ռուս Ուղղափառ եկեղեցին իր հատուկ սերն ու ուշադրությունն է ցուցաբերում ճնադարյան Հայ եկեղեցու և հայ ժողովրդի հանդեպ: Մեր հոգևոր այս հանդիպումը ապացույց կհանդիսանա այդ սքանչելի սիրո կապին: Այս փոխադարձ այցելությունը Մեզ տալիս է անսահման ուրախություն:

Թող Տերը օրհնի մեր այսօրվա եղբայրական հանդիպումը: Չնայած այն բանին, որ մենք ապրում ենք տարբեր վայրերում, բայց և այնպես թող այս սերը հարատև դառնա:

Մի անգամ ևս Մեր խորին շնորհակալությունը հայտնելով Ձեր սիրալիր ընդունելության համար, մաղթում ենք Ձեզ բոլորիդ քաջառողջություն և Ձեր հոգևոր գործոց լիակատար հաջողություն: Ամեն»:

Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի խոսքից հետո, խոսք է առնում Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Եփրեմ Բ-ը, որը նույնպես խորին շնորհակալություն է հայտնում հրավերի և սիրալիր ընդունելության համար, և ապա խոսում է մեր երկու քույր եկեղեցիների դարավոր բարեկամության և մեր երկու բախտակից ժողովուրդների հարևանության և համագործակցության մասին.

«Հայ և վրաց ժողովուրդների անցյալի պատմությունը շատ է նման: Անցյալում ինչպես դժբախտ են եղել մեր եկեղեցիները, նույն այդ պատմությունը կրկնվել է նաև բախտակից մեր երկու փոքր ժողովուրդների համար:

Ձերդ Ս. Օծություն, եթե Դուք ունեք Ս. Էջմիածինը, որով իրավամբ հպարտանում է ամբողջ հայ հավատացյալ ժողովուրդը, ապա մենք ևս ունենք մեր Ս. Մծխեթան, որը մեր Ս. Էջմիածինն է Վրաստանի հողի վրա, որովհետև Ս. Մծխեթան էլ անցյալում ապրել է նույն իդեալներով, ինչ իդեալներ ունեցել է այս սուրբ Մայրավանքը՝ ի խնդիր իր ժողովրդի հոգևոր բարոյական դաստիարակության:

Դարերի խորից է գալիս հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը: Հայ և վրաց ժողովուրդների լավագույն զավակները իրենց կյանքն են զոհել միասին՝ մեր երկու Հայրենիքների համար: Այսօր, երբ աշխարհը իրապես պետք ունի կայուն և երկարատև խաղաղության, Վրաց եկեղեցին ևս կանգնած է խաղաղության պաշտպանության առաջին դիրքերում և միշտ աղոթող է, որպեսզի խաղաղությունը թագավորի մարդկանց հոգիների մեջ և այն ժամանակ հավատում ենք, թե իրական խաղաղություն կլինի, որի մեջ մեր եկեղեցիները և մեր ժողովուրդները կարող կլինեն առաջադիմելու՝ ի փառս Աստուծո և մեր երկրների:

Թույլ տվեք մի անգամ ևս քրիստոնեական սիրով ողջագուրվել Ձերդ Սրբության հետ և շնորհակալություն հայտնել այն ամենի համար, որ Ձերդ Սրբությունը և Ձեզ հետ միասին Ձեր Աթոռի գինվորյալ միաբանությունը ցուցաբերեց Մեր և Մեզ ուղեկցող անձանց նկատմամբ:

Պիտի աղոթեմ, որ Մեր այս հանդիպումով է՛լ ավելի սերտանան մեր բարի դրացիական հարաբերությունները: Աղոթենք այս Սրբազան Տաճարի մեջ, որ տիեզերքի ամենակարող Արարիչը օգնական ու պահապան լինի մեզ բոլորիս: Ամեն»:

Ապա Մայր Տաճարում պաշտվեց երեկոյան ժամերգությունը։

Ռուսաց և Վրաց Սրբազան Պատրիարքները բազմել են իրենց համար պատրաստված հայրապետական աթոռների վրա, Իշման Ս. Սեղանի մոտ, ձախակողմյան դասում։

Ի պատիվ Սրբազան Հյուրերի, ժամերգությունից հետո, Մայր Տաճարի երգեցիկ խումբը, ղեկավարությամբ պր. Հ. Գևորգյանի, տալիս է հոգևոր համերգ՝ Կոմիտասյան և Եկմալյան պատարագներից կտորներ։ Հյուրերին մեծ գոհունակություն են պատճառում Եկմալյանի «Սուրբ Սուրբ»-ը, Կոմիտասյան «Քրիստոս պատարագեալ»-ը, «Տէր ողորմեա»-ն, «Հայր մեր»-ը և ուրիշ երաժշտական կտորներ։

Ապա ի պատիվ Հյուրերի տրվում է ճաշկերույթ, որն անցնում է ջերմ, կրոնաբույր մթնոլորտում։

Երեկոյան, Հյուրերի մի մասը, առաջնորդությամբ Վրաստանի հայոց թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանի և Մայր Աթոռի դիվանապետ պր. Հայկ Առաքելյանի, Երևանի Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում ներկա է լինում Զարուհի Դոլուխանյանի համերգին։

Հոկտեմբերի 27-ի ուրբաթ առավոտյան, հյուրերը դիտում են մեր մայրաքաղաքի տեսարժան վայրերը։

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, Երևանի «Հայաստան» հյուրանոցում, փոխայցելություն է տալիս երկու Պատրիարքներին և այդ առթիվ նրանց հետևորդներին հանձնում հուշանվերներ։

Մեծապատիվ Հյուրերը ցանկություն են հայտնում այցելություն տալ Հայաստանի կառավարության նախագահին։

Ժամը 1-ին, կառավարական տանը, Վեհափառ Հայրապետին, Ալեքսի Պատրիարքին և Եփրեմ Կաթողիկոսին ընդունում է Հայաստանի Մինիստրների Սովետի մեծարգո նախագահ պր. Ա. Ե. Քոչինյանը։ Ընդունելությանը ներկա են լինում նաև Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը և նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը։ Ընդունելությունը անցնում է ջերմ մթնոլորտում։ Վերջում Սրբազան Պատրիարքները իրենց գնահատանքն ու խորին շնորհակալությունն են հայտնում Մեծարգո նախագահին և լավագույն տպավորություններով բաժանվում նրանից։

Ժամը 2-ին, երեք Հովվապետները իրենց ուղեկիցներով մայրաքաղաքից ժամանեցին Մայր Աթոռ, և մի փոքր հանգստից հետո դիտեցին Մայր Տաճարի սրբություններ և եկեղեցական արվեստի նմուշները։

Ժամը 3-ին Հոգևոր Ժեմարանի սրահում տեղի ունեցավ ողջերթի պաշտոնական ճաշկերույթ, որին, բացի հյուրերից, ներկա էին նաև Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը և նրա տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները, վանքի պաշտոնեությունը և Երևանից եկած հյուրեր։

Ճաշկերույթն անցավ մտերմական մթնոլորտում և արտասանվեցին բաժակաճառեր։

Ճաշից հետո Հյուրերը առաջնորդվեցին նորից Վեհարան՝ հրաժեշտ առնելու Մայր Աթոռից, Վեհափառ Հայրապետից և միաբանությունից։

Ապա ողջերթի մասնակիցների շարասյունը ուղղվում է դեպի Երևանի օդանավակայանը։

Հյուրերին ճանապարհում է Վեհափառ Հայրապետը։

Մի վերջին անգամ երեք Հայրապետները ողջագուրվում են՝ ի նշան մեր երեք քույր եկեղեցիների հարատև բարեկամության։

Հյուրերին ճանապարհում են նաև Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ մեծարգո պր. Ս. Գասպարյանը, Մայր Աթոռի միաբանության անդամները, Գերագույն Հոգևոր խորհրդի պատվարժան անդամները և օդանավակայանում հավաքված հավատացյալներ։

Տեղական ժամանակով ժամը 6-ին ինքնաթիռը կտրվում է Հայաստանի Մայր Հողից, տանելով իր հետ մեր երկու հարևան ժողովուրդների՝ Ռուսական և Վրացական Ուղղափառ Եկեղեցիների Սրբազան Պետերին իրենց ուղեկիցներով։

Թարի՜ ճանապարհ մեր թանկագին Հյուրերին։

ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ԴԻՊԼՈՄԱՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԵՍ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

1959—1960 ուսումնական տարվա վերջավորության, Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժնից շրջանավարտ եղան բարեշնորհ 5 սարկավագներ՝ Խորեն սարկավագ Պալյանը, Պետրոս սարկավագ Պերպերյանը, Հակոբ սարկավագ Գարաճյանը, Սարգիս սարկավագ Սարգսյանը և Հակոբ սարկավագ Պոզապալյանը։

Հաջողությամբ ավարտելով Հոգևոր Ճեմարանի վեցամյա դասընթացը, Մայր Աթոռի ուսանող սարկավագները, 1960 թվականի մայիսի 11—12-ին, հանձնեցին իրենց կուրսային քննությունները և ապա, հունիս ամսվա ընթացքում, հաջողությամբ անցկացրին իրենց ավարտական 4 քննությունները հետևյալ առարկաներից. Ներածություն և մեկնաբանություն Ս. Գրոց, աստվածաբանություն, հայ եկեղեցական մատենագրություն, հայ ժողովրդի պատմություն։

Ըստ Հոգևոր Ճեմարանի ծրագրի, այն շրջանավարտները, որոնք հաջողությամբ կհանձնեն իրենց ավարտական քննությունները, ներկայացնում են նաև վերատեսչության կողմից հանձնարարված աստվածաբանական, եկեղեցագիտական կամ պատմաբանական որևէ թեմայի շուրջը դիպլոմային աշխատանք՝ 40—50 մեքենագրված էջերի ծավալով, մինչև նույն տարվա հոկտեմբերի 1-ը։

Այս տարվա շրջանավարտ սարկավագները ևս, հուլիս ամսվա մեջ, ընտրեցին վերատեսչության կողմից ներկայացված թեմաներից մեկը, ըստ իրենց նախասիրության, և երկու ամսվա աշխատանքից հետո, հոկտեմբերի սկզբին ներկայացրին իրենց դիպլոմային աշխատանքները։

Խորեն սարկավագ Պալյանը ընտրել էր «Սիմեոն կաթողիկոս Երևանցի, կյանքն ու գրական գործունեությունը» թեման։

Պետրոս սարկավագ Պերպերյանը ընտրել էր «Կոմիտաս վարդապետը և մեր եկեղեցական երաժշտությունը» թեման։

Հակոբ սարկավագ Գարաճյանը ընտրել էր «Տաթևի դպրոցի դերը մեր եկեղեցական և մշակութային պատմության մեջ» թեման։

Սարգիս սարկավագ Սարգսյանը ընտրել էր «Արմաշի դպրեվանքը և նրա դերը մեր նոքագույն եկեղեցական պատմության մեջ» թեման։

Հակոբ սարկավագ Պոզապալյանը ընտրել էր «Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, կյանքն ու մատենագրական վաստակը» թեման։

Այս տարի, շրջանավարտ սարկավագների դիպլոմային աշխատանքները, վերատեսչի բացակայության, ղեկավարել էր Հոգևոր Ճեմարանի դասախոս և «Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Արթուն Հատիտյանը։

Հոկտեմբերին, վերատեսչի նախագահության տակ, կազմված քննիչ հանձնաժողո-

վը, որի կազմում էին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը՝ ի դիմաց Գերագույն Հոգևոր Խորհրդի, վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբբահամյանը՝ ի պաշտոնե որպես վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի և նախագահ, դասախոսներից Հմայակ Հարությունյանը, Արթուն Հատիտյանը, Պարգև Շահբազյանը, Եղիշե Վարդերեսյանը, Գրիգոր Կյուլյանը և Հրանտ Գևորգյանը, հանգամանորեն ծանոթանալով ներկայացված դիպլոմային աշխատանքներին, հոկտեմբերի 15-ի իր վերջին նիստում, հրապարակային բանավոր պաշտպանության և դիպլոմի արժանի է գտնում ներկայացված 5 աշխատություններ-

Հանդեսը բացվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով։ Ապա Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսը, խնամքով գրված իր զեկույցում, խոսում է շրջանավարտ սարկավագների դիպլոմային աշխատանքների պաշտպանության կարգի և քննիչ հանձնաժողովի եզրակացությունների մասին։ Ապա, ըստ արվագության, վերատեսուչ սրբազանը հրավիրում է շրջանավարտներին՝ հանդես գալ իրենց ներկայացրած դիպլոմային աշխատանքների պաշտպանությամբ։

Վերատեսչի գլխավորությամբ, քննիչ հանձնաժողովը վարում էր նաև դիպլոմների բանավոր պաշտպանությունը։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՍՐԲԱԶԱՆԸ, ՍԱՀԱԿ, ԵՂՆԻԿ ՍՐԲԱԶԱՆՆԵՐԸ, ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՎ Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ՀԵՏ

ը, պաշտպանության օր նշանակելով նոյեմբերի 10-ը՝ հինգշաբթի։

Առավոտյան ժամը 11-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում, տեղի է ունենում այս տարվա շրջանավարտ հինգ սարկավագների դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանությունը։

Հանդիսության ներկա էին Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը; վանքի պաշտոնեությունը և մասնավոր հրավիրյալներ։

Դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանության առաջին մասում յուրաքանչյուրը ներկայացնում էր նախ իր աշխատանքի ընդհանուր ծրագիրը, բովանդակությունը և ապա պատասխանում քննիչ հանձնաժողովի և ներկաներից ոմանց հարցերին, որոնք կապ ունեին նրանց դիպլոմային աշխատանքների հետ։

Շրջանավարտ սարկավագները հաջողությամբ պաշտպանեցին նաև իրենց դիպլոմային աշխատանքները։

Հոգևոր Ճեմարանի շրջանավարտ հինգ սարկավագների հետ միասին, նույն օրը, իրենց դիպլոմները պաշտպանեցին նաև Մայր Աթոռի միաբան և ոչ ուսանող բարեշնորհ Վարդան սարկավագ Շամլյանը և

Հովհաննես սարկավագ Եղիայանը, որոնք Վեհափառ Հայրապետի կողմից, մշակված ծրագրի համաձայն, հանձնել էին մասնագիտական 8 առարկաներից քննություններ քննիչ հանձնաժողովի առաջ, և ապա ներկայացրել իրենց գրավոր դիպլոմային աշխատանքները։

Հովհաննես սարկավագ Եղիայանը ընտրել էր հետևյալ թեման. «Աստվածաբանական մտքի զարգացումը Ա—Ե դարերում, երեք տիեզերական ժողովների բանաձևերի լույսի տակ»։

Նոյեմբերի 14-ին, երեկուշաբթի, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ վերոհիշյալ հինգ շրջանավարտ սարկավագների վկայականների բաշխման հանդիսությունը։

Հանդեսն սկսվեց «Որք զարդարեցին» Թարգմանչաց շարականով։ Ապա հանդես եկավ Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը իր «Հուսկ բանք»-ով.



ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԿԱՅԱԳԻՐ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆԸ

Վարդան սարկավագ Շամլյանի նյութն էր «Վարդապետական աստիճանները Հայաստանյայց եկեղեցվո մեջ»։

Այս երկու սարկավագները նույնպես հաջող պաշտպանեցին իրենց դիպլոմային աշխատանքները։

Վերջում վերատեսուչ սրբազանը հրապարակեց դիպլոմային աշխատանքների վերաբերյալ քննիչ հանձնաժողովի դիտողությունները և ապա գնահատականները։

«Վեհափա՛ռ Տեր, սրբազա՛ն եղբայրներ, հոգեշնո՛րհ հայրեր, հարգելի՛ ներկաներ և ուսանողնե՛ր։

«Հայր, հասեալ է ժամ, փառաւորեա զՈրդի քո, զի և Որդի քո փառաւորեսցէ զքեզ» (Հովհ. ԺԷ 1)։

Այս բնաբանը իր հոգևոր իմաստով կպատշաճի այս խորհրդավոր պահին, երբ հինգ շրջանավարտ սարկավագներ և Մայր Աթոռի միաբան երկու սարկավագներ, ավելի մոտեցած իրենց կոչման. ծնրադիր

կհայցեն Վեհափառ Հայրապետի օրհնությունը և պատգամը, իրենց նոր և ավելի պատասխանատու գործունեության սեմին։

Ցոքն էր Թիվը նաև այն սարկավագներուն, որոնք Ս. Ստեփանոսի գլխավորությամբ, ընտրվեցան ծառայելու Աստուծո և ժողովուրդի սեղաններուն։ Ցոքն են նաև մեր սարկավագները, որոնք կմատենան Մայր Աթոռի, հայ ժողովուրդի և Հայրենիքի ծառայության սեղաններուն։

Գիտեմ, որ անոնք աննկուն կամքով մը միշտ քաշած են գեպի առաջ, գեպի իրենց կոչման սահմանին՝ հասնելու համար իրենց առաջադրած նպատակին։

Այս սրբազան վառարանը, որուն շուրջ դուք, սիրելի՝ սարկավագներ, բոլորվեցաք տաքնալու և լուսավորվելու մոտ վեց տարիներ, և այն մեծ ուխտը, զոր դուք կատարեցիք քանի մը տարիներ առաջ Մայր Տաճարի սրբազան կամարներուն տակ, անկասկած ճշտեցին ձեր կյանքի ուղղությունն ու նպատակը դեպի Աստուծո և Անոր ժողովուրդի հոգևոր ծառայությունը։ Դուք, իբրև ճշմարիտ ուխտապահներ, վստահ եմ, թե ասկե հետո մանավանդ, և՛ս առավել պիտի գիտակցիք ձեր կոչման նվիրվածությունը, հասկնալու համար գեղեցկությունը այն մեծ ուխտին, որուն դուք կոչվեցաք։

Ամենքդ ալ ծնած և սնած և ձեր մանկությունը անցուցած եք օտար հողերու, օտար արևներու տակ։ Պանդուխտի կյանքը տաժանք մըն է։ Իսկ դուք, մեր Հայրենի հողին վրա, մեր պայծառ արևին ներքև հոգիով աճած, մարմնով գեղեցկացած, բախտավոր կզգաք իրավամբ։

Սիրելի՝ սարկավագ ուսանողներ, դուք Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի ուխտի զավակներն եք, սրբազան ուխտով մը կապված՝ ծառայելու մեր Ս. Եկեղեցիին, մեր սիրելի ժողովուրդին և մեր շենշող Հայրենիքին։ Վա՜յ այն մարդուն, որ կդավաճանե իր խղճի ձայնին, իր կաթին ու իր հողին։ Այդպիսին արդեն ուրվական մըն է և անեպատակ շրջուն մեռյալ մը։

Հոգևոր Ճեմարանեն այսօր կստանաք ձեր վկայականները։ Կարևոր չէ, թե ի՞նչ է գրված այնտեղ։ Մեզ բոլորիս կհետաքրքրե այն մեծ ոգին, որ կա այդ թուղթին մեջ, այն խորհուրդն ու պատգամը, որ կզոդե մեր անցյալը ներկային և ներկան ապագային, և պիտի ըլլա ձեր կյանքի պայծառ ուղենիշը։

Եթե պահ մը փակեք ձեր աչքերը, հոգեկան սավառնումով մը անցնիք մեր Ազգի ամբողջ պատմության վրայեն, պիտի տեսնեք, թե ինչպիսի դեմքեր եկեր-անցեր են առանց վկայագրերու և ի՞նչ տեսակ լուսաշող ուղիներ են հարդարեր մեզ համար։ Երախտապարտ ենք ազգային, անոնց անվկայագիր հոգիներուն, որոնց պայծառ վկայականը սակայն անոնց սուրբ անունը և գործն է եղած։

Ահա այս մտածումով է, որ ես ալ այսօր ձեզ հետ կդիմեմ մեր սիրելի Վեհափառ Հայրապետին, ըսելով. «Հայր, փառաւորեա զորդիս քո, զի և նոքա փառաւորեսցեն զքեզ բանիւք, գործովք և ընթացիւք»։

Որպես շրջանավարտներ կհեռանաք Հոգևոր Ճեմարանի գրասեղաններեն, բայց երբեք պիտի չհեռանաք ձեր գիտության գրասեղաններեն։ Թող երբե՛ք գրիչը չիյնա ձեր մատներեն ու գիրքը չհեռանա ձեր տչքերեն։ Հիշեցե՛ք միշտ ջերմությամբ և երախտապարտ զգացումներով այս սրբազան հարկը, որ ձեր պատանեկության օրրանը եղավ և ձեր մտքին ու հոգիին մասուրը։

Կվերջացնեմ խոսքերս, իմ սիրելի՝ սարկավագ ուսանողներ, մեր Շնորհալի Հայրապետի աստվածային իմաստության ուղղած աղոթքով. «Իմաստութիւն Հոր Ցիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել և գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից և ի գործոց փրկեա զիս. և ողորմեա՝ քո արարածոց և ինձ բազմամեղիս։ Ամեն։

Ապա, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, հոգեշահ խրատականով շրջանավարտ սարկավագներին շնորհավորեց նաև գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Հետո կատարվեց վկայականների բաշխումը, ընդհանուր խանդավառության և ծափերի մեջ։ Շրջանավարտնե-րից յուրաքանչյուրը հուզումով մոտենում էր Հայրապետին և երկյուղած աչահամբույրով ստանում կարմիր ժապավենով փաթաթված իր վկայականը։ Վեհափառ Հայրապետը, վկայականների հետ, յուրաքանչյուր շրջանավարտի նվիրեց նաև ձեռքի գեղեցիկ ժամացույց, իսկ վերատեսուչ սրբազան հայրը՝ գրաբար Աստվածաշունչ։

Բարեշնորհ Հովհաննես և Վարդան սարկավագները ևս Վեհափառ Հայրապետից ստացան մասնավոր վկայականներ, համանման նվերներով։

Հանուն շրջանավարտ սարկավագների, բարեշնորհ Խորեն սարկավագ Պալյանը կարդաց երախտագիտական և շնորհակալական հետևյալ ուղերձը.

«Այսօր Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը երկրորդ անգամ է պտղաբերվում Ձերդ Վեհափառության գահակալությունից հետո, ուրախություն և մխիթարություն պատճառելով հավատացյալ հայ ժողովրդին, և մանավանդ Ձերդ Ս. Օծության։

Վեց տարի շարունակ Ձերդ Վեհափառութեան հայրական հոգածութիւնը և խնամքը վայելելով և Ձեր շնչի տակ աճելով, ավարտեցինք Հոգևոր Ճեմարանի դասընթացը, և այսօր, այս հանդիսավոր պահին, հուզումով հրաժեշտ ենք տալիս կրթական և կրոնական այս նվիրական հաստատութեան։

Սիրելի՛ Վեհափառ Տեր, կանգնած ենք ահա Ձեր առաջ, Հոգևոր Ճեմարանի ավարտականները մեր ձեռքին, մեր նոր կյանքի սուրբ գործունեութեան սեմին, հայցելով Ձեր օրհնությունը։

Այսօրվանից մեր առջև բացվում է մեր Ս. Եկեղեցուն և մեր ժողովրդին ծառայելու գործի նախադուռը։ Մի անգամ ևս ուխտում ենք մտնել ծառայության այդ անդաստանից ներս, Ձեր ցուցմունքներով։

Վեհափառ Տե՛ր, մեր նկատմամբ Ձեր ցուցաբերած անսահման հոգածութեանց հատուցումը պիտի լինի մեր ապագա գործունեությունը՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ծառայության, հայ կյանքի և հայ մշակույթի պահպանման և բարգավաճման ջրածում։

Վեհափառ Տե՛ր, ընդունեցե՛ք շրջանավարտ սարկավագների երախտապարտ սրտերից բխող որդիական շնորհակալություններ։ Մեր կյանքի այս խորհրդավոր և խոստումնալից պահին, վերանորոգում ենք մեր սրբազան ուխտը, մեր Եկեղեցուն և մեր ժողովրդին հավատարմորեն ծառայելու մեր ուխտը։

Խորին շնորհակալություններ նաև մեր սիրելի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանին և վերացակու Տ. Հովհաննես հոր, նույնքան սիրելի մեր դասախոսներին, որոնք տարիների ընթացքում անձանձիր տքնեցին մեզ համար, և ոչ մի ջանք չխնայեցին և չեն խնայում, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը պահելու իր պատշաճ բարձրության վրա։

Ներադիր աղերսում ենք Աստուծո օգնականությունը և Ձեր հայրական սուրբ օրհնությունը մեր ապագա գործունեության ճանապարհի վրա, մաղթելով ի համբույր Ձեր Ս. Աջույնս։

Ապա խոսք առավ Վեհափառ Հայրապետը և տվեց հայրական Իր պատգամը Իր միաբան զավակներին, որոնք այսօրվանից մտնում էին գործնականորեն Մայր Աթոռի ծառայության մեջ, պատասխանատվության ավելի խորունկ զգացումով.

«Ձեզի ճիշտ մեկտեղ, սրբազա՛ն եղբայրներ և ճարգելի՛ ներկաներ, կշնորհավորենք մեր շրջանավարտ սարկավագները, որոնց ճիգը ավարտեցին Հոգևոր Ճեմարանի դասընթացքը, և երկուքը՝ Մայր Աթոռի միաբան սարկավագներ, որոնք նույնպես հաջող քրնությունները տվին և այսօր արժանի եղան մյուսներուն ճիշտ ստանալու վկայականները։

Այս ճանդիսավոր առիթով, Մեր գոհունակության և գնահատանքի խոսքը կուղղենք ձայն Ձեզի, սիրելի՛ վերատեսուչ սրբազան, որ անհանգիստ սիրով ու եռանդով կղեկավարեք մեր սաները, և այսօր մեզի ընծայեցիք այս հինգ սարկավագները, որոնք՝ անգամ մը ևս կուխտեն ծառայել Ս. Եկեղեցին։ Մեր գնահատանքի խոսքը կուղղենք նաև դասախոսական կազմին, մեր հարգելի դասախոսներուն, որոնք Մեզի անձամբ կճանչնան և գիտեն, որ բոլորն ալ նույնքան սիրով ու եռանդով լծված են այս աշխատանքին։ Մեր գոհունակության խոսքը նաև Տ. Հովհաննես քահանային, որ գիշեր և ցերեկ հոգած է անոնց դաստիարակության համար, նույնպես և պաշտոնեության։

Այսօր, սիրելի՛ սարկավագներ, ձեզի համար մեծ օր մըն է ուրախության և արդար հպարտության։ Մեր այս հանդիսը իր արտաքին ձևերուն մեջ՝ շատ համեստ է և զուսպ։ Բայց մեր հոգիի աչքերով կրնանք այստեղ տեսնել ներկայությունը մեր հավատացյալ ժողովուրդին։ Այո՛, մեր ժողովուրդը կերպով մը ներկա է այստեղ և մեզի հետ կուրախանա այսօր։

Արտասանման Մենք հանախ կհիշենք մեր Ճեմարանը և ուսանողությունը, և ամեն անգամ անսանման ուրախության ալիք մը կհոսդեր ունկնդիրներուն սրտերին։ Պարզ հիշատակումը մեր երիտասարդներուն՝ բոլորին սրտերը կլեցներ քաղցր հույզերով և հույսերով։

Այս իրողությունը ձեզի ոչ միայն պիտի ոգևորե, այլ պիտի բորբոքե ձեր սրտերը, որպեսզի դուք անշարժ և հաստատ մնաք ձեր ուխտին վրա, որպեսզի դուք նվիրվիք ծառայելու Հայաստանյայց Եկեղեցիին, Ս. Էջմիածնին և ճայ ժողովուրդին։ Ժողովուրդին ծառայելու այլ կերպեր ալ կան, սակայն Ազգին լավագույն ձևով ծառայելու կերպերին մին հոգևոր ծառայությունն է։ Այն վկայականները, որ կառվին ձեզ, պարզապես ձեր մուտքի տոմսերն են հոգևոր կյանքին մեջ։ Ինչպես Հայկազուն սրբազանը նշեց, այնքան ալ կարևոր չեն ձեր վկայականներու գնահատականները։ ՃԵՄԱՐԻՏ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԿՅԱՆՔԸ, ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԻՏԻ ՏԱՆ ՁԵԶԻ, նայած, թե ինչպե՞ս պիտի ապրիք և գործեք եկեղեցիի փառքին համար։ Հետևաբար, այս օրը ձեզի համար ուխտի օր մըն է, ապագա ձեր նոր կյանքի և աշխատանքի մասին՝ մտածելու, խոսելու, երազելու օր մը։

Կմաղթենք, որ անսասան մնաք ձեր ուխտին վրա, և մինչև ձեր կյանքի վախճանը

աշխատիք հայ ժողովուրդի հոգևոր կյանքին ծինուրյան համար։ Վստահ եմք, որ դուք հոգևոր և իմացական բազում ուրախություններ պիտի վայելեք այս սուրբ հանապարհին վրա։ Սակայն չկարծեք, որ դժվարություններու պիտի չհանդիպիք։ Դժվարություններն զերծ կյանք մը հանախ ուրախություն չի պատճառեր մարդոց։ Մենք կմաղթենք, որ դուք չհանդիպիք ծանր դժվարություններու, իսկ եթե հանդիպիք, դուք ձեր հոգեկան տոկունությամբ և ճարքով հաղթեցեք զանոնք, և ընթանաք միշտ դեպի առաջ, միշտ դեպի վեր, զԱստված և մեր հավատավոր ժողովուրդը ունենալով ձեզ օգնական և ապավեն։

Ի սրտե կմաղթենք, որ միշտ ըլլաք լեցուն Ս. Հոգվո զորությամբ և շնորհներով, որոնք կբաշխվին ձեզի մեր սուրբ սեղաններեն։

Մենք քայլ առ քայլ պիտի հետևինք ձեզի, ձեր կյանքի գործերուն։ Ձեր ուրախությունները Մեր ուրախությունը պիտի ըլլան, ձեր հաջողությունները՝ Մեր հաջողությունը։

«Ողջ լերուք և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ»։ Ամեն։

Վկայականների բաշխման հանդեսի երկրորդ բաժնում գործադրվեց գեղարվեստական ծրագիր, բաղկացած արտասանություններից և խմբերգերից։ Կարպիս Սերայտարյանը (Բ լսարան) հուզումով արտասանեց Հովհաննես Շիրազի «Աչքերիս մեջ գարուն արևս», Հովհաննես Աշճյանը (Ա լսարան)՝ Վահագն Դավթյանի «Հայ ժողովրդին» և Հարություն Մարաշլյանը (Բ դասարան)՝ Ավետիք Իսահակյանի «Հայ ճարտարապետություն» բանաստեղծությունները։

Հոգևոր Ճեմարանի երգչախումբը երգեց «Էջ Միածին ի Հօրէ», «Աշակերտք Քրիստոսի» շարականները, «Ստեփանոս քաղցրիկ տատրակ» տաղը և «Երիտասարդության քայլերգը»։

Երեքանավարտ սարկավագների վկայականների բաշխման հանդեսը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Տերունական աղոթք»-ով։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Մայր Աթոռի 7 ուսումնավարտ սարկավագներին՝ մաղթելով արդյունավետ գործ իրենց հոգևոր կոչման սրբազան ճանապարհի վրա։



ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՈՒԹՍՈՒՆԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՕՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 24-ին, հինգշաբթի, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, նշվեց Կոստանդնուպոլսի պատրիարք ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի ծննդյան 80-ամյակը և ուսուցչական, գրական, հովվական գործունեության 60-ամյակը։

Հանդեսի բացումը կատարեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արրահամյանը, ծանրանալով ծերունազարդ հոբելյար պատրիարքի եկեղեցական բեղուն գործունեության վրա, Արմաշից մինչև Ս. Խաչ։

Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը հանգամանորեն ներկայացրեց Գարեգին պատրիարքի ուսանելի կյանքը և նրա գրական, ուսուցչական և հովվական գործունեությունը։

Հանդիսության ընթացքում արտասանվեցին հոբելյար սրբազանի գրչին պատկանող հատվածներ Նարեկի աշխարհաբար թարգմանությունից, «Տարոնաշունչ»-ից և «Հաշտիշատ» բանաստեղծությունը։ Հոգևոր Ճեմարանի երգչախումբը հանդեսին իր մասնակցությունը բերավ մի շարք երգերի և շարականների կատարմամբ։

Հանդեսի վերջում Վեհափառ Հայրապետը ջերմորեն խոսեց Գարեգին պատրիարքի բարոյական, իմացական մնայուն և ուսանելի արժանիքների մասին և հայրապետական իր օրհնությունը տալով, հորդորեց սրբազանին մատաղ ունենալ որպես ազնիվ եկեղեցականի, մտքի և գրչի մարդու և ժողովրդի ծառայության նվիրված հոգևորականի։

Գարեգին պատրիարքի ծննդյան 80-ամյակին նվիրված հանդես-երեկույթը վերջացավ Վեհափառ Հայրապետի պահպանիչով և խմբովին երգված «Հայր մերս»-ով։

Ճեմարանի վերատեսուչ Տ. Հայկազուն սրբազանը, Ճեմարանի վերատեսչության, ուսուցչական կազմի և ուսանողության անունից հոբելյար պատրիարք սրբազան հոր ուղղեց հետևյալ շնորհավորական հեռագիրը։

«Այսօր, 24 նոյեմբերին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Ս. Էջմիածնի միաբանությունը, ուսուցչական կազմը, պաշտոնեությունը և Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը պատշաճ հանդեսով մը նշեցին Ձերդ Ամենապատվության ծննդյան 80-ամյակը, Ճեմարանի հարկի տակ։

Ջերմապես կմաղթենք Ձեզ երկար կյանք, ի բարգավաճումն և ի միասնություն Հայաստանյայց Եկեղեցվոյ։

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՌՈՒՄԻՆԵՏԵՑ ՀԱՅՏՆԻ ՆԿԱՐԻՉ ՀՐԱՆՏ ԱՎԱԳՅԱՆԸ ՄԱՅՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Վեհափառ Հայրապետի հրավերով սույն թվականի սեպտեմբերի վերջերին Մայր Աթոռ ժամանեց ռումինահայ հայտնի նկարիչ Հրանտ Ավագյանը։

Հոկտեմբերի 27-ին, Երևանում, Արվեստի աշխատողների տանը, կազմակերպվեց հարգելի արվեստագետի առաջին ցուցահանդեսը՝ բաղկացած 50-ից ավելի գեղարվեստական արժեք ներկայացնող նկարներից։

Ցուցահանդեսի բացմանը ներկա էր Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստր Գ. Մարգարյանը։

Նկարչի մասին չերմ խոսքերով հանդես եկան Երևանի Պետական պատկերասրահի տնօրեն Պարսամյանը, Հայաստանի կերպարվեստագետների միության վարչության նախագահ ժողովրդական նկարիչ Մ. Արեղյանը, արվեստի վաստակավոր գործիչ, նկարիչ Խ. Եսայանը։

Վերջում, հարգելի արվեստագետը հանդես գալով, ցուցահանդեսի կազմակերպիչներին և բոլոր ներկաներին ուղղված շնորհակալության չերմ խոսքում ասաց. «Հայաստանը մեզ համար ուխտատեղի է։ Մենք սրբությամբ կմոտենանք անոր յուրաքանչյուր քարին և ծաղկին։ Ինձ հանդեպ ցույց տրված այս մեծարանքը ես կվերադարձնեմ ամբողջությամբ հայ արվեստին և հայ մշակույթին։ Ես իմ ուխտս անկատար պիտի համարեի, եթե Երևանի մեջ չկազմակերպեի այս ցուցահանդեսը և իմ համեստ լուման չնվիրեի հայ արվեստի և մշակույթի վերելքին։

Այնուհետև դահլիճում հավաքվածները մեծ հետաքրքրությամբ ծանոթանում են ռումինահայ արվեստագետի նկարչական ստեղծագործություններին։

Նկարիչ Հրանտ Ավագյանը ծնվել է 1900 թվականին Սիրիայի Հալեպ քաղաքում։ Նախնական կրթությունն ստացել է տեղի Ներսեսյան վարժարանում, ապա հաճախել է Հալեպի գերմանական լիսեն։ 1920 թվականին գաղթել է Ռումինիա և հաստատվել Բալչիկ՝ նկարիչների քաղաքում, ուր ծանոթանում է ռումեն նկարչության և աշակերտում հայտնի նկարիչ ակադեմիկոս Ժան Ստերիադիին։

Ս. ՀՈՎՀԱՆՆԻ

(Նկարիչ՝ Հ. ԱՎԱԳՅԱՆ)



ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՍԵՎԱՆԱ ԿՂԶՈՒՄ

(Նկարիչ՝ Հ. ԱՎԱԳՅԱՆ)

Հարգելի արվեստագետը արդեն տարիների վաստակ ունի։ Անդամ է Ռումինիայի նկարիչների միության։

1922 թվականին կազմակերպում է նկարչական իր առաջին ցուցահանդեսը։ Հաջորդ տարիներին կազմակերպել է նման 12 այլ անհատական ցուցահանդեսներ, արժանանալով բարձր գնահատանքի։

Երեսուն տարի շարունակ Ավագյանը զբաղվել է ռումինական պետական թանգարանների հին նկարների նորոգության գործով։

ԱՐԱՐԱՏ

(Նկարիչ՝ Հ. ԱՎԱԳՅԱՆ)

Հրանտ Ավագյանը ռումինահայ հայտնի ծաղրանկարիչ Ջիկ Տամատյանի հետ վարում է Բուխարեստի Հայ մշակույթի տան նկարչական բաժինը։

Մոսկվայում կազմակերպված ռումինական առաջին նկարչական ցուցահանդեսում Հրանտ Ավագյանի ստեղծագործություններից ցուցադրվել է երկու նկար, որոնք հետո գնվել են պետական նկարչական հավաքածուների համար։

«Մենք գործ ունենք գունանկարչության շատ նուրբ վարպետի հետ։ Փոքր կտավը ու չափը չեն որոշում արվեստի որակը։ Նրա աշխատանքները բովանդակալից են, լիրիկական։ Ավագյանի կերտած դիմանկարները, նատյուրմորտներն ու բնանկարները խոսուն են, գրավիչ։ Եվ այդ աշխատանքները այնպես գեղեցիկ, պարզ ու համեստ են, ինչպես հեղինակի բնավորությունը» («Ճրանան», 29 հոկտեմբերի 1960 թ.)։

Հ. Ավագյանը նկարում է համեստ ծավալով բնանկարներ, նատյուրմորտներ և շատ քիչ դիմանկարներ, նուրբ և զգայուն վարպետությամբ։

Իր արվեստի մասին նրա հետ զրուցելիս հարգելի նկարիչն ասաց. «Նկարչությունը կնկատեմ մարդուն հոգեկան հրճվանք պատ-

ճառող արվեստ մը։ Ինքզինքս լիովին վարձատրված կզգամ, երբ գոհունակության ժպիտ մը տեսնեմ ցուցահանդես այցելողներու դեմքին վրա։ Կշանամ աշխատիլ ազոթքի ջերմությամբ և պարզությամբ, որպեսզի ստեղծագործությունս մատչելի լլլա բոլորին»։

Այժմ Հ. Ավագյանը գտնվում է իր ուժերի ծաղկման և հասունության շրջանում, քաջալերություն ցանկանալով նրան, մաղթում ենք, որ երկար տարիներ ստեղծագործելով, միշտ վառ և ծաղկած պահի դարավոր հայ մշակույթի անդաստանը։

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԵՂՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՆԱՎՈՒՐՅԱՆ

(Սենեղյան ուրսուլամյակի առթիվ)

Այս տարի հունիսին լրացավ Մայր Աթոռի երիցագույն միաբան, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Եղնիկ եպիսկոպոս Աղնավուրյանի ծննդյան 80-ամյակը։

Այս ուրախ առիթով, նոյեմբերի 3-ին, հինգշաբթի երեկոյան Վեհարանի սեղանատանը տրվեց ճաշկերույթ, որի ընթացքում սրբազանին շնորհավորեցին Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և Մայր Աթոռի միաբան հայրերը։

Տ. Եղնիկ սրբազանը ծնվել է 1880 թվականի հունիսի 15-ին, Ալաշկերտի Թոփրակկալե գյուղաքաղաքում, երկրագործի ընտանիքում։

Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի դպրոցում։ 1894 թվականին ընդունվում է Գևորգյան ճեմարանը, որի դասընթացն ավարտելով 1902 թվականին, հրավիրվում է Նոր-Ջուղա՝ ուսուցչության։

1906 թվականին ուսուցչության պաշտոն է ստանձնում Կարսի և Արտահանի հայկական դպրոցներում մինչև 1912 թվականը։ Ապա աշխատում է Լենինականում, Կիրովականում և Երևանում՝ որպես հաշվապահ։

1944 թվականի մարտի 1-ին ձեռնադրվում է վարդապետ, անդամակցելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությանը։ 1945 թվականին նշանակվում է Ս. Գեղարդի (Այրիվանքի) վանահայր։

1954 թվականի սկզբներին նշանակվում է առաջնորդ Բաքվի հայոց թեմի, որի վրա եպիսկոպոսանում է 1955 թվականի հոկտեմբերին։

1955 թվականի աշնան, Ազգային-եկեղեցական ժողովում ընտրվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և հրաժարվելով իր պաշտոնից, նշանակվում է Մայր Տաճարի ժամօրհնող։

Գերաշնորհ Տ. Եղնիկ սրբազանը թեև ծերունազարդ, բայց կայտառ է հոգով և մարմնով և միշտ պատրաստ՝ յուրովսանն ծառայելու Մայր Աթոռին։

Շնորհավորելով հոբելյար սրբազանին, մաղթում ենք նրան խաղաղ ծերություն և երկար տարիներ։

ԵՎՐՈՊԱՅԻ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հոկտեմբերի 2—7-ին, Դանիայի Նուբորգ քաղաքում կայացավ Եվրոպայի քրիստոնեական եկեղեցիների համագումարը։

Համագումարին իրենց մասնակցությունն են բերել Գերմանիայի, Դանիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Ֆինլանդիայի, Հունաստանի, Մեծն Բրիտանիայի, Իտալիայի, Սովետական Միության, Հարավսլավիայի, Կիպրոսի, Ավստրիայի, Նորվեգիայի, Լեհաստանի, Շվեդիայի, Շվեյցարիայի, Չեխոսլովակիայի և Հունգարիայի քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչները։

Համագումարին մասնակցող ավելի քան 200 պատգամավորների թվում ներկա էր նաև եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Վիլյամ Վիսսերտ դը Հուֆտը Ժընևից։

Վեհափառ Հայրապետի հրամանով և Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ, Հայ եկեղեցու կողմից համագումարին ներկա էր Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը։

Հոկտեմբերի 3-ին, երեկոյան ժամը 7-ին, հատուկ աղոթքից հետո սկսվում է համագումարի առաջին նիստը։ Համագումարի նախագահ Դ. Լիլիեն եպիսկոպոսը բացատրում է համագումարի նպատակը և Եվրոպայի քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչներին մաղթում հաջողություն։ Ապա համագումարում ելույթ են ունենում մի շարք եկեղեցիների ներկայացուցիչներ՝ ողջունելով բոլոր ժողովականներին։ Դրանով փակվում է առաջին օրվա նիստը։

Հաջորդ օրը, հոկտեմբերի 4-ին, աղոթքից հետո սկսվում է համագումարի երկրորդ նիստը, որտեղ «Քերխեն ուերլդ» ինստիտուտի դիրեկտոր դոկտ. Վայն Լիվեյնը (Հոլանդիա) կարդում է բովանդակալից զեկուցում՝ «Քրիստոնեական եկեղեցու առաքելության մասին մեր օրերում» թեմայով։

Զեկուցման ընթերցումից հետո ժողովականները բաժանվում են չորս առանձին խմբերի, որոնցից յուրաքանչյուրը քննարկում է համագումարի օրակարգում դրված հարցերից մեկը։ Քննարկման աշխատանքներին մասնակցում է նաև հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը, հանդես գալով ողջույնի խոսքով։

Հոկտեմբերի 5-ի և 6-ի նիստերում կարդացվում և քննարկվում են պրոֆ.-դոկտ. Ժ. Բ. Ժեսլքի (Պրագա) «Եկեղեցու դերը մեր խռովահույզ ժամանակներում» և դոկտ. Ն. Ա. Նիսիոդիսի (Հունաստան) «Եկեղեցիների ծառայությունը միմյանց միջև» զեկուցումները։

Հոկտեմբերի 7-ի առավոտյան նիստին Եվրոպայի քրիստոնեական եկեղեցիների համագումարի ներկայացուցիչներին ողջունում է Դանիայի կրոնական գործերի մինիստրը։

Նույն օրվա եղրափակիչ նիստում կարդացվում են համագումարի յուրաքանչյուր խմբում քննարկվող խնդիրների վերջնական բանաձևերը։ Դրանով էլ ավարտվում են համագումարի աշխատանքները։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ*

Հոգևորականի մը համար դժվար է նույնպես պատմական դեպքերը դիտել այլապես, քան ինչպես դիտեր է զանոնք Եկեղեցին։ Բազմաթիվ այն դարերուն ընթացքին, երբ Հայ Եկեղեցին մոտեն շփում է ունեցեր հայ կյանքի այլազան երևույթներուն հետ, երբեմն իբրև դեպքերուն պարզ մասնակից, երբեմն այ իբրև բուն դերակատար, իր դիրքն է ճշտեր միշտ դեպքերուն ու դեմքերուն հանդեպ, որոնց կողքին գործեր է։ Ադկե՝ ստեղծվեր են հաճախ նախապաշարումներ այս կամ այն անձնավորության նկատմամբ, և շփոթություն՝ պատմական ինչ-ինչ դեպքերու շուրջ, եկեղեցականներ եղած ըլլալով ստվար մասը մեր հին պատմիչներուն, և անոնց երկը՝ հաճախ միակ աղբյուրը տվյալ շրջանի մը համար։

Գարեգին Տրապիզոնցին հայտնած է ավանդության գերին չմնալ հայ անցյալը պատմելու առթիվ իր ընթերցողներուն։ Զուլգ մը հատորները, զորս լույս ընծայեց 1936-ին և 1939-ին՝ «Աշխարհի լույսն ի Հայսա խորագրին ներքև և որոնք կրոնի և պատմության դասեր են լայն իմավերուն ուղղված, առիթներ հաճախ տված են իրեն՝ ավանդության հետ դեմ դիմաց գալու։ Եվ ան կրցած է երբեմն տարբեր աչքով նայիլ անցյալ դեպքերու վրա, և չանալ մեղմել ինչ-ինչ վճիռներ, զորս Հայ Եկեղեցին հետն է բերեր անցյալ դարերեն։

Հայոց պատմությունը անաչառ վերլուծողի մը համար վտանգի գոտի մը մտնել է մոտենալ, օրինակ, Վասակի տիպարին, զոր դարերը մեզ կբերեն սերունդներու ենթադրությունն։ Հորմեհետե հայ պատմագրությունը իր գիտական հունը մտավ ու մարդիկ սկսան նոր օրերու մտայնությամբ դատել երեկը, փլցնելով հին կուռքեր և նորեր դնելով անոնց պատվանդաններուն, փորձեր եղան Վասակի դատը վերաքննելու։ Ոմանք փորձեցին նույնիսկ անպարտ արձակել զայն՝ սրբելով անոր ճակտեն դարերուն թուքը։ Ուրիշներ ավելի զգույշ եղան և մեղմեցին միայն անոր մեղքերը։ Եղան նաև, որ փորձեցին բացատրել անոր սայթաքումները։

Գարեգին Տրապիզոնցին Վասակով ևս կը զբաղի, Վարդանանց պատերազմի մասին խոսած ատեն։ Հայ ժողովուրդի մեծ պայքարին նվիրած իր էջերուն մեջ, որոնք թաթավուն են ամենաչերմ հայրենասիրությամբ, կխղճահարի տեղ-տեղ Վասակը ներկայացնելու իբր հասարակ դավաճան մը, ինչպես զայն կբերեն մեզ կհասցնեն Եղիշեն։

«Փոքրիկ զուգակշիռ մը» խորագիրը կրող հատվածի մը մեջ, խոսելե հետո հայ ժողովուրդի ծոցին մեջ ստեղծված երկու հակամարտ հոսանքներու՝ պարսկամետներու և հունասերներու մասին, դեմ-դիմաց կդնե երկու դեմքերը՝ Վասակ Սյունին և Վարդան Մամիկոնյանը, Հայաստանի մարզպանն ու հայոց սպարապետը, որոնք այդ հոսանքներու կանձնավորեին, ու կըսե.

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի № 11 թ.-ից և ժ.-ից։

«Կարելի է ըսել՝ առանց նախապաշարումի, թե երկուքն ալ հայրենասեր էին։ ...Բայց ծանրության կեդրոնը պիտի մնար միշտ Վարդանի կողմը, անոր ասպետական-դյուցազնական ոգիին մեջ՝ որմե զուրկ էր Վասակ։ Մյուս կողմե Վարդանի մեջ կխոսեր ժողովուրդի ձայնը, նա հարազատ թարգմանն էր իր ցեղին ոգիին։ Վասակ գրեթե անտարբեր էր այդ ձայնին հանդեպ։ Իր ապավենը՝ իր անձնական դատողությունն էր։ Ըստ երևույթին՝ Վասակ ավելի իրատես էր, ըստ էության՝ Վարդան ավելի մոտ էր իրականության։ Հավաքական կամքը ավելի հզոր և անվրիպելի է հաճախ քան անհատական իմաստությունը։ Մամիկոնյանի մեջ կգործեր այդ կամքը, Սիսականի մեջ՝ այս իմաստությունը» («Աշխարհի լույսն ի Հայս», Բ, էջ 173)։

Տալե հետո բոլոր դրվագները դյուցազնամարտին և Սյունյաց իշխանին անփառունակ վախճանը, Գարեգին Տրապիզոնցին դեռ կխղճահարի հասարակ դավաճանի խարանը դրոշմելու Վասակի ճակտին և կըսե.

«Սյունյաց այս իշխանը դժբախտ զոհն էր դուցե ոչ միայն իր ժառանգական բարդ նկարագրին, այլ նաև իրերահայորդ տխուր դեպքերու՝ ներքին, թե արտաքին՝ տարօրինակ դասավորումին։ Փառասեր՝ այլ ո՛չ իսկապես հայրենատյաց, խորագետ՝ այլ ո՛չ բառին խիստ առումով թերևս ազգադավ, նա անկարող եղավ պահ մը իր ըմբոստ միտքը ենթարկել սրտի թելադրություններուն» («Աշխարհի լույսն ի Հայս», Բ, էջ 211)։

Նկատելի է վերապահությունը, զոր ցույց կուտա Պապ թագավորին ակնարկած ատեն.

«Մեր պատմության ամենեն կարևոր անկյունադարձերեն մեկը կկազմե այն թվականը՝ հորում հռոմայեցի դավաճան ձեռք մը վատաբար մխրճվեցավ անմեղ արյունին մեջ մեր լավագույն թագավորներեն մեկուն, սրբապղծելով նվիրականությունը ավանդական ասպնջականության։ Այս թագավորը Պապն էր, անիրավորեն այնքան տխուր գույներով ներկայացված օտար՝ թեև հայացած գրչի մը՝ Փավստոս Բյուզանդացիի կողմե» («Աշխարհի լույսն ի Հայս», Բ, էջ 134)։

Ակնարկելով ձայնավոր հայ տառերու դյուտի հրաշքին, զոր կնկարագրե Կորյուն, Տրապիզոնցին կգրե.

«Ավանդությունը, հայ երախտագետ սրտի այդ կենդանի ցոլքը, ուզեց, որ մարդկային այն լքնաղ աչը աստվածային Աչի բաբ մեղած ըլլա, քունի երազեն և արթնության տեսիլեն գերազանց՝ սրտի գործարանին մեջ երևութացած նոգվո աչքերուն» («Աշխարհի լույսն ի Հայս», էջ 19)։

Եվ այնուամենայնիվ հեղինակը զգուշացած է ավանդության դեմ մաքառելե ամեն կետի մեջ։ Ու իր արդարացումն ունի։ Կարելի չէր ամեն բան խոր վերլուծության ենթարկել երկասիրության մը մեջ, որ գիտական հետազոտության ժողովածու մը հանդիսանալու հավակնությունը չուներ, ուղղված ըլլալով առավելապես լայն խավերուն՝ հայրենասիրական պահեր արթնցնելու համար անոնց հոգիներին ներս։

***

Մեկուսի դիրքը, զոր Հայ Եկեղեցին կգրավե եկեղեցիներու ընտանիքին մեջ, չէր կըրնար ուշադրությանը առարկա չդառնալ եկեղեցիներու պատմությամբ զբաղողներուն, և միևնույն ատեն տարակարծություններ ու վեճեր չստեղծել իր վերապահ կեցվածքը ուրիշ եկեղեցիներու հանդեպ։ Արդարև, հոմսեհետե ան իր գոյությունը և անկախությունը վճռեց պահպանել՝ իր վարդապետության հիմ ընդունելով միայն առաջին երեք տիեզերական ժողովները և կուրծք տալով օրթոդոքս և կաթոլիկ եկեղեցիներու բոլոր փորձերուն՝ իրմե խլելու իր անկախությունը, և իր այս ճիգերու կողքին նաև իր համառությունը՝ անվթար պահելու իր ինքնուրույն դիմագծությունը, Հայ Եկեղեցվո շուրջ ստեղծեցին թյուրիմացությանց, բամբասանքներու և խեղաթյուրումներու ամբողջ ցանց մը։

Օրմանյան, կոթողական երկի մը մեջ, որ «Հայ Եկեղեցին» խորագիրը կկրեր, փորձեց լուսաբանել այդ թյուրիմացությունները և վերջ տալ խեղաթյուրումներուն, պարզելով Հայ Եկեղեցվո վարդապետությունը, ծեսերը և կառուցվածքը և այս կերպով մեկ անգամ ընդմիշտ ճշտելով Հայ Եկեղեցվո տեղը եկեղեցիներու ընտանիքին մեջ և անոր դիրքը դեպի բոլոր մյուս դավանանքները։

Օրմանյանեն առաջ և նաև անկե հետո բոլոր անոնք, որ Հայ Եկեղեցվո պատմությամբ զբաղեր էին, առիթը ունեցեր էին Հայ Եկեղեցվո վարդապետության և անոր շուրջ ստեղծված թյուրիմացություններուն անդրադառնալու ավելի կամ նվազ չափով, բայց Օրմանյան եղավ, որ վերջապես բանաձևեց Հայ Եկեղեցվո ավանդություններն ու տեսակետները, տեսակ մը պաշտոնական ուղեցույց դառնալով Հայ Եկեղեցվո էությամբ շահագրգռվողներուն համար։

Վճիռ ու փաստացի մնալու իր նախանձախնդրության մեջ, Օրմանյան չէր ուզած սակայն տարածվիլ Հայ Եկեղեցվո ազգային ոգին բնորոշած ատեն, և հարևանցի անցած էր ազգային ավանդությանց տեղը ճշտելու առթիվ հայ-քրիստոնեության մեջ, զննությանց ու որոնումներու կույս գետին մը ձգելով այսպես բոլոր անոնց, որոնք պիտի ուզեին խորանալ Հայ Եկեղեցվո ազգային դիմագծությունը հոգեբանական վերլուծումներու ենթարկելու աշխատանքին մեջ։

Գարեգին Տրապիզոնցին առաջիններեն մեկն եղավ, որ փորձեց հայ հոգին փնտռել հայ հավատալիքներուն մեջ, թեև առանց շատ խորանալու ինքն այլ Ընդարձակ գլուխին մեջ, զոր «Աշխարհի լույսն ի Հայս»-ը կհատկացնե Հայ Եկեղեցիին (Ա, էջ 207—232), անոր վարդապետության, ծեսերուն, տոներուն և կազմակերպության, փորձեր կընե ան Հայ Եկեղեցվո ազգային դիմագծությունը ևս ընդգծելու.

«Հայ Եկեղեցին է և պիտի մնա շտեմարանը անհատական և ընկերային— հետևաբար և ընտանեկան և ազգային— առաքինության։ Հայ Եկեղեցին, իբրև բարոյական անձնավորումը ազգին լրության մեջ, մեջն ըլլալով նույնիսկ հարանվանական հատվածները— Հոռոմեականն ու Բողոքականը— և անանուններու «ցրված հոտերը»։

«Ահա թե ինչո՞ւ Հայաստանյայց Եկեղեցին կկոչվի «Ընդհանրական»-ին հետ՝ նաև Ազգային։ Եվ այնքան բնականորեն այս երկու գաղափարական անվանակոչումները ներդաշնակված են իրարու հետ, և կլրացնեն զիրար։ Եվ այս՝ շատ տրամաբանական կերպով մը. ընդհանրական է՝ զի քրիստոնեական է. ազգային է՝ զի հայկական է. քրիստոնեական ոգի և հայեցի տարազ։ Բայց այդ ոգին իսկ անցած է հայ կյանքի պրիսմակեն, ձևացնելով ծիածան մը՝ որ հայ-քրիստոնեական է։ Ազգային կենցաղ մը՝ անհատական, ընտանեկան, ընկերային՝ ավետարանական սկզբունքներու ներգործությամբ հեղաշրջված ու վերականգնված։ Ազգային ոգի մը՝ քրիստոնեական շունչով ընդլայնված ու ընդհանրացած։— Ահա մեր Եկեղեցին։ Մեր Եկեղեցին իր էության խորը» («Աշխարհի լույսն ի Հայս», Ա, էջ 211)։

Ընդհանուր ուրվագծում մըն էր ան՝ հայ ոգի մատնանշելու հայ քրիստոնեության մեջ։ Գարեգին Տրապիզոնցի այդ ոգին ավելի ևս փորձած է ձևավորել՝ Հայաստանյայց Ոսկեդարյան Եկեղեցվո մը տարազին ներքև։ Անոր համար Դ դարը, ուր հայ ժողովուրդը քրիստոնեությունը որդեգրեց և արմատացուց՝ զայն պատվաստելով ազգային վաղնջուց ավանդությանց ավիշով ևս, դեռ Հայ Ազգային Եկեղեցին չէ։ Հայ քրիստոնեությունը պետք է ե դար հասնի, թաթավվի այն մեծ ճիգին մեջ, զոր հայ հոգին փորձեց վերջնական անկախություն գտնելու համար, և ձուլվի լույսի ծարավով բռնկած սերունդի մը հուզումներուն հետ՝ սեփական մշակույթ պարգևելու համար հայ ժողովուրդին։

Որպեսզի հայ քրիստոնեությունը ստեղծվի, անհրաժեշտ էին, այո՛, հոգևոր ավանդությունները, որոնք Լուսավորիչեն առաջ ամբողջ երկուքուկես դար շնչեր էին հայ ժողովուրդին մեջ, անհրաժեշտ էր, այո՛, Լուսավորչի փառավոր դարը, բայց ան դեռ իր վերջնական կերպարանքը պիտի չգտներ առանց Սահակ-Մեսրոպի դարուն։

Հայ Եկեղեցին, կրսե ան, «հետզհետե իր աճումը, վերանորոգումն ու ձևավորումն է ունեցած այն լույսով՝ զոր Պարթև Գրիգոր դուրս բերավ երկուքուկես դարյան գրվածին ներքևեն, և որուն ճառագայթները Սահակ և Մեսրոպ անցուցին հայ սրտին ու մտքին պրիսմակեն՝ Եկեղեցիին տալով ոսկեդարյան նկարագիրն ու արժեքը։

Ոսկեդարը մեր հոգևոր լուսավորության թվականի—Դ դարու—Եկեղեցին օժտեց ազգային նկարագրով մը և ինքնուրույնությամբ մը, որ սակայն չէր նշանակեր երբեք անջատում մը կամ մեկուսացում մը Ընդհանրական Եկեղեցիեն, անոր գաղափարական միությենեն։ Իր ազգային տարազի տակ՝ զոր տվին գիրն ու գրականությունը, հայ կրոնաշունչ մշակույթը, ան՝ Եկեղեցին՝ պահեց իր ընդհանրական խորքը։ Իր նկարագրին զույգ ու անայլայլ գիծերն եղան ընդմիշտ ազգայինն ու ընդհանրականը, և իր բարոյական միասնականությունը գտավ իր արժեքն ու անունը ազգային-ընդհանրական միացյալ գաղափարին պահպանության և աստիճանական զարգացումին մեջ» («Աշխարհի լույսն ի Հայս», Բ, էջ 62)։

Գարեգին Տրապիզոնցի Հայաստանյայց Ոսկեդարյան Եկեղեցվո ոգին կգտնե անոր հառաջդիմական, ազատական, ֆենական, ուսուցողական, առաքելական, թարգմանչական-բացատրական և ընդհանրական, բայց ո՛չ ապազգայնական հատկանիշներուն մեջ։ ու կավարե սակայն, որ դարերը եղած են անոր այս նկարագիրը.

«Հայաստանյայց Ոսկեդարյան Եկեղեցին մեզ կներկայանա այս հատկանիշներով։ Իր կյանքը, գոնե մինչև Շնորհալիի օրերը, եղած է՝ ավելի կամ պակաս չափով՝ արտահայտիչն այդ հատկանիշներուն։ Շնորհալիեն վերջ նվաղում մը՝ պարբերական բացխփիկ լույսերով պլպլուն՝ զգալի է։ Հայաստանյայց Եկեղեցին կամփոփվի պահպանողական սեղմ ցանցի մը մեջ՝ կարծես իր դարավոր ավանդն ու ժառանգությունը կորսընցնելու վարկպարագի սրտադողությենեն։ Իր մեջ զորացած է ինքնապաշտպանության բնազդը՝ տկարացած ըլլալով հառաջդիմական խոյանքը։ Ավետարանը դարձած է ավելի դյուցական պատառներու մեջ գուրգուրանքով ծրարված և եկեղեցվո պահարանին մեջ խնամքով ի պահ դրված ավանդ մը, քան թե հոգևոր շահավաճառության համար գործածված քանքար մը կամ տաղանդ մը։

Բայց ան կկարծե, թե պետք է իր հին օրերու պարզությանը բերել Հայ Եկեղեցին.

«Դառնանք Ոսկեդարյան եկեղեցիին, անոր որդեգրած ավետարանական ոգիին վրա կառուցանելու համար այսօրվան եկեղեցին, մարդկային հոգեբանության և ընդհանուր զարգացման հետ հաշտ, լուրջ ու խղճամիտ, ճարտար ու զգուշավոր վերհպումներով, վերակենդանացնելով և գրավիչ ու ներշնչող ընծայելով անոր հարազատ պատկերը» («Աշխարհի լույսն ի Հայոց», Բ, էջ 65)։

Գարեգին Տրապիզոնցին սխալ կգտնե սակայն նույնությամբ վերադառնալ Ոսկեդարյան Հայ եկեղեցիին։ Ըստ իրեն՝ քարացած գոյացություններ չեն եկեղեցիները, և անոնք ալ պետք է քալեն կյանքին հետ.

«Եկեղեցին գործարանավորյալ կազմակերպություն մըն է՝ որ ունի իր ծնունդը, աճումն ու բարգավաճումը, իր պայքարներն ու ոգորումները, իր նվաճումները, հաղթություններն ու պարտությունները, իր ուժեղացումներն ու տկարացումները։ Այս բոլորը կկատարվին այն զորական—դինամիկ— ներգործությամբ՝ զոր Եկեղեցին կընդունի Ավետարանի պարզ ու վսեմ սկզբունքներեն, այլև բազմապիսի արտաքին ազդակներով» («Աշխարհի լույսն ի Հայոց», Բ, էջ 62)։

Գարեգին Տրապիզոնցիի կարծիքով ուրեմն Հայ Եկեղեցին բարեկարգելու համար ոչ միայն պետք է երթալ հին օրերու պարզությամբ՝ Եկեղեցին ազատելով իր խորթ պաճուճանքներեն, այլ նաև կովան ունենալ ժամանակի ոգին, կյանքը, որ մեր շուրջն է.

«Հարկ է շեշտել աստիճանական զարգացումը՝ ըմբռնելու համար Եկեղեցիին իսկական կյանքն ու դերը մեր կրոնական իրականության մեջ։ Այդ զարգացումը կամ անումը՝ իր բոլոր անխուսափելի հետևանքներով՝ կանգ չէ առած երբեք և չէր կրնար առնել, ցորչափ Եկեղեցին կմնար կենդանի և խոտուն, միշտ շարժման ընդունակ։

Վերադա՞ռձ դեպի Ոսկեդարյան Եկեղեցվո պարզությունը,— ներկա լուսադարու զավակներեն ոմանց նշանաբանն ու կոչն է այս, ըստ երևույթին գուցե հրապուրիչ, որ կարելի չէ ըստ ամենայնի հաշտեցնել հառաջդիմության ոգիին ու պահանջներուն հետ։ Բայց այս վերադարձը,— կրսե Տրապիզոնցին,— պիտի չըլլա երբեք ներկայի լույսը և հառաջդիմական քայլերը ժխտող անցյալի գերագնահատումով։ Հավատքին, վարդապետության, հրամանքի—դոգմա,— պաշտամունքին, ծեսերուն, կազմակերպության պարզությունը՝ որ պատկերը կկազմե Ոսկեդարյան Եկեղեցիին, հիմնական սկզբունքը մնալով մեկտեղ Եկեղեցիի հառաջդիմական բոլոր շարժումներուն, կարելի և ներելի չէ անգիտանալ, թե այդ շարժումները՝ անով իսկ որ հառաջդիմական են՝ իրենց նշանաբան պիտի ունենան նորն ու լավագույնը, ավելի լույսը։ Այնպես որ հավատքին պարզությունն իր կատարելությունը պիտի գտնե գիտակցության խորության մեջ, դավանանքին պարզությունը՝ ընտրողության ազատության մեջ, վարդապետության պարզությունը՝ կարծիքներու և հակակարծիքներու, ինչպես նաև—ինչո՞ւ չէ— լուսատենչ տարակույսներու և հաստատումներու ճանաչողության և իրավունքին մեջ, դոգմաներուն պարզությունը՝ քննության առաջնահերթին մեջ, պաշտամունքի և ծեսերու պարզությունը՝ բարձր բարեպաշտության զգոնության և աստվածային արվեստի խորհրդավորության, շնորհքին ու գեղեցկության մեջ։ Եթե կա բան մը բառնալի, այդ ալ կոշկոռն է հավատալիքներու այն նախապաշարումներուն կամ այն սնահավատություններուն՝ զորս Եկեղեցին ժառանգած է հեթանոսությենեն քրիստոնեական թվականի սկզբին իսկ» («Աշխարհի լույսն ի Հայոց», Բ, էջ 63)։

Այդ «կոշկոռ»-ը սակայն այն կոծիծներեն է, զոր մարդ կարենա մարմնեն անջատել առանց զայն արյունելու։ Նշդրակը երբեմն մարմնեն ալ մաս մը կառնե կտանի...։ Այդ պարագան լավ է, որ նկատի ունենան Հայ Եկեղեցվո բարեկարգությամբ զբաղողները։

***

Որևէ մեկը, որ հայ ժողովուրդի անցյալով կզբաղի, չի կրնար ստորագնահատել դերը, զոր Հայ Եկեղեցին ունեցած է այդ անցյալին մեջ։ Որքան ալ վերապահում դնե ինչ-ինչ շրջաններու և դեպքերու ուրթիվ, երբ այդ դերը այնքան ալ դրական չէ եղած, չի կրնար չհաստատել, որ հայ ժողովուրդի գոյության սատարած է Հայ Եկեղեցին ալ, և հանդիսացած ամենեն տևական գործոններեն մեկը ազգային ինքնապահպանման և երբեմն միակը մեր գերության դարերուն։

Ճառի մը մեջ, զոր 1927-ին խոսած է Մարսիլիա՝ Սահակ-Մեսրոպի տոնին առթիվ, ան կրսե, թե հայ հոգիին մեծ ճիգը կշարունակե անշեջ մնալ դարերուն ընդմեջեն.

«Ո՛չ, Սահակ-Մեսրոպյան ոգին չէ՝ շիջած, և չէր ալ կրնար շիջիլ երբեք, ե դարու մայրամուտով, ոչ ալ հայորդական դարերու նոր արշալույսներով։ Թարգմանչաց դպրոցեն մինչև Սյունյաց վարդապետարանը, մինչև Հաղբատի և Սանահինի մենաստանները, մինչև Նարեկներու մեծափառ ուխտերն ու Կարմիր վանքերը, մինչև Տաթևները, մինչև Մեծ Սեբաստացիին մշակութային զույգ սքանչելի հիմնարկները, Էջմիածնի Ճեմարանը, Երուսաղեմի Ընծայարանը, Արմաշու Դպրեվանքը, մինչև Ներսիսյան վարժարանը, Լազարյան Ճեմարանը, Սանասարյանը, Կեդրոնականը, Գերպերյանը՝ իրենց բոլոր հասակակից ու կրտսեր կրթարաններով, մինչև՝

կրսեմ՝ հայության բովանդակ հին ու նոր լուսախորանները,— մի՞թե ասոնք ամենը գրի գյուտի խորհուրդին լուսաբանությունները չեն» («Աշխարհի լույսն ի Հայս», Բ, էջ 142)։

Դերին մասին, զոր Հայ Եկեղեցին ու իր վարիչները ունեցած են հայ ժողովուրդի քաղաքական կյանքին մեջ, մեր պատմիչները հաճախ համաձայն չեն սակայն։ Տարակարծությունները շեշտված են մանավանդ Դ դարու անցքերուն առթիվ, երբ հաճախ հայ թագավորները և հայ կաթողիկոսները դեմ դիմաց եկած են իրենց ուրույն մտայնությամբ և ուրույն ուղեգծով, հայ ժողովուրդի ամենեն ճակատագրական պահերուն։ Տրապիզոնցին «թագավորական և հայրապետական տուներուն փոխհարաբերության» մասին խոսելով, համաձայն է, որ ժողովուրդներուն բարիք չի բերեր հոգևոր իշխանության ձգտումը՝ իրենց ազդեցության տակ պահելու երկրի մը քաղաքական կյանքը ևս։

«Պատմական-իմաստասիրական վերլուծումը,— կրսե Տրապիզոնցին,— ներկայի լույսով և քննադատորեն մոտենալով անցյալի մեջ աշխարհական և հոգևորական իշխանության փոխհարաբերության և փոխազդեցության հարցին՝ մեղադրելի և վնասակար կգտնե հոգևոր իշխանության գերադասության ձգտումը աշխարհականին վրա։ Մասամբ ճշմարիտ այս դատաստանը՝ ընդհանուր երևույթներու վրա հիմնված՝ ըստ ամենայնի ճիշտ չէ, եթե զայն փոխանցենք մեր պատմության իրողության վրա»։

Տրապիզոնցին ըսել կուզե, թե Հայ Եկեղեցվո պետերը երբեք ալ չեն ունեցած քաղաքական այն հավակնությունները, զորս ունեցած են Պապը Հռոմի և Տիեզերական Պատրիարքը Բյուզանդիոնի մեջ։ Ընդհակառակը, իր կարծիքով, հայոց կաթողիկոսները զորավիդ եղած են հայ պետության, Լուսավորչեն սկսյալ մինչև վերջին Գահակալը անոր տոհմին։

«Տրդատ և Գրիգոր,— կրսե Տրապիզոնցին,— փոխադարձ գործակցության մը սկզբունքին վրա հիմնեցին իրենց իշխանությունն ու հեղինակությունը, պահելով յուրաքանչյուրն իրենին բնորոշ նկարագիրը։ Տեսակ մը զոյակցություն էր այդ՝ հոգևոր և աշխարհիկ իշխանության. զոյակցություն մը՝ որ ճիշտ է թէ չմնաց ընդմիշտ և բոլորովին անխաթար ...Այս ուղղությամբ գործեցին Գրիգոր և Տրդատ, այդ ուղղության հետևեցան Վրթանես և Խոսրով. նույն ուղղությամբ փորձեցին շարժիլ Հուսիկ Տիրանի հետ՝ որ զայն չգնահատեց, Ներսես Արշակի հետ՝ որ մոլորեցավ, Սահակ Վռամշապուհի հետ՝ որ Տրդատի և Խոսրովի իմաստությունն ունեցավ» («Աշխարհի լույսն ի Հայս», Ա, էջ 267—269)։

***

Հայ ժողովուրդի պատմության մեջ Հայ Եկեղեցին այլապես ալ շահեկան գլուխ մը կներկայացնե, և այդ՝ իր ունեցած կապով հայ մշակույթին հետ։ Ճիշտ է, որ միջին դարուն, բազմաթիվ ազգերու մեջ, Եկեղեցին իր ազդեցության տակ պահած է գրականությունն ու արվեստները, որոնք շնչած ու ծաղկած են անոր անմիջական հովանիին տակ։ Բայց հայ ժողովուրդի մոտ բոլորովին տարբեր է պարագան. Հայ Եկեղեցին ու հայ մշակույթը, սկսյալ Ոսկեդարեն մինչև կիլիկյան շրջանը, այնքան սերտ են կապված, որ հաճախ շփոթված են իրարու հետ։ Ադկե՛ է, որ ըսված է հաճախ, թե հայ մշակույթը ապրած ու տեսած է Հայ Եկեղեցվո շնորհիվ. թեև նույնքան իրավացի կերպով կարելի է ըսել, որ Հայ Եկեղեցին ալ փոխադարձաբար շատ բան պարտական է հայ մշակույթին։ Եթե հայ լեզուն իր փառքը կպարտի Հայ Եկեղեցվո, և հայ արվեստները ծաղկեցան Հայ Եկեղեցվո անմիջական շուքին տակ, նվա՞զ դեր կատարեցին անոնք, որ Եկեղեցին իր գոյությունը և ինքնուրույնությունը պահե։

Գարեգին Տրապիզոնցին ևս մեկն է այն հոգևորականներեն, որոնց կարծիքով ազգային արժեքներու կարգին, Հայ Եկեղեցվո քովն ի վեր, հայ մշակույթն է ամենեն թանկագին ժառանգությունը, զոր դարերը մեզի կբերեն և զոր հայ ժողովուրդը ստիպված է հաչորդ դարերուն հանձնել նվիրական ավանդի մը պես։

«Աշխարհի լույսն ի Հայս» խորագրով իր զույգ հատորները հազար առթիվ ունեցած են հայ մշակույթի արժեքն ևս լույսին հանելու։

***

Մեր դերը չէ քննել հոգևորականը։ Պետք ալ չկա արդեն ադոր։ Իր մտքի վաստակը և իր կյանքը մեջտեղն են՝ չափելու իր մեջ և՛ հոգևորականը։

Բայց պետք է դոնե ըսենք, թե ան իսկական հովիվ մը եղավ, այս բառին ամենեն ազնիվ իմաստով։ Ան եղբայրն եղավ իր հոտին, այս բառին ամենեն ազնիվ իմաստով դարձյալ։ Հոտը, իրեն համար, գուրգուրանքի բույն մըն էր միայն, ընտանեկան ոչխար մը, և ոչ թե անասուններու կույր նախիր մը, զոր ուղած կողմդ կքշես։

Ինքն իսկ կգանի հոգևորականներու այն դասեն, որ իր հոտը տխմարներու երամակ մը կկարծե և ինքզինքը անոր միահեծան տերը։

«Նոր ժամանակներու հատուկ թյուրիմացություն մը,— կրսե ան,— հին արժեքներու սխալ վերագնահատությամբ, ավետարանական «հոտ» բացատրության մեջ, այնքան նկարագեղ, կսիրե տեսնել ոչխարային անմրտություն մը կամ անբանություն մը՝ զոր «հոգևոր հովիվներ» կչանան օգտագործել

շարաշահութիւնամբ։ Կանխակալ կարծիքներով նախապաշարված ու կուրացած մտքի հանախադեպ մոլորանքն է այս» («Աշխարհի լույսն ի Հայս», Ա, էջ 215)։

Ընենք դարձյալ, թե Գարեգին Տրապիզոնցիին մեջ չես կրնար զատել մարդը հոգևորականեն։ Եթե պիտի ընդունինք, որ հոգևորականությունը ուխտ մըն է Հայ Եկեղեցվո միջոցավ ծառայելու հայ ժողովուրդին. կրնանք ըսել անվարան, որ Տրապիզոնցին հավատարիմ եղավ իր ուխտին։ Հայ ժողովուրդին լիովին ծառայեց ան, իր գործունեության բոլոր վաթսուն տարիներուն մեջ։

***

Բնական է, որ տարիքը կխաղաղեցնե անդուսպ թռիչքներու ընդունակ հոգին. երեկվան պոռթկումները կմեղմե և կթուլցնե բռնկած զգացումները։

Գարեգին Տրապիզոնցին մեղմ էր եղեր իր բովանդակ կյանքին մեջ, հեռու ամեն տեսակ ելույթե, որ սովորական երևույթ մըն էր անբնականոն պայմաններուն մեջ, զորս ապրեցավ հայ ժողովուրդը վերջին կես դարուն։ Ան հեռու մնաց նաև ամեն տեսակ վեճերե, շրջանի մը, երբ հայ ժողովուրդը չկրցավ պաղարյուն պահել իր գործիչները և երբ քիչերը կրցան չթաթխվիլ կիրքի մեջ։ Դժվար էր ալիքներուն խաղալիք չըլլալ, երբ ալեկոծ էր բովանդակ ծովը։

Գարեգին պատրիարք կրցավ անվնաս ու անվթար անցնիլ փոթորիկներուն մեջեն։ Ու պետք էր ըսել, որ փոթորիկներ անպակաս էին նաև իր շուրջը։ Իր մեղմ բնավորությունը իր ուժը կազմեց։

Իր սեփական համոզմունքներն ունեցավ վեճերուն ատեն, բայց երբեք կողմ չդարձավ։

Բայց վերջապես քարե զանգվածներ չեն մարդիկ. անոնք ալ երբեմն կփոխվին ժամանակին հետ. որքան ալ ամուր ուզեն մնալ իրենց տեսակետներուն և սկզբունքներուն մեջ, զանոնք կալլափոխեն դեպքերը, իրենց շուրջի մարդիկը, իրենց սպիտակ մազերը։ Ուզես-չուզես տարբեր կդատես դեպքերը, երբ անոնցմե հեռու ես ա՛լ։

Ու շատ չտեսնենք, եթե Գարեգին պատրիարք ևս տարբեր նայի հիմա, տարիներու հեռավորությենեն, անցնող դեպքերուն վրա։

Թող չզարմանա ընթերցողը, եթե մեր մեջբերումները հին շրջանեն են առավելապես, Գարեգին Տրապիզոնցիի հին գրվածքներեն։ Մեկ կողմե մեզ լրիվ մատչելի չէին իր վերջին գրությունները, որպեսզի կարենայինք մինչև մեր օրերուն հասցնել մեր այս ակնարկը։ Մյուս կողմե, հավանաբար կարիք ալ չկար, ինչպես ըսինք, բոլորը տեսած ըլլալու, որպեսզի կազմեինք մեր դատաստանը և ճշտեինք անոր տեղը մեր մտավորականներու շարքին։ Եվ հետո, իր սկզբնական շրջանի գրությանց մեջ կարելի է հանդիպիլ շատ ավելի բնորոշ էջերու, քան անոնց մեջ, զորս շարադրած է վերջերը։ Ինձի կթվի, թե մարդ, տարիքին հետ, ավելի շրջահայաց կդառնա ու ավելի զուսպ, ու քանի կբարձրանա պաշտոնական դիրքերու վրա, այնքան պաշտոնական կդառնա իր գրությանց մեջ։ Եթե իր հիմնական մտքերը նույնը մնան իսկ իր հետագա երկերուն մեջ, արտահայտության ձևերը գոնե կմեղմանան։ Գարեգին Տրապիզոնցին չէր կրնար բացառություն կազմել։

Եվ վերջապես հարց մըն է նաև այն պարագան, թե մարդու մը կյանքին ո՞ր շրջանն է, որ պիտի հատկանշե զայն, և իր ո՞ր գործովն է, որ հանրային մարդը պիտի ներկայանա վաղվան։ Ամեն մեկ անհատ իր կյանքին մեջ շրջան մը ունի, որ կիշխե իր ապրած մյուս տարիներուն վրա, և այդ շրջանը կրնա չզուգադիպիլ հաճախ իր վերջին տարիներուն։ Ճիշտ է, որ մարդ ավելի հասուն կդառնա տարիներուն հետ և ավելի փորձառու, ու հաճախ իր ամբողջ կյանքն է, որ կխտացնե վերջին շրջանի իր մտածումներուն մեջ, թերևս ալ կբյուրեղացնե զայն անոնց մեջ։ Երբեմն ալ վերջին տարիներու գործունեությունը անզոր կդառնա զայն լրիվ բնորոշելու։ Ավելցնենք, թե քիչերու տրված է իրենք զիրենք չհերքել հետագային։

Գարեգին Տրապիզոնցին, ճիշտ է, ինքզինք երբեք չհերքեց իր հիմնական գաղափարներուն մեջ. բայց անոնցմե շատերը արծարծված չենք գտներ հետո առաջին օրերու իրենց ջերմությամբը։

Տրապիզոնցին իր բովանդակ կյանքին մեջ չհեռացավ սակայն իր սկզբնական ուխտեն. հայ ժողովուրդի հանդեպ իր անսահման սերն էր այդ. ան մարդը չի շեղեցներ...։

***

Հանգուցյալ Գևորգ Զ Կաթողիկոսը օրհնության այն կոնդակին մեջ, զոր անոր կուղղեր, ինչպես հիշեցինք, Կոստանդնուպոլսո պատրիարք ընտրվելուն առթիվ, զանազան արժանիքներուն կարգին, որոնցմով օժտված կգտներ Տրապիզոնցին, հիշված էր նաև «լույսն աշխարհայացքի տեր հոգևորականը»։

Ու մեր կարծիքով մեծագույն տիտղոսն է ան, զոր մեր օրերուն կրնա վաստակիլ հոգևորական մը։ Տիտղոս, որ ուրիշ բան չի վկայեր, բայց եթե կամքը հոգևորականին մեջ ավանդության գերին չդառնալու, տարին չկառչելու, հորիզոն փնտռելու հոգիին համար։

Արդարև, Գարեգին Տրապիզոնցին այդպիսին եղավ։ Վկա՝ երկերը. վկա՝ իր կյանքը։

(Շարունակելի)

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու, ճնշագիտ)

ՀԱՂԲԱՏԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ՝ ՀԱՂԲԱՏ ԳՅՈՒՂԻ ՄՅՈՒՍ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ*

Բ. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ս. Նշան եկեղեցի.— Վանքի գլխավոր, կաթուղիկե եկեղեցին է և գտնվում է հուշարձանների գլխավոր խմբի կենտրոնում։ Պատմական աղբյուրներում սրա կառուցումը վերագրվում է հայոց Աշոտ Գ Ողորմած թագավորի կին Խոսրովանույշ թագուհուն։ Սամվել Անեցի պատմիչը նրա կառուցման ժամանակը ցույց է տալիս 967 թվականը, ասելով. «Ի ՆԺԶ թվին Հայոց շինեցաւ Հաղբատ[27]», իսկ Մինաս Համթեցին հիշում է 961 թվականը. «Աշոտ հինգերորդ՝ որդի Սմբատայ որ Ողորմածն կոչեցաւ... իշխեաց ամս կէ։... Թագուհին սորա շինեաց զՀաղբատ և Սանահին հռչակաւոր վանորայսն ի թվին ԴՃԺ[28]»։

Ս. Նշան եկեղեցու կառուցման մասին, բացի պատմական աղբյուրների վերը մեջբերված տեղեկություններից, եկեղեցու հյուսիսային պատի կենտրոնական մասի լուսամուտի շրջանակի վրա պահպանվել է հետևյալ արձանագրությունը.

«Ի Նե թվակ. Սիմեան ճայր եւ Տիրանուն երեց շինեցաք եկեղեցիս փրկութեան Սիմբատա եւ Գուրգենա»։

Ստեփանոս Տարոնացի պատմիչը նույնպես տեղեկացնում է, որ Հաղբատ և Սանահին վանքերը, այսինքն նրանց գլխավոր եկեղեցիները՝ Ս. Նշանը և Ամենափրկիչը կառուցվել են համապատասխանաբար Սիմեոն և Հովհաննես առաջնորդների ժամանակ.

«Յաւուրս սորա (Աշոտ Ողորմած թագավորի— Հ. Ե.) շինեցան կրօնաւորանոցք... որոց երկոցունց տեղեացն անուանք Հաղբատ և Սանահին, հանդէպ միմեանց...։ Եւ առաջնորդ Սանահնի՝ Յովհաննէս գիտնական այրն Աստուծոյ, իսկ Հաղբատայ՝ Սիմէոն ճգնազգեաց ծառան Քրիստոսի[29]»։

Ինչպես տեսնում ենք, Ս. Նշան եկեղեցու կառուցման ժամանակի վերաբերյալ պատմական և վիմագրական աղբյուրների տեղեկությունները հակասում են միմյանց։ Սակայն ուշադիր կերպով համադրելով այդ բոլոր տեղեկությունները, կարելի է հավաստի համարել, որ եկեղեցու կառուցումը պետք է սկսված լինի 967 թվականին, ինչպես մատնացույց է անում Սամվել Անեցի պատմիչը, և ավարտված լինի 991 թվականին՝ Սիմեոնի առաջնորդության ժամանակ, համաձայն արձանագրության։

Մինաս Համթեցու կողմից եկեղեցու կառուցումը 961 թվականին վերագրելը, մեր կարծիքով, հավանական ու համոզիչ չէ, մանավանդ, որ նա Աշոտ Ողորմածին, որն ըստ

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվական № 9-ից։

27 Սամուել Անեցի, էջ 100։

28 Մինաս վարդապետի Համդեցւոյ, «Ազգաբանութիւն Հայոց». Վաղարշապատ, 1870 թ., էջ 38։

29 Ստեփանոս Տարոնացի Ասողիկ, էջ 15։

կարգի հայոց թագավորների երրորդն է, համարում է հինգերորդ Աշոտը։

Բացի դրանից, պատմական աղբյուրների վկայությամբ Ս. Նշան եկեղեցին կառուցել է Խոսրովանույշ թագուհին, մինչդեռ, ինչպես պարզվեց նրա վրա փորագրված արձանագրությունից, եկեղեցու կառուցումը ավարտված պետք է լինի 991 թվականին, այն ժամանակ, երբ արդեն վախճանված էր Խոսրովանույշ թագուհին, ինչպես այդ մասին տեղեկացնում է Վարդան Բարձրբերդցին.

«Եւ բարեպարիշտ կողն իւր՝ Խոսրովանոյշ, շինէ զփառազարդ սուրբ Ուխտն Սանահին և Հաղբատ, Հանգեան ի Քրիստոս ի չորս հարիւր քսան և եօթն թուին (978)[30]»։

Դրանից էլ հետևում է, որ Խոսրովանույշ թագուհին մահանում է եկեղեցու շինարարությունը դեռ չավարտած և, որ նրա մահից հետո կառուցումը շարունակում և ավարտում են նրանց որդիները՝ Սմբատը և Գուրգենը։

Որ Ս. Նշան եկեղեցու կառուցումն ավարտվել է Սիմեոնի առաջնորդության ժամանակ և շինարարության վերակացու է եղել Ատոմը, այդ մասին վկայում է նաև մեծ գավթի ներսում, Ս. Նշան եկեղեցու արևմտյան պատին կից կանգնեցրած նույն Ատոմի մահարձանի վրա փորագրված հետևյալ տապանագրությունը.

«ՆՈԳ թուին (1004), ի Հայրութեան Սիմեոնի, ես Ատոմ վերակացու եկեղեցւոյս կանգնեցի զխաչս՝ ինձ աղաւթս արարէք»։

Սիմեոնի, որպես Հաղբատի վանքի առաջնորդի՝ մասին, հիշատակվում է նաև Ս. Սիոն եկեղեցուն կից 1005 թվականին կանգնեցրած մի մահարձանի տապանագրության և վանքի գանգակատան արևելյան կողմում 997 թվականին կանգնեցրած մի այլ մահարձանի տապանագրության մեջ, որոնք մեջ են բերված սույն հոդվածի համապատասխան տեղում։

Ս. Նշան եկեղեցին գմբեթավոր, ընդարձակ մի կառուցվածք է, որի հատակագիծը արտաքուստ երկարաձիգ ուղիղ քառանկյունի է, իսկ ներսից, շնորհիվ անկյուններում տեղադրած խորանների, դարձել է խաչաձև՝ ուղղանկյուն խաչթևերով։ Խաչթևերի միացման անկյուններից ձգվող որմասյուները միանալով կամարներով, իրենց վրա են կրում ամբողջապես վերակառուցված գմբեթը՝ ցածրանիստ, կլոր թմբուկով և բութ վեղարով, որը հիմքին փոխանցվում է առագաստների միջոցով։ Հիշյալ որմասյուներին կից հետագայում, վերանորոգման նպատակով, ավելացված են նոր կիսասյուներ, որոնց բները գլանաձև են, համանման խարիսխներով ու խոյակներով։ Վերջիններս զարդարված են տարբեր ձևերի գեղեցիկ քանդակներով։

Արևելյան կողմից ունի կիսակլոր լայն աբսիդ՝ բարձր և մասամբ դուրս շեշտված բեմով, ուր բարձրանում են այդ դուրս շեշտված մասի ծայրերում եղած հնգաստիճան քարյա սանդուղքներով։ Արևելյան անկյունների խորանները աբսիդի երկու կողմերում են, որոնց մուտքերը բացվում են աբսիդի մեջ՝ բեմի վրայից. հյուսիսային խորանի արևմտյան պատը հետագայում քանդել են և նոր մուտք բացել։ Արևմտյան անկյունների խորանները կրկնահարկ են՝ վերի հարկի խորանները սրահաձև են՝ առջևի կողմից ընդհանուր կամարակապ բացվածքով։ Ստորին հարկի խորանների մուտքերը բացվում են եկեղեցու արևմտյան խաչթևի մեջ՝ իրար դիմաց։

Պատերը ներսից ծեփված են եղել, որը մեծ մասամբ թափված է. պահպանվել են աբսիդի և հարավային պատերի վրայի որոշ մասերը, որոնց վրա նկատելի են որմանկարների մնացորդներ՝ զարդանկարների և

Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՐԵՎԵԼՔԻՑ

30 Վարդան Բարձրբերդցի, էջ 122։

սրբապատկեր դիմանկարների ձևով։ Առանձնապես հետաքրքիր է հարավային պատի վրա նկած Աղբուղայի մեծադիր և ամբողջական դիմանկարը։

Արտաքուստ, յուրաքանչյուր պատի մեջ կան երկուական եռանկյունաձև մեծ ու խոր խորշեր՝ կամարակապ դագաթներով, որոնք զարդարված են ծաղկեհյուս, ծոպավոր, գեղեցիկ և նուրբ մշակված քանդակներով։

Արևելյան պատի մեջ, ճակատամասում, ադուցված է եկեղեցին կառուցող Սմբատ և Գուրգեն եղբայրների ամբողջական բարձրաքանդակը՝ -եկեղեցու կաղապարը ձեռներին բռնած։

Եկեղեցու շքամուտքը արևմտյան կողմից է, որը բացվում է մեծ գավթի մեջ. մի ուրիշ մեծ մուտք էլ բացվում է հյուսիսային կողմից՝ այդ կողմի սրահի մեջ։ Երկու մուտքերն էլ ունեն կիսակլոր ճակատակալ մեծ քարեր, իսկ կողերից խմբավոր պլանաձև սյուներից կազմված շրջանակ, որոնք միանալով կամարներով, եզերում են մուտքերի ճակատակալ քարերը։

Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՔԱՄՈՒՏՔԸ

Յուրաքանչյուր պատի կենտրոնական մասից բացվում է մեկական երկար ու նեղ, կամարակապ դագաթով լուսամուտ, որոնք բոլորն էլ գեղեցկազարդ շրջանակով են։ Նույնաձև, համեմատաբար փոքր մեկական լուսամուտներ էլ բացվում են արևելյան պատից՝ խորանների մեջ և հարավային ու հյուսիսային պատերից՝ այդ կողմերի խորանների մեջ։ Չորս հատ լուսամուտներ էլ բացվում են գմբեթի թմբուկի մեջ՝ աշխարհագրական չորս գլխավոր կողմերից, համալափ ձևով դասավորված։

Եկեղեցին ամբողջությամբ կառուցված է կապտավուն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախով մածուցված. սալահատակված է նույն բազալտ քարով. տանիքը և գմբեթի վեղարը պատած են կարմրագույն ամուր հանքաքարի սալաքարերով։

Նկատելի են մի շարք վերանորոգումների հետքեր. գմբեթը քանդվել է երկրաշարժից, որը վերականգնել է Հոնավարի որդի Մուկ իշխանը 1016 թվականին. այդ. մասին արձանագրությունը փորագրված է նույն եկեղեցու հյուսիսային մուտքի կամարի վրա, որը հետևյալն է.

«Ի թուին ՆԿԵ. ես Մուկն որդի Հանաւաւրայ, շնորհիւն Աստուծոյ նոր նորոգեցի զսուրբ կաթուղիկէս, որ աւերեալ ի սաստիկ շարժմանէ. եւ եռու զագարակ իմ՝ գանձով զնած վասն փրկութեան հոգւոյ իմոյ եւ մեղացս թողութեան, եւ պարտին ինձ յամենայն տարի զվարդավարին պատարագել անխափան. որ պակասացնել չանայ նզովս առցէ յԱստուծոյ»։

Մի ուրիշ արձանագրության համաձայն, որը փորագրված է նույն եկեղեցու հյուսիսային պատի վրա նշված մուտքի արևմտյան կողմում և որը մեջ ենք բերում ստորև, եկեղեցու հարավային որմասյուները միացնող կամարը վերանորոգում է քաղաքացի խոջա Բեյբութը 1651 թվականին՝ առնչեցի Նավասարդ վարպետի ձեռքով.

«Ի թուին Հայոց ՌՃ. ես քաղաքացի խոջայ Բէյբուտս, Սուրբ Նշանիս եկաւայիս կամարն վեր էր ընկել՝ շինել տվի՝ յիշատակ ինձ և ծնողաց իմոց և կողակցին իմոյ։ Ամէն։ Շինեցաւ յառաջնորդութեան Աւետիս արքեպիսկոպոսին, ձեռամբ Առնչեցի Նաւասարդին»։

Գրատան մուտքի առջևում եղած՝ Ազիզ մահտեսու գերեզմանի տապանագրությունից իմացվում է, որ եկեղեցին վերանորոգել է նաև Ազիզ մահտեսին 1655 թվականին. «Այս է տապան Ազիզ մահտեսուն, որ եղեւ պատճառ սուրբ եկեղեցոյ վերստին նորոգման. ի թուին ՌՃԴ»։ Այնուհետև վերանորոգում է վանքի առաջնորդ Ավետիս արքեպիսկոպոսը (հավանաբար տանիքը) 1677 թվականին։

Ս. Նշան եկեղեցու բեմի փայտյա գեղեցիկ խաչկալը շինել է տալիս Սալամենց Պապոն 1655 թվականին, ինչպես այդ ցույց է տալիս եկեղեցու հյուսիսային պատի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը.

«Ի թուին ՌՃԴ. ես Սալամեանց Պապոյճ շինեցի Սուրբ Նշանիս խաչկալն լիշատակ ինձ եւ ծնողաց իմոց՝ ճարեւ իմոյ Բերային, մայրեւ իմոյ Շանանդուխտին, եւ կողակցին իմոյ Խամփանին, եղբարեւ իմոյ եւ որդւոց իմոց»:

Ս. Նշան եկեղեցին իր ժամանակին զարդարված է եղել նվիրաբերած բազմաթիվ թանկարժեք ու գեղեցիկ սպասներով և այլ զարդերով։ Դրանցից, որպես արվեստի խիստ հետաքրքիր ու արժեքավոր գործ, առավել այցի է ընկել եկեղեցու սեղանի վարագույրը, որը, ինչպես տեղեկացնում է Կիրակոս Գանձակեցին, այծի փափուկ մազից գործել է Հաթերքի Վախթանգ իշխանի կին Արզու խաթունը՝ իր դստերի օգնությամբ, զարդարելով այն սրբապատկերներով ու ծաղկենկարներով[31]։

2. Գավիթ.— *Գտնվում է Ս. Նշան եկեղեցու արևելյան կողմում՝ նրան կից։ Սկզբնական շենքը կառուցում է Կյուրիկե Բ արքայի դուստր Մարիամը իր քրոջ՝ Ռուսուդանի մասնակցությամբ 1181 թվականին, որպես իրենց տոհմի գերեզմանատեղի, ինչպես այդ մասին վկայում է գավթի հյուսիսային խաչքեռում փորագրված հետևյալ արձանագրությունը.*

«Շնորհիւ Աստուծոյ ես Մարիամ դուստր Կիւրիկէի արքային, հանդերձ Ռուսուդանայի շինեցի զգաւիթս եւ ծածկեցի իմ աղդիամբս, տուի այգի, հատի զնորոտութիւն... Սաղզարդարին մեզ պատարագ լիցի. թուիս ՌԼ»:

Կիրակոս Գանձակեցի պատմիչը, խոսելով Հաղբատի վանքի առաջնորդների հայրդականության և նրանց կատարած աշխատանքների մասին, հաղորդում է, որ Հովհաննես եպիսկոպոս Խաչենացին քանդում է Մարիամի կառուցած գավթի շենքը, թողնելով նրա այն մասը, ուր ամփոփված էին Կյուրիկյանների մարմինները և կառուցում ներկայիս շենքը 1201 թվականին.

«Եւ յետ նորա (Գրիգորիսից— Հ. Ե.) Յոհանէս, այր հեզ և առաքինի, ազգական իշխանացն Խաչենոյ։ Սա քակեաց զգաւիթն փոքրագոյն, որ ի դուռն Կաթուղիկէին Հաղբատայ, և շինեաց մեծ և գեղեցիկ շինուած, որ զարմացուցանէ զտեսողսն հիացմամբ»[32]։

Գավթի կառուցման մասին, բացի Գանձակեցու վերը մեջ բերված վկայությունից, Ամենափրկիչ խաչարձանի վրա պահպանվել է նաև հետևյալ արձանագրությունը, որը մեջ ենք բերում կրճատված.

«Շնորհաւ Սուրբ Երրորդութեան և ողորմութեամբ Սուրբ Նշանիս, ես Տէր Յովհաննէս նուաստ ծառայս ծառայիցն Աստուծոյ. շինեցի զգաւիթս, զգրատունս եւ զսրահս նորին...»:

Գավթի կառուցմանը մասնակցել է նաև Պուլտաճը, ինչպես այդ երևում է գավթի վրա փորագրված հետևյալ արձանագրությունից.

«Յանուն Աստուծոյ ես Պուլտահ՝ եղբայր Տէր Յովհաննէսի, եւ ՃԿ դանեկան ի շինութիւն ժամատան, եւ ինձ պատրեն ի տարումն ե պատարագ. ով խափանէ իմ մեղացս եւ իմ ազգի մեղացն պատրակաս է առաջի Աստուծոյ»:

Ճարտարապետական և արվեստի այդ չքնաղ կոթողը մի ընդարձակ կառուցվածք է, խաչաձև հատակագծով՝ անհամաչափ, ուղղանկյուն խաչքեռերով։ Արևմտյան խաչքեռում տեղադրված երկու ամբողջական ըստ սյուները և խաչքեռերի միացման սենկյուններից ու Ս. Նշան եկեղեցու արևմտյան պատին կից ձգվող երկու կիսասյուներ միանալով խաչաձևվող կամարներով, դազմում են թաղակապ ծածկը՝ կենտրոնում քառակուսի բացվածք ունեցող փակ գմբեթային մասով։

ԳԱՎԹԻ ՆԵՐՍԻ ՁՈՒՅԳ ՍՅՈՒՆԵՐԸ

31 Կիրակոս Գանձակեցի. էջ 204.

32 Նույն տեղում. էջ 92.

Այդ քառակուսի բացվածքի կողերից նույն ձևով ձգվող դուրգ խաչաձևվող կամարները կենտրոնում առաջացնում են համեմատաբար փոքր լուսանցք՝ երդիկի ձևով։ Վերջինիս վրա որպես ծածկույթ կառուցված է փոքրիկ սյունազարդ գմբեթ։

Սյուների բները, խարիսխները ու խոյակները ամբողջական խոշոր քարերից են՝ բները ընդհանուր առմամբ գլանաձև են, կազմված մի խումբ բարակ գլաններից՝ թվով 12 հատ։ Դրանց համապատասխան մշակված են նաև խարիսխները ու խոյակները։ Կիսասյուների բները, խարիսխները ու խոյակները նույնպես ամբողջական մեծ քարերից են՝ բները կիսագլանաձև, իսկ խարիսխները ու խոյակները՝ տարբեր ձևերի։ Ինչպես սյուների, այնպես էլ կիսասյուների խարիսխները ու խոյակները զարդարված են դանակաձև ձևի քանդակներով։

Գավթի արևելյան անկյուններում, արտաքուստ կառուցված են երկհարկանի խորաններ, որոնց մուտքերը արևմտյան կողմից են և բացվում են գավթի մեջ, Բոլոր խորաններն էլ արևելյան կողմից ունեն փոքրիկ սեղաններ վեմքարերով և թաղակապ ծածկ։ Դեպի վերի հարկի խորանները բարձրանում են ստորին հարկի խորանների պատերին կից ձգվող բազմաստիճան քարե սանդուղքներով։

Գլխավոր մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ մեծ քարով և շքեղազարդ պարակալով։ Երկու, համեմատաբար փոքր մուտքեր էլ եղել են հարավային և հյուսիսային կողմերից՝ այդ կողմերի խաչթևերի կենտրոնական մասերից, որոնք այժմ շարված-փակված են։ Երկու երկար ու

ԳԱՎԹԻ ՆԵՐՍԻ ՀԱՅԱՁԵՎՎՈՂ ԿԱՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԳՄԲԵԹԸ ՆԵՐՍԻՑ

նեղ, կամարակապ գագաթներով լուսամուտներ բացվում են արևմտյան պատից, մեկական նման լուսամուտներ էլ բացվում են հարավային և հյուսիսային խաչթևերի արևմտյան պատերից։ Իսկ այդ խաչթևերի հյուսիսային և հարավային պատերի մեջ կան երկուական կամարակապ փոքրիկ բացվածքներ։

Այս գավիթը հանդիսացել է Կյուրիկյանների և Զաքարյանների երկրորդ գերեզմանատեղին։ Սանահնից հետո։ Այստեղ են թաղված նաև մի շարք հայ իշխանական տների բազմաթիվ անդամներ և շատ ուրիշներ։

ԳԱՎԹԻ ԳԼԽԱՎՈՐ (ԱՐԵՎՄՏՅԱՆ) ՄՈՒՏՔԸ

Գավթի հյուսիսային խաչթևը, որը Մարիամ իշխանուհու կառուցած գավթի պահպանված մասն է, ամբողջապես պատկանում է Կյուրիկյաններին՝ որպես հանգըստատեղի։ Այստեղ են թաղված գավիթը և այդ դամբարանը կառուցող հիշյալ Մարիամը, նրա մայրը՝ Թամար թագուհին, հորքույր Ռուսուդանը և իր քույրերը, որոնց գերեզմանները հարթ տապանաքարերով են և համապատասխան տապանագրությամբ։ Այդ կողմի խաչթևի արևելյան պատի մեջ, հիշյալ գերեզմանների ուղղությամբ, ագուցված են երեք հատ նույնաձև մշակված և միևնույն մեծությամբ խաչքարեր՝ մի ընդհանուր շրջանակի մեջ առնված։ Խաչքարերը զարդարված են բուսական քանդակներով, որոնք մշակված են շատ նուրբ ձևով։ Դամբարանի կառուցման վերաբերյալ արձանագրությունը գտնվում է խաչթևի հյուսիսային պատի մեջ եղած մուտքի կամարի վրա, որը հետևյալն է.

«Ի թուին Հայոց ՈԼԴ (1185). Ես Մարիամ, դուստր Կիւրիկէ արքայի, մեծ յուսով շինեցի զտունս աղաւթից ի վերայ ճանգրստարանի հաւրքուեր իմոյ Ռուսուդեայ եւ մաւր իմոյ Թամարայ եւ ինձ Մարիամու, յառաջնորդութեան տեառն Թարսղի արքեպիսկոպոսի, որ եւ աւարտեցաւ ի ձեռն սորին։ Արդ՝ որ մտանէք ընդ դռունս սորա եւ երկրպագէք սուրբ նշանիս, յիշեսջիք յաղաւթս զմեզ եւ զնախնի թագաւորս մեր, որք ճանգուցեալ են առ Սրբոյ Կաթուղիկէիս՝ ի Ցիսուս Քրիստոս»։

Գավթի հարավային խաչթևում է գտնվում Վասակի և իր դուստր Փիրթիքանի դամբարանը՝ մատուռի ձևով։ Վերջինիս մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ փոքր քարով և կիսասյունավոր, գեղեցիկ պարակալով։ Ննջեցյալների գերեզմանները գտնվում են մատուռի մուտքի առջևում՝ հարթ երես ունեցող տապանաքարերով և համապատասխան տապանագրությամբ։ Վասակի գերեզմանի արևելյան ծայրին, մատուռ-դամբարանի արևմտյան պատի մեջ դրված է շքեղազարդ մի խաչքար բուսական ձևի քանդակներով։ Դամբարանը կառուցել է տվել Վասակի որդի Դավիթը 1189 թվականին, որի վերաբերյալ արձանագրությունը գտնվում է մատուռ-դամբարանի մուտքի ճակատակալ քարի վրա, այս օրինակ.

«Ի թուին ՈԼԸ. Ցառաջնորդության Տեառն Թարսղի, ես Դաւիթ, որդի Վասակայ, շինեցի զխորանն եւ զեկեղեցին ի վերայ ճանգրստարանի հաւր իմոյ Վասակայ եւ քուրր Փուրթուխանին։ Արդ՝ աղաչեմ սուրբ եղբայրութիւնդ զԱդունացից շաբաթ աւրն եւ զկիւրակէին իմ մաւրն Վանէնի՝ դստեր Կիւրիկէի թագաւորին եւ իմ քուրն Փուրթուխանայ եւկու քառասունք եւ իմ հաւրն Վասակայ եւ յետ ինձ իմ քուրն եւ մաւրն։ Ով խափանէ մեր խղճիս պարտական է տուչի Աստուծոյ»։

Գավթի ներսում, Ս. Նշան եկեղեցու արևմտյան պատին կից, առանձին, խոշոր պատվանդանների վրա կանգնեցված են չորս գեղաքանդակ խաչքարեր՝ շինված կապտագույն բազալտ քարից, որոնցից երկուսը, համաձայն նրանց վրա փորագրված արձանագրությունների, պատկանում են Ատոմին և Մեսրոպին։ Մյուս երկու խաչարձաններն արձանագրություն չունեն, ուստի պարզ չէ, թե նրանք որ ժամանակին են պատկանում, ովքեր են նրանց հեղինակները և ում հիշատակի համար են կանգնեցված։ Մեջ ենք բերում Ատոմի և Մեսրոպի խաչարձանների արձանագրությունները.

«ՆԵԳ թուին (1004), ի հայրութեան Սիմեոնի, ես Ատոմ վիրակացու եկեղեցոյս կանգնեցի զխաչս՝ ինձ աղաւթս արարէք»։

«Ի թիւս ՆԵԵ (1006), ի թագաւորութեան Դաւթի ինքնակալի և ի հայրութեան Յովսէփայ, ես Մեսրոպ կանգնեցի զսուրբ նշանս յուխտիս Հաղբատայ»։

Բացի վերը նշված դամբարաններից ու մահարձաններից, գավթի ամբողջ հատակը պատած է հարթ տապանաքար ունեցող գերեզմաններով, որոնց մի մասն ունեն տապանագրություններ, որոնք հետևյալներն են. «Աբաս թագաւոր», «Կիւրիկէ թագաւոր», «Սմբատ թագաւոր», «Գրիգոր ամիրա», «Քուրթ ամիրա», «Զաքարէի եւ Իւանէի քուեր որդին՝ Յովհաննէս եպիսկոպոս տեղւոյս», «Սեւադա», «Սենեքերիմ», «Զաքարէի եւ Իւանէի քոյրն է Դաւիթն», «Նէգաւթ», «Հասան», «Սասնայ», «Խաւոսմ», «Վանանէ», «Դաւիթ», «Նանա», «Այս է հանգիստ աթաբէկ Սադունի», «Համզ», «Վասակ», «Սմբատ», «Տէր Գրիգորէս», «Փիլիպոս հայրապետ Առնչեցի», «Թալիկ», «Կաւթել», «Նուսթի», «Դոլ», «Սմբատ որդի Ուքանա», «Տէր Գրիգորէսի եղբայրն», «Այս է հանգիստ Մաթունին», «Միթուսան», «Սմբատ որդի Գարրանիէլի», «Այս է տապան Մինաս վարդապետին թվ. ՌՃ (1651)»։

Գավթի շենքը ամբողջովին կառուցված է կապտագույն բազալտի մաքուր տաշած մեծ քարերով, կրաշաղախով մածուցված։ Առաստաղը պատած է աղյուսաձև կարմրագույն մանր քարերով։ տանիքը պատած է

նույն կարմրագույն ամուր քարի սալաքարերով։ Նկատվում են մի շարք վերանորոգումների հետքեր։

3. Ս. Գրիգոր եկեղեցի.— Իր կառուցման ձևով բոլորովին յուրահատուկ ճարտարապետական այդ հուշարձանը գտնվում է Գավթի հարավային կողմում։ Արևմտյան պատի մեջ բացված լուսամուտի վրա փորագրված կարճ արձանագրությունը հավաստում է, որ եկեղեցին կառուցված է 1005 թվականին։ Սկզբնական կառուցումը եղել է բազիլիկ ձևի, այսինքն ունեցել է երկարաձիգ ուղղանկյուն հատակագիծ և թաղակապ ծածկ։ Կողերի պատերից ձգվող երկուական որմասյուները միանալով կամարներով, գոտկում են ծածկը, այդ որմասյունների խարիսխներն ու խոյակները պատած են զարդաքանդակներով։ Արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ՝ բարձր բեմով, որի երկու կողքերին կան մի-մի խորան, որոնց մուտքերը բացվում են դեպի արևմուտք՝ եկեղեցու մեջ։

Հետագայում եկեղեցու արևմտյան անկյուններում ավելացրել են երկհարկանի խորաններ, որից շենքի հատակագիծը ներսից ստացել է խաչաձև տեսք՝ ուղղանկյուն խաչթևերով։ Միաժամանակ այդ խորանների կառուցումով ծածկվել են այդ կողմի որմասյուները։ Նոր ավելացրած խորանների մուտքերը բացվում են եկեղեցու արևմտյան խաչթևի մեջ՝ իրար դիմաց. վերջիններս արևելյան կողմից ունեն կիսակլոր փոքրիկ աբսիդներ և դրանց մեջ բացվող մեկական շատ փոքր պատուհաններ։

Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ (ԱՌԱՋԻՆ ՊԼԱՆՈՒՄ)

Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ ճակատակալ քարով և շրջանակով։ Շրջանակի կողերը գլանաձև բներ ունեցող կիսասյուների ձևով են, որոնց միացնող կամարը եզերում է մուտքի ճակատակալ քարը. վերջինիս գագաթը վեղարաձև է, ուր քանդակված է մի մեծ վարդ։ Մեկական երկար ու նեղ, կամարակապ փոքր լուսամուտներ բացվում են արևելյան և արևմտյան պատերի կենտրոնական մասերից։ Լուսամուտներից վերև, պատերի՝ քիվերի միացումից առաջացած վեղարաձև մասի վրա քանդակված են մեկական մեծ վարդաքանդակներ։

Եկեղեցին վերանորոգվել է 1211 թվականին, ինչպես այդ մասին տեղեկացնում է հուշարձանի արևմտյան պատի վրա, արտաքուստ, լուսամուտից վերև փորագրված հետևյալ արձանագրությունը.

«Ի թուին ՈԿ. Նորոգեցաւ եկեղեցիս օծեալս Տէր Յովհաննէսի եւ միաբան եղբարաց, յիշեցէք ի Քրիստոս»:

Եկեղեցու ամբողջ շենքը կառուցված է կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախով մածուցված, սալահատակված է, տանիքը պատած է սալաքարերով։

4. Առաջին կամ արևմտյան կողմի սրահ.— Ս. Նշան եկեղեցու հյուսիսային կողմում, նրա և Համազասպ կոչվող ժամատան արանքում, եկեղեցու այդ կողմի պատի ամբողջ երկարությամբ՝ արևմուտքից արևելք ձգվում է մի սրահ, որին շատերը պողոտաձև գավիթ են կոչում։ Սրահում եղած Ամենափրկիչ խաչարձանի վրա փորագրված մի արձանագրության համաձայն, որը մեջ բերինք վերևում գավթի նկարագրության մեջ, սրահը կառուցել է վանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոս Խաչենացին ԺԳ դարում։

Սրահի ներսում, Ս. Նշան եկեղեցու հյուսիսային պատի վրա փորագրված արձանագրություններից էլ, որը մեջ ենք բերում ստորև, իմացվում է, որ սրահի կառուցմանը իր միջոցներով մասնակցում է Մխիթար քահանան. ահա այդ արձանագրությունը.

«Ի թուին ՉԺՉ (1267). շնորհիւն Աստուծոյ ես Մխիթար քահանայ, որդի Աւշինին, սնուցած Տէր Յովանիսի, եռու զարդիւս ի շինութիւն սրահայարկ՝ դրան Կաթուղիկէիս. և մեք՝ Տէր Յովանէս, կամակցութեամբ եղբարցս, սահմանեցաք Բ. պատարագ Քայստուրին ի տաւնի... կատարիչքն աւրհնին յԱստուծոյ, ամէն»:

Սրահը հատուկ պատեր չունի. վերջիններիս փոխարեն՝ Ս. Նշան եկեղեցու հյուսիսային և Համազասպ ժամատան հարավային պատերին կից ձգվում են կիսասյուներ, որոնք միանալով կամարներով, գոտկում են սրահի թաղակապ ծածկը. միաժամանակ այդ կիսասյուները միանում են նաև որմակամարներով, իրենց վրա կրելով ծածկի թաղի ծայրերը՝ Համազասպ ժամատան ու Ս. Նշան եկեղեցու համապատասխան պատերի վրա առաջացնելով չորսական տարբեր մեծությամբ կամարակապ խորշեր։ Կիսասյուների բները, խարիսխները ու խոյակները ամբողջական մեծ քարերից են՝ գծավոր զարդաքանդակներով։

Սրահը հատուկ մուտք չունի, այլ երկու ծայրերից՝ արևմուտքից և արևելքից կամարակապ բացվածքներ են՝ սրահի ամբողջ լայնությամբ։ Հետագայում այդ կամարակապ բացվածքները ներքևից կիսով չափ շարել են՝ պատրաստելով նաև փոքրիկ մուտքեր։

Սրահը հանդիսացել է որպես գերեզմանատեղի, որի մասին վկայում են սրահի ներսում եղած քազմաթիվ դամբարաններն ու գերեզմանաքարերը։ Սրահի հարավ-արևելյան անկյունում են գտնվում Սյունյաց Պածած իշխանի և իր կնոջ՝ Դուդայի դամբարանները, որոնց գերեզմանները հարթ տապանաքարերով գտնվում են դամբարանների մուտքերի առջևում և ունեն հետևյալ տապանագրությունները.

«Այս է ճանգիստ քարեպաշտ իշխանին Պածածին՝ որդւոյ Լիպարտի»:

«Այս է ճանգիստ Դուդայ տիկնոջ, յազգէ Մամիկոնեանց»:

Երկու դամբարաններն էլ սովորական մատուռի ձևով են, փոքր, թաղակապ ծածկով, իրարից բաժանվում են միջնորմով. արևելյան կողմից ունեն կիսակլոր փոքրիկ արսիդներ՝ համալափ բեմերով։ Երկուսի մուտքերն էլ արևմտյան կողմից են՝ շատ փոքր։ Կառուցված են կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերով, կրաշաղախով մածուցված։ Թե՛ սրահի և թե՛ դամբարանների տանիքները պատած են կարմրագույն սալաքարերով։

Դամբարանների արևմտյան պատերի վրա, մուտքերի արանքում փորագրված մի այլ արձանագրության համաձայն, Պածած և Դուդա ամուսինները Հաղբատ են եկել 1273 թվականին և միաբանել վանքին, ուստի նրանց մահը պետք է տեղի ունեցած լինի 1273 թվականից հետո։

Սրահի ամբողջ հատակը պատած է հարթ տապանաքարեր ունեցող գերեզմաններով, որոնցից հայտնի են, ըստ տապանագրության.

«Այս է ճանգիստ Տէր Յովհաննիսի. թվ. ՊԻԴ (1375)։

«Աբլհասան»։

(Շարունակելի)

ՑԱՆԿ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1960 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը ամենապատիվ Տ. Գարեգին պատրիարքի ուրբանանամյա ճոխելյանի առթիվ, Ժ Տ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ սիրո և միության հրավեր կոնդակը, Դ 6:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը նկարիչ Գրիգոր Շիլբյանին, Ե 8:

Ամանորի առթիվ Ամենայն Հայոց Սայրապետ Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը, Ա 8:

Ամանորի առթիվ Անդրկովկասի մուսուլմանների Շեյխուլ Իսլամ Հաֆիզադեի և Շեյխ Մովսուն Մուֆտի Վալիևի շնորհավորական հեռագիրը և Վեհափառ Հայրապետի պատասխանը, Ա 12:

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Սայրապետ Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և Եվրոպական Արքաների ու տարբերակների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա 13:

Ամենայն Հայոց Հայրապետի արտասահմանյան ուղևորությունից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձի կապակցությամբ ուղարկված հեռագրերը, Ժ 9:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասնամյա ճոխելյանի առթիվ Ամենայն Հայոց Հայրապետի և պետական պաշտոնական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը, ԺԱ—ԺԲ 9:

Հայտարարություն, Ա 18

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Հայրապետի և պետական պաշտոնական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը, ԺԱ—ԺԲ 7:

Պաշտոնական բնդունելություններ, Ժ 8:

Պաշտոնական հաղորդագրություն, Ե 7:

Պաշտոնական հաղորդագրություն, Ժ 10:

Ռումինիայի հայոց թեմի առաջնորդի բնարության առթիվ փոխանակված հեռագրերը, Ժ 11:

Փրկչի հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Ամենայն Հայոց Սայրապետ Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Բոլոր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա 8:

Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի շնորհավորական գրությունը Եվրոպական Արքաներին և առաջնորդարաններին և ստացված պատասխանները, Դ 15:

Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի շնորհավորական գրությունը Բոլոր եկեղեցիների հոգևոր պետերին և ստացված պատասխանները, Դ 9:

Բ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հույսի և կյանքի տոնը, Ա 3:

Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան, Բ 3:

Մեր մայրերը, Գ 3:

Հարության ավետիսը, Դ 3:

Սիրո և միության նոր կոչ Մայր Աթոռից, Ե 3:

Վեհափառ Հայրապետի ուղևորությունը Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Զ 3:

Տասնհինգ տարի, է 3:

Հանուն խաղաղության, Ը 3:

Հոբելյանական մեծ տոնի նախօրյակին, Թ 3:

Հինգհարյուր տարին, Ժ 5:

Վերածնված Մայր Հայրենիքի փառապանծ տոնը, ԺԱ—ԺԲ 3:

Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյան, ԺԱ—ԺԲ 5:

Գ. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Ա. Հ.—Աստվածածնի տոները, Ը 6:—Սուրբ խաչի տոները, Թ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ քարոզը Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ, Դ 17:

ՌԱՖԱՅԵԼ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈ—Հոգեզարուստ, Ե 8:

ԳՈՒՇԱԿՅԱՆ ԹՈՐԳՈՄ ԱՐՇԵՊԻՍԿՈՊՈՍ—Կոչումին գիտակցությունն է, որ կկատարելագործե մարդը, է 7:

ՊԱՊԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ—Արև և ձյուն, է 3:

ՍԱՐԳՍՅԱՆ ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ—Եկեղեցիների հաստատությունների միջև փոխանակված հեռագրերը, ԺԱ—ԺԲ 9:

Հայտարարություն, Ա 18

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Հայրապետի և պետական պաշտոնական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը, ԺԱ—ԺԲ 7:

Պաշտոնական բնդունելություններ, Ժ 8:

Պաշտոնական հաղորդագրություն, Ե 7:

Պաշտոնական հաղորդագրություն, Ժ 10:

Ռումինիայի հայոց թեմի առաջնորդի բնարության առթիվ փոխանակված հեռագրերը, Ժ 11:

Փրկչի հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Ամենայն Հայոց Սայրապետ Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Բոլոր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա 8:

Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի շնորհավորական գրությունը Եվրոպական Արքաներին և առաջնորդարաններին և ստացված պատասխանները, Դ 15:

Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի շնորհավորական գրությունը Բոլոր եկեղեցիների հոգևոր պետերին և ստացված պատասխանները, Դ 9:

Տասնհինգ տարի, է 3:

Հանուն խաղաղության, Ը 3:

Հոբելյանական մեծ տոնի նախօրյակին, Թ 3:

Հինգհարյուր տարին, Ժ 5:

Վերածնված Մայր Հայրենիքի փառապանծ տոնը, ԺԱ—ԺԲ 3:

Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյան, ԺԱ—ԺԲ 5:

Ա. Հ.—Աստվածածնի տոները, Ը 6:—Սուրբ խաչի տոները, Թ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ քարոզը Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ, Դ 17:

ՌԱՖԱՅԵԼ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈ—Հոգեզարուստ, Ե 8:

ԳՈՒՇԱԿՅԱՆ ԹՈՐԳՈՄ ԱՐՇԵՊԻՍԿՈՊՈՍ—Կոչումին գիտակցությունն է, որ կկատարելագործե մարդը, է 7:

ՊԱՊԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ—Արև և ձյուն, է 3:

ՍԱՐԳՍՅԱՆ ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ—Եկեղեցիների հաստատությունների միջև փոխանակված հեռագրերը, ԺԱ—ԺԲ 9:

Հայտարարություն, Ա 18

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Հայրապետի և պետական պաշտոնական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը, ԺԱ—ԺԲ 7:

Պաշտոնական բնդունելություններ, Ժ 8:

Պաշտոնական հաղորդագրություն, Ե 7:

Պաշտոնական հաղորդագրություն, Ժ 10:

Ռումինիայի հայոց թեմի առաջնորդի բնարության առթիվ փոխանակված հեռագրերը, Ժ 11:

Փրկչի հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Ամենայն Հայոց Սայրապետ Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Բոլոր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա 8:

Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի շնորհավորական գրությունը Եվրոպական Արքաներին և առաջնորդարաններին և ստացված պատասխանները, Դ 15:

Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի շնորհավորական գրությունը Բոլոր եկեղեցիների հոգևոր պետերին և ստացված պատասխանները, Դ 9:

Տասնհինգ տարի, է 3:

Հանուն խաղաղության, Ը 3:

Հոբելյանական մեծ տոնի նախօրյակին, Թ 3:

Հինգհարյուր տարին, Ժ 5:

Վերածնված Մայր Հայրենիքի փառապանծ տոնը, ԺԱ—ԺԲ 3:

Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյան, ԺԱ—ԺԲ 5:

Մաշխարհային խորհրդի պատվիրակությունը Սուրբ Էջմիածնում և Մայր Տաճարի Ավագ Սեղանի օծումը, Ա 19:—Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսին և Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Եփրեմ Բ-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ԺԱ—ԺԲ 81:

ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ—Մեռոնների հարգանքը, Գ 16:

Ամենայն Հայոց Հայրապետի ուղևորությունը Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ և վերադարձը Մայր Աթոռ. Ժ 17. ԺԱ—ԺԲ 11:
Եվրոպայի Քրիստոնյա եկեղեցիների համագումարը. ԺԱ—ԺԲ 78:
Ընթերություն ի գանձակալություն Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե Նորքնեար սրբազան պատրիարքի. ԺԱ—ԺԲ 57:
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Եփրեմ Բ-ի ընտրությունն ու գահակալությունը. Գ 8:
Ռումինիայի և Բուլղարիայի առաջնորդ հոգեշնորհ Տ. Ցիրայր վարդապետ Մարտիկյանի մեկնումը. Զ 14:

Դ. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԲԵՆԼԻՑԱՆ ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԿԱՎԱԳ—Մայր Աթոռի տարեվերջյան տոնը, Ա 29:
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ—Պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեհյանը Մայր Աթոռում, Բ 52:—Էջմիածնի Սուրբ Շողակաթ եկեղեցու նորակառույց զավագ սեղանի օծումը և Վեհափառ Հայրապետի սուրբ պատարագը, Ժ 44:
Ամանորը Մայր Աթոռում, Ա 33:
Հայրապետական հանդիսավոր պատարագ և քարոզ Մայր Տաճարում Քրիստոսի հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ, Ա 16:
Հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետի գահակալության հիսնամյա տարեդարձի առթիվ, Ժ 12:
Վարդանանց տոնը Մայր Աթոռում, Գ 17:
Վեհափառ Հայրապետի մեկնումը արտասահման, Ե 16:
Վեհափառ Հայրապետի ցավակցական հեռագիրը Բելգրադում ապրիլի 1-ին զոհված 24 հայ ուսանողների եղեռնական և տխուր մահվան առթիվ, Ե 18:
Քաղվածքներ Գերագույն Հոգևոր խորհրդի նիստերի արձանագրություններից, Գ 11, Ե 11:
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ (լուրեր Մայր Աթոռից) Ա 20, Բ 14, Գ 13, Դ 20, Ե 13, Զ 12, Է 11, Ը 13, Թ 12, Ժ 40, ԺԱ—ԺԲ 55:

Ե. ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ավարտի հանդիսություններ Հոգևոր Ճեմարանում. Զ 7:
Ամենապատիվ Տ. Գարեգին պատրիարք Խաչատուրյանի ձեռնյաս ուրբանամյակին նվիրված հանդիսություն Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում, ԺԱ—ԺԲ 78:
Դիպլոմային աշխատանքների պաշտպանություն և վկայականների բաշխման հանդես Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում, ԺԱ—ԺԲ 67:
Հայ բանասաեղծության երեկո Հոգևոր Ճեմարանում. Դ 25:
Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը հայաստանում և ուսանողների ընդունելություն 1960—1961 ուսումնական տարեշրջանի համար, Զ 68, Է 68:
Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերաբացումը. Ժ 41:
Վկայականների բաշխման հանդես Հոգևոր Ճեմարանում, Ա 37:

Զ. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. Հ.—Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությունից, Է 14:
ԱՃԱՌՅԱՆ Հ. (ՊՐՈՖ.)—Գրիգոր Արծրունի, Ե 30:
ԲԵՀՐՈՒԳՅԱՆ ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ—Ղազար կաթողիկոս Ջանկեցու հերթով նվիրված Սուրբ Էջմիածին, Ա 50:—Կարապետ Կոստանյանց, Դ 50:
ԳԱՆԳԱՐՅԱՆ Մ.—Խորենի եպիսկոպոս Սահակյանի մանկավարժական գործունեությունը, Ե 28:—Մեսրոպյան այբբենարանները ԺԵ—ԺԸ դարերում, Ը 34:
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Հ.—Լմբատավանքը և նրա վիմագիր արձանագրությունները, Բ 50:—Հովհաննես Տավուշեցի—Վանական վարդապետը և Այրարատ գյուղը որպես նրա կյանքի ու գործունեության մի կենտրոն, Ե 17:—Թեղենյաց վանքը, Զ 52:—Մատենավանքը և նրա վիմագիր արձանագրությունները, Է 32:—Հաղբատի վանքը և նրա հետ կապված Հաղբատ գյուղի մյուս հուշարձանները, Բ 36, ԺԱ—ԺԲ 35:
ԽԱԼԹԱԽՅԱՆ Հ.—Նոր հայտնի Սուրբ Էջմիածնի վանքի և Վաղարշապատի հատակագծի վերաբերյալ, Է 24:
ՀՐԱՆՏ Ջ. ԱՐՄԵՆ—Մեծն Ներսես Պարթև հայրապետ, Դ 45:
ՄԱՆԿՈՎՍԿԻ ՏԱԴԵՈՒՇ—Արևելքը լենինյան գեղարվեստական մշակույթի մեջ, Զ 18:
ՄԵԼՅԱՆ Հ.—Գրիգոր Մատաղեցին և նրա տեղծագործությունները, Զ 38:
ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ. Լ. Մ. (ՊՐՈՖ.-ԴՈԿՏ.)—Պոլսոյ Տարոնեցի՝ ԺԱ—ԺԲ դարերի հայ մատենագիրը և բանդրակեցի ու ծայր հայերը, Դ. 38:—Մի փոքր «Գիրք թղթոց»-ի թերի մասերի վերականգնման ուղղությամբ, Զ. 28:—Սայաթ-Նովայի բառը՝ Տեր Մովսես ավագ քահանա Սայաթնյանց, Ը 29:
ՄԵԼԻՔԱՐՅԱՆ Հ.—Առոգանություն, Ը 53:
ՇԱՀԲԱԶՅԱՆ Պ.—Ավարայրի հակատամարտի մեծ խորհուրդը, Գ 18:
ՇԱՀԻՆՅԱՆ Ա. Ն.—Հայկական խաչքարերի արվեստը, Ե 37, Զ 44, Է 38, Ը 48, Թ 45:
ՍԻՐՈՒՆԻ Հ. Ժ.—Եղիշե պատրիարք Դուրյան, Ա 41, Բ. 28, Գ 28, Դ 38:—Գարեգին պատրիարք Խաչատուրյան, Թ 27, Ժ 58, ԺԱ—ԺԲ 79:

ՏԵՐՑԱՆ ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ—Աստվածաշնչի հայերեն տպագրության պատմությունից, Ը 13, Թ 13, Ժ 46:
ՓԱՊԱՋՅԱՆ Ս.—Սոֆիայի հայերը, Ե 46:
Ցանե Կիլիկիո Կաթողիկոսությունը պատմության լույսի տակ, Բ 34, Գ 29:

Է. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ—Երեսուն տարի առաջ... (Եղիշե պատրիարք Դուրյանի աճման հիշատակին), Բ 21:
ԴՈՒՇԱԿՅԱՆ ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ—Ճշմարիտ արժանիքին մարդը (Եղիշե պատրիարք Դուրյանը), Բ 19:
Գերաշնորհ Տ. Եղիկ եպիսկոպոս Ազնավուրյան, ԺԱ—ԺԲ 77:
Կարծիքներ Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի մասին, Բ 16:

Ը. ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.—Վատիկանից կյանքի ուղիով, Ա 57:
ՇԱՀԲԱԶՅԱՆ Գ.—Հայ ժողովրդի մշակութային և տնտեսական զարգացումը, ԺԱ—ԺԲ 40:
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ—Ռումինեռնայ հայության նկարիչ Հրաշտ Ավագյանը Մայր Աթոռում, ԺԱ—ԺԲ 74:
Հայաստանը արտասահմանյան օտար և հայ նյութերի աչքերով, ԺԱ—ԺԲ 49:
Խաղաղության պաշտպանության դիրքերում, Բ 7:
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ, Ա 61, Բ 59, Գ 74, Դ 62, Ե 51, Զ 59, Է 50, Ը 60, Թ 54:

Թ. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ—«Մենք ապրում ենք բոլորի համար», Ա 55:
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ—Սուտագին կոչ մեր բեմի օրհնյալ ժողովուրդին, Ա 53:
ՊՈՂԱՐՅԱՆ Գ.—Ճշմարիտ հայրենասիրությունը, Է 47:
ՎԱՀԵ-ՀԱՅԿ—«Էջմիածին» տմսագիրը, Դ 59:
Արգենտինեռնայ կյանք, Գ 79:
Բազմավոստակ ուսուցիչը, Է 45:
Դուրյան պատրիարքի ծննդյան հարյուրամյակի հանդիսությունը Դամասկոսի բեմում, Դ 59:
Ցեկույց Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության, Բ 58:
Կարդինալ Անտոնիո Կաժիանոն Բուենոս-Այրեսի հայոց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, Դ 57:
Հիշատակելի երեկո մը, Գ 78:
Ուսանողություններ Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարում, Դ 58:
Նորակառույց առաջնորդարանի բացումը, Դ 77:

Ժ. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ապրս Ապրյան, Ը 62:
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Մելխիսեդեկ Դ-ի մահը, Բ 31:
Հանգիստ գերաշնորհ Տ Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի, Դ 29:
Մարտիրոս Տեր-Ստեփանյան, Ը 69:

ԺԱ. ԴՐԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ, ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Ա. Հ.—Եղեկի ավագ քահանա Վարդանյան, «Դեպի Հայաստան», Ե 54:
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՒՊԱՐ.—Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, Ե 56, Է 55, Թ. 57: